

ISSN 1829-1155

Համապետական

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇտոնական  
ԳՈՎԱՐԱՆ

## ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Խօմագրական  
խորհուրդ

Գույքի Խարսխաթուղթ  
Դատի Սպահական  
Վարչուս Խափառելիության  
Հայերի Պարզաբն  
Ռուշակ-Խափառական

Խօմագրության համցել  
Երևան, Բայրուհի 10  
Հեռ.հեռ. 58-81-71

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**

Տ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

3(60)  
2011

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## I. ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

* ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱԽԳԱՏԻ ԲՆԱՏԵՏՈՒՏԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐՆ ՈՒ ԱՌԱՋԵՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ Ա ԳԱՐԿԵԼՅԱՆ ..... 4
* ՎԵՐԱԲԵՆՆԻՉ ԲՈՂՈՔԱԲՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ ԱՐԴԱՐ ԴԱՏԱԲԵՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ Վ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ..... 14

## II. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱԲԵՆՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (918-931)

* ՍԴՈ-918. «ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻ ՆԱՐԻՆԵ ՍԱՀԿՅՅՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 21, 22 ԵՎ 23-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ԻՆՔԱՄԱԲԱՑԱՐԿ ՀԱՅՏԱԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՈՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻԿ, ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 91-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 27
* ՍԴՈ-919. ՔԱՂԱՔԱՅԻ ԻԳՈՐ ՀԱԿՈԲԳԱՏԵՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆ ՀԻՄՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 53-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 39
* ՍԴՈ-920. ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐՏԱՇԵՍ ԱՆՏՈՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆ ՀԻՄՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 203-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 47
* ՍԴՈ-921. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՄԲԵԿ ԴԱՏԱԲԵՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՍՏԱԵՐՈՒՄ ՀԱՅՏԱԲՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի ՈՐՈՇՈՒՄ 8-ՐԴ ԿԵՏԻ 2-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐԵԵԼՈՒ ՄԱՍԻՆ ..... 58
* ՍԴՈ-922. ՔԱՂԱՔԱՅԻ ԿԱՐԱՊԵՏ ՀԱԶԻՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆ ՀԻՄՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 108-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 67
* ՍԴՈ-923. ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՅԾՏՈՎԱՆ ԴԻՄՈՒՄՆ ՀԻՄՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 221-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 7-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 74
* ՍԴՈ-924. ՔԱՂԱՔԱՅԻ ԹԱՐԴԵՎՈՍ ԴԵՐՄԵՆԵԶՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆ ՀԻՄՄԱՆ ՎՐԱ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 165-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 82
* ՍԴՈ-925. 2010 ԹՎԱԿԱՆԻ 04-ՈՒՍՈՍԻ 10-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԿՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ՝ ԵՐԵՎԱՆԻ ՍԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-ԱՌԱՋԻՆ ՓՈԽԻ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 89

* ՍԴՈ-926. ՀՀ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 284-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 93
* ՍԴՈ-927. ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 73-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՍԻ 6-ՐԴ ԿԵՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐԵՆԵԼՈՒ ՍԱՍԻՆ..... 104
* ՍԴՈ-928. 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԵՎ 20-ԻՆ ՆԱՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՍԻ ԿՆՔՎԱԾ՝ «ԱԺԴԱՄՆԱՏԱՆՈՒՄ ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԱՆՎԱՆՎՈՒԹՅԱՆ ԱԳԱԿՑՈՒՄՆ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՈՒՐԱԲԵԺՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀՅՈՒՍԽԱՏԼԱՆՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ (ՆԱՏՕ) ՀԵՏ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՍՊԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱԳՎԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐԱԽՄԲԻ ԹՎԱԿԱԶՄԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՍԻ ԿՆՔՎԱԾ ՀԱՍՊԱՅՆԱԳՐՈՒՄ ՄՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 111
* ՍԴՈ-929. ՀՀ ՎՃՈԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 22-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 114
* ՍԴՈ-930. ՔԱՂԱՔԱՅԻ ԱԼՔԵՐԸ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 263-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՍԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 123
* ՍԴՈ- 931. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՍԱՐՁԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 375.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 130
<b>III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ</b>
* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ..... 141
* ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԿՐՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄԱՆՆԴԻՐՆԵՐԻՆ ..... 141
* ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՀՀ ՍԴ-ՈՒՄ ..... 143
* ՍԵՐԲԻԱՅԻ ՍԴ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ..... 143
* ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ..... 147
* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՈՒԽՏԻՆԻԱՅՈՒՄ ..... 148
* ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ..... 148
* ԶԻՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՀՀ ՍԴ-ՈՒՄ ..... 150
* ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ ..... 151

## ԱՐԱՐԱՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԼՂՀ Նախագահի խորհրդական,  
ԼՂՀ Ազգային ժողովում ԼՂՀ Նախագահի  
մշտական ներկայացուցիչ

## ԱՆՀԱՌԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՆԳԱՏԻ ԻՆՍԻՏՈՒՏԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐՆ ՈՒ ԱՌԱՋՎԱԾԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ

Լեռնային Ղարաբաղի քաղաքական համակարգի փոլային ծևավորումը, պայմանավորված 1991 թ. ԼՂՀ-ի հոչակմամբ, հետագա 20-ամյա պետական շինարարությամբ, 2006թ. ԼՂՀ Սահմանադրության ընդունմամբ, ինչպես նաև նոր գործնական հասարակական հարաբերությունների անցումը ենթադրում է նաև պետության և պաշտոնատար անձանց հակասահմանադրական ուսնագործություններից մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության կայուն ժողովրդավարական մեխանիզմների ստեղծում և ամրապնդում:

ԼՂ ժամանակակից սահմանադրական իրավունքի արդիական հիմնախնդիրների շարքում կարևորագույն նշանակություն է ձեռք բերում սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի տեղի և դերի որոշումը պետական իրավական համակարգում, իշխանության թևերի միջև հարաբերությունների, ինչպես նաև անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտին բնորոշ գծերի ու առանձնահատկությունների ուսումնասիրումը:

Այդ կապակցությամբ անհատական սահմանադրական գանգատը՝ որպես մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման միջոց, որը կայացած ձևով գործում է ժողովրդավարական իրավական պետություններում, մեզ համար ներկայացնում է մեծ հետաքրքրություն: Անկասկած, մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման կարգերը այս կամ այն երկրում գործում են տարբեր ձևերով: «Թեև սահմանադրական անհատական գանգատի ինստիտուտը բացառիկ կարևորություն ունի մարդու իրավունքների և ազատություննե-

րի պաշտպանության տեսանկյունից, - նշում է պրոֆեսոր Գ. Հարությունյանը,- սակայն այդ բնագավառում վերջինիս դերը կարող է գործուն համարվել, իսկ գործունեությունը՝ արդյունավետ սույ այն դեպքում, երբ այն լիարժեք է ներդրված և գործում է այդ ինստիտուտի արդյունավետությանը նպաստող անհրաժեշտ ու բավարար գործառնական, կառուցակարգային ու դատավարական ընթացակարգի շրջանակներում»<sup>1</sup>:

Սահմանադրական հանրաքվեից հետո (10-ր դեկտեմբերի 2006թ) անհրաժեշտություն առաջացավ ԼՂՀ-ում գործող դատական համակարգի կառուցվածքը համապատասխանեցնել հիմնական օրենքին: Առաջնորդվելով ԼՂՀ Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 109-րդ հոդվածի դրույթներով՝ 2008 թվականի հուլիսի 1-ից ԼՂՀ-ում սկսել է գործել եռաստիճան դատական համակարգ, որը բաղկացած է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի, ԼՂՀ վերաքննիչ և ԼՂՀ գերազույն դատարաններից:

Դատարանների արդարադատության արդյունավետությունը բարձրացնելու և գործող իրավական ակտերը Սահմանադրությանը համապատասխանեցնելու նպատակով 2008 թվականի դեկտեմբերին ընդունվել և գործողության մեջ են դրվել քաղաքացիական, քրեական, վարչական դատավարության օրենսգրքերը և ԼՂՀ դատական օրենսգիրը: Որոշ ժամանակ անց՝ 2009 թվականի մայիսին, ընդունվեց նաև «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքը, որը կարգավորում է ԼՂՀ գերազույն դատարանի (այսուհետ՝ Գերազույն դատարան) կողմից սահմանադրական արդարադատություն իրականացնելու հետ կապված հարաբերությունները, սահմանում է սահմանադրական դատավարության հիմնական սկզբունքները, կարգն ու առանձնահատկությունները:

Սահմանադրական դատավարության մասին օրենսդրությունը հիմնված է Սահմանադրության 113-րդ և 114-րդ հոդվածներում ամրագրված դրույթների վրա և իր հետագա զարգացումն է ստացել «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքում (այսուհետ՝ Օրենք), ԼՂՀ դատական օրենսգրքում և գերազույն դատարանի 2009 թվականի հունիսի 28-ի ԳԴԱՈ-3 որոշմամբ հաստատված ԼՂՀ գերազույն դատարանի սահմանադրական արդարադատություն իրականացնելու կանոնակարգում (այսուհետ՝ Կանոնակարգ): Որպես սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմին՝ գերազույն դատարան դիմելու հետ կապված դրույթները նախատեսված են նաև ԼՂՀ օրենսդրության այլ

<sup>1</sup> «Սարդու սահմանադրական արդարադատության իրավունքի երաշխավորման արդի հրամայականները»: գ. Գ.Հարությունյան, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ Սահմանադրության 15-ամյակին նվիրված Երևանյան 15-րդ միջազգային խորհրդաժողովի նյութերի «Ազմանախ» քառալեզու ժողովածու: «Նժար» - 2010 թ. Երևան, էջ 85-94:

## ԳԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

իրավական ակտերով<sup>2</sup>: Սահմանադրության 113-րդ հոդվածն ամրագրել է, որ ԼՂՀ-ում բարձրագույն դատական մարմինը գերազույն դատարանն է, որը բաղկացած է սահմանադրական և վճռաբեկ պալատներից: Նրա գործունեության նպատակն է ապահովել Սահմանադրության գերակայությունը և օրենքի միատեսակ կիրառումը: Համաձայն 114-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Գերագույն դատարանը»: Այսինքն՝ գերագույն դատարանն իրականացնում է երկակի գործառույթ՝ սահմանադրական արդարադատությամբ ապահովում և Սահմանադրության գերակայությունը, իսկ վճռաբեկության կարգով՝ քաղաքացիական, քրեական և վարչական դատավարությամբ՝ օրենքի միատեսակ կիրառումը:

Ինչպես նշում է պրոֆեսոր Գ. Հարությունյանը, «Դատական սահմանադրական վերահսկողության առանցքային և, թերևս, ամենակարևոր հարցերից են վերահսկման օբյեկտների հստակեցման և սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների որոշման հարցերը: Կախված այն բանից, թե ինչ օբյեկտների նկատմամբ է իրականացվում վերահսկողությունը, պարզ է դառնում, թե ինչ խնդիրներ են դրված սահմանադրական դատարանի առջև: Շշտելով այն հարցի պատասխանը, թե ովքեր են իրավասու դիմելու սահմանադրական դատարան, կարելի է ամբողջական պատկերացում կազմել տվյալ դատարանի կենսունակության մասին»<sup>3</sup>:

Այսպես, ըստ Սահմանադրության 114-րդ հոդվածի 2-րդ կետի՝ Գերագույն դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտներն են՝ Հանրապետության Նախագահը, Ազգային ժողովը կամ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը, կառավարությունը, տեղական ինքնակառավարման մարմինները, յուրաքանչյուր ոք, դատարանները, գլխավոր դատախազը, մարդու իրավունքների պաշտպանը, ինչպես նաև հատուկ կարգավիճակ ունեցող անձինք՝ Հանրապետության Նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի լուծման հարցով<sup>4</sup> և Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները անհաջարելի կամ վերացած ճանաչելու վերաբերյալ հարցով<sup>5</sup>:

Վերը բարեկած հանրային իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով Գերագույն դատարան կարող են դիմել հետևյալ հարցերով:

<sup>2</sup> «Ազգային ժողովի կանոնակարգ», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրաքեի մասին», «Դատախազության մասին», «Փաստաբանների մասին» ԼՂՀ օրենքները, ԼՂՀ ընտրական, դատական, քաղաքական դատավարության, քրեական դատավարության, վարչական դատավարության օրենսգրքերը:

<sup>3</sup> ՀՀ Սահմանադրության մեկնարանություններ /ընդիհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. - Եր., «Իրավունք» 2010, էջ 917:

<sup>4</sup> ԼՂՀ Սահմանադրություն, հոդված 114-րդ, 1-ին մաս, 1.4-րդ կետ:

<sup>5</sup> Տես նոյն տեղը, հոդված 114-րդ, 1-ին մաս, 1.5-րդ կետ:

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների սահմանադրականության որոշման հարցերով (դիմող սուբյեկտներն են Հանրապետության նախագահը, Ազգային ժողովի պատգամավորների մեկ հիմնգերորդը, կառավարությունը, մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 2-րդ գլուխ դրույթներին համապատասխան)։
- մինչև միջազգային պայմանագրի վավերացումը՝ նրանում անրագրված դրույթների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով (դիմողը Հանրապետության նախագահն է)։
- հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերի լուծման հարցով (դիմոդ սուբյեկտներն են՝ Հանրապետության նախագահը, Ազգային ժողովը, Ազգային ժողովի պատգամավորների մեկ հիմնգերորդը)։
- Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին Գերագույն դատարանի եզրակացությունը ստանալու հարցով (դիմոդ՝ Ազգային ժողով)։
- Հանրապետության նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին Գերագույն դատարանի եզրակացությունը ստանալու հարցով (դիմոդ՝ կառավարություն)։
- Գերագույն դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու մասին Գերագույն դատարանի եզրակացությունը ստանալու հարցով (դիմոդ սուբյեկտներ՝ Հանրապետության նախագահը, Ազգային ժողովը)։
- Կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին հարցով (դիմոդ սուբյեկտներ՝ Հանրապետության նախագահը, Ազգային ժողովը, կառավարությունը)։
- տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրական իրավունքները խախտող՝ պետական մարմինների նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով (դիմոդ՝ տեղական ինքնակառավարման մարմինները)։
- իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտի դրույթների սահմանադրականության հարցով<sup>6</sup> (դիմոդներ՝ դատարանները<sup>7</sup>, գլխավոր դատախազը):

<sup>6</sup> Տես նոյն տեղը, հոդված 114-րդ, 1-ին մաս, 1.1-րդ -1.3-րդ, 1.6-րդ - 1.9-րդ, կետեր, 2-րդ, մաս, 2.5-րդ և 2.7-րդ կետեր։

<sup>7</sup> Գերագույն դատարանի սահմանադրական պալատ կարող է դիմել նաև Գերագույն դատարանի վճռաբեկ պալատը։

## ԳԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Վերոհիշյալ հարցերով Գերագույն դատարան դիմելու և դիմումներին ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանված են Օրենքով և Կանոնակարգով:

Սահմանադրական արդարադատության համակարգում կարևոր տեղ է զբաղեցնում անհատական դիմումի ինստիտուտը, որը հնարավորություն է տալիս մարդուն և քաղաքացուն ուղղակի դիմել սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնին:

Անհրաժեշտ է նշել, որ Գերագույն դատարանը սահմանադրական արդարադատությունն իրականացնում է 2009թ. հունիսի 1-ից (անհատական դիմումներով՝ 2009թ. հուլիսի 1-ից):

Անցած ժամանակահատվածում սահմանադրական դատավարության սուբյեկտներից Գերագույն դատարանում մուտքագրվել է 4 դիմում:

Ներկայացված դիմումների պատկերը հետևյալն է.

ա) ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպան՝ 1 դիմում.

բ) ԼՂՀ դատարաններ՝ 3 դիմում, որոնցից մեկը մերժվել է՝ առաջադրված հարցը դատարանին ենթակա չինելու պատճառաբանությամբ:

Երեք դիմումների քննության արդյունքում դատարանը երկուսի վերաբերյալ ընդունած որոշումներով որոշ օրենքների դրույթներ ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Ինչ վերաբերում է անհատական դիմումներով գործերի քննությանը, ապա այդ ինստիտուտը ընդհանրապես չի գործում: Այդ իսկ պատճառով այսօր Օրենքով սահմանված տեսական դրույթները կենսունակ չեն: Այնուամենայնիվ, փորձենք ներկայացնել այդ ինստիտուտի առանձնահատկությունները:

Անհատական դիմումի ինստիտուտն իր սահմանադրահրավական ամրագրումն է ստացել Սահմանադրության 114-րդ հոդվածի 2-րդ մասի 2.6-րդ կետում, որի համաձայն Գերագույն դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկվում է այդ դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ ակտի դրույթների սահմանադրականությունը»:

Ուսումնասիրելով «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքը և Գերագույն դատարանի կանոնակարգը՝ կարելի է ուշադրություն դարձնել հետևյալ պարտադիր արդարադատական առանձնահատկություններին.

- դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառում.
- կիրառված նորմատիվ ակտի դրույթների սահմանադրականություն.
- անհատական դիմումի ներկայացում.
- դիմումի նախնական ուսումնասիրում և քննության ընդունում կամ մերժում.

- դատական կազմի ձևավորում.
- անհատական դիմումի ինստիտուտի ներկա իրավիճակը և հեռանկարները ԼՂ-ում:

Ի՞նչ պետք է հասկանալ «դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառում», «կիրառված նորմատիվ ակտ» դրույթների ներքո:

«Դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառում» դրույթը ենթադրում է դատավարական օրենսդրության նորմերով նախատեսված ընթացակարգային բոլոր հնարավորությունների սպառումը, բայց որի՝ յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատական ակտի վերանայման իրավունք՝ վերադաս դատարանի կողմից (վերաբննիչ դատարան և Գերազույն դատարանի վճռաբեկ պալատ)<sup>8</sup>:

Ինչ վերաբերում է յուրաքանչյուրի նկատմամբ «կիրառված նորմատիվ ակտ» դրույթին, ապա Սահմանադրությամբ ամրագրվել է անհատական դիմումի մի համակարգ, որի գլխավոր առանձահատկությունն այն է, որ, ի տարբերություն մի շարք այլ երկրներում գործող այս իրավական ինստիտուտի, սահմանադրական վերահսկողության օրինակ է հանդիսանում ոչ միայն օրենքը, այլ նաև ցանկացած նորմատիվ ակտ:

Կարևոր է նշել, որ եթե հանրային մարմինները և պաշտոնատար անձինք կարող են դիմել Գերազույն դատարան՝ օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության, վարչապետի, տեղական ինքնականավարման մարմինների որոշումների սահմանադրականության հարցը որոշելու հիմքերով, ապա անհատական դիմումների քննարկման պարագայում բողոքարկման ենթակա ակտերի շրջանակներն ընդլայնվում են, քանի որ կիրառվում է «Նորմատիվ ակտ» հասկացությունը: Իսկ «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ է համարվում ցանկացած իրավական ակտ, եթե այն պարունակում է թեկուզ մեկ իրավական նորմ:

Մինչդեռ, «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը սահմանափակում է այդ իրավունքի իրականացումը: Այն է «...դիմում (այսուհետ՝ անհատական դիմում) կարող է ներկայացվել դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է Սահմանադրության 114-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-րդ կետով նախատեսված որևէ նորմատիվ ակտի դրույթ....»:

Այսինքն՝ Սահմանադրության 114-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-րդ կետում

<sup>8</sup> ՀՀ Սահմանադրական դատարանի դիմորդումը նշված դրույթների վերաբերյալ արտահայտված է «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնարանություններ»-ում (ընդիանոր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010թ. էջ՝ 983-985):

## ԳԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

թվարկված նորմատիվ ակտերի շրջանակը նեղ է, քան անհատական դիմում ներկայացնելու պարագայում «ցանկացած նորմատիվ ակտ» (114-րդ հոդվածի, 2.6-րդ կետ) դրույթը:

Պետք է նշել, որ Սահմանադրության 114-րդ հոդվածի 2-րդ մասի 2.6-րդ կետում ամրագրված է «դատարանի վերջնական ակտ» դրույթը, մինչդեռ «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործված է «գործը լուծող վերջնական դատական ակտ» դրույթը: Նման իրավիճակը տարբմբոնման հիմք է:

Մեր կարծիքով «դատարանի վերջնական ակտ» դրույթի ներքո կարելի է հասկանալ ցանկացած դատական ակտ, այդ թվում նաև գործն, ըստ էության, չլուծող միջանկյալ դատական ակտը, որով իրավանորմի կիրառման արդյունքում խախտվել են անձի սահմանադրական իրավունքները:

Այսինքն՝ Սահմանադրական պալատի գործառույթն է նման դիմումների՝ օրենքի պահանջներին համապատասխանելու դեպքում, քննության ընդունելը և որոշում կայացնելը:

Անհատական դիմում ներկայացնելու պահանջներն են՝

- գրավոր ձևը.
- Սահմանադրության այն հոդվածը, որը դիմելու իրավունք է տալիս.
- նորմատիվ ակտի այն դրույթը, որի սահմանադրականությունը վիճարկվում է.
- Սահմանադրության այն դրույթը, որին, դիմողի գնահատմամբ, հակասում է վիճարկվող նորմատիվ ակտի դրույթը.
- վիճարկվող նորմատիվ ակտի դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումները.
- դիմողի հանդեպ կիրառված դատական ակտի վիճարկման հնարավորությունների սպառման փաստի հիմնավորումը և սպառման օրը.
- պետական տուրքի վճարման անդրրազիրը.
- դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը:

Ինչ վերաբերում է դիմումի նախնական ուսումնասիրմանը և քննության ընդունելու կամ մերժելու առանձնահատկություններին, ապա կարող ենք նշել հետևյալը:

Անհատական դիմումի՝ ներկայացվող ձևական և իրավավերլուծական բնույթի հիմնավորումների պահանջներին համապատասխանելու դեպքում, դիմումը Գերազույն դատարանի աշխատակազմի դեկավարը ներկայացնում է Գերազույն դատարանի նախագահին, որը երկօրյա ժամկետում դիմումի նախնական ուսումնասիրումը հանձնարարում է Գերազույն դատարանի դատավորներից որևէ մեկին, որը չի մասնակցել կոնկրետ գործով վերջնական դատական ակտի կայացմանը (վճռաբեկ պալատում): Վերջինս դիմումը քննության ընդունելու վերաբերյալ իր եղակացությունը ներկայացնում է Գերազույն դատարանի նախագահին:

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Անհատական դիմումի նախնական ուսումնասիրումը պետք է ավարտվի դիմումի գրանցման պահից 20-օրյա ժամկետում:

Անհատական դիմումներով գործի քննության համար օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ սահմանադրական պալատի կազմում ընդգրկվում են Գերագույն դատարանի նախագահը և կոնկրետ գործով վերջնական դատական ակտի կայացմանը շնանակցած երկու դատավոր<sup>9</sup>:

Անհատական դիմումով գործը քննության ընդունելը կամ անհատական դիմումի քննությունը մերժելու վերաբերյալ սահմանադրական պալատը կարող է ընդունել հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) անհատական դիմումով գործը ամբողջությամբ քննության ընդունելու մասին.

2) անհատական դիմումի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին:

Երկրորդ կետով նախատեսված որոշումը սահմանադրական պալատն ընդունում է, եթե-

- դիմումում առաջադրված հարցերն ընդդատյա չեն դատարանին (պալատին).
- դիմումն իրավասու չէ դիմելու դատարան (պալատ).
- դիմումում առաջադրված հարցերի վերաբերյալ առկա է դատարանի (պալատի) որոշումը.
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա դատարանում (պալատում) իրականացվում է գործի դատարանություն.
- դիմումն ակնհայտ անհիմն է.
- դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները.
- չեն ապահովել դիմումին ներկայացվող ընդիհանուր պահանջները:

Անհատական դիմումներով սահմանադրական պալատում որոշումների ընդունման կարգն ունի որոշակի առանձնահատկություններ: Այսպես՝ անհատական դիմումներով գործերի քննության ընդունելու կամ քննությունը մերժելու հարցով որոշումները պետք է ընդունվեն միաձայն: Այսինքն՝ անհատական դիմումով գործը քննության ընդունելու կամ անհատական դիմումի քննությունը մերժելու հարցով միաձայնության բացակայության դեպքում քվեարկության արդյունքները ներկայացվելու օրվանից հետո՝ հնգօրյա ժամկետում, Գերագույն դատարանի նախագահը հրավիրում է աշխատակարգային նիստ՝ անհատական դիմումով գործը քննության ընդունելու կամ մերժելու հարցը Գերագույն դատարանի ամբողջ

<sup>9</sup> Գերագույն դատարանում պալատները կազմավորվում են յուրաքանչյուր գործով՝ Գերագույն դատարանի նախագահի կողմից: Ինչ վերաբերվում է Գերագույն դատարանի նախագահի՝ անհատական դիմումներով գործերի քննությանը պարտադիր մասնակցելու օրենքի դրույթին, կարծում ենք, այն վերանայման ենթակա է քանի որ Գերագույն դատարանի նախագահը վճռաբեկ պալատում շատ հաճախ մասնակցում է կոնկրետ գործով վերջնական դատական ակտի կայացմանը:

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

կազմով լուծելու համար: Այդ հարցով որոշումն ընդունվում է անհատական դիմումը մուտքագրվելու օրվանից ոչ ուշ, քան երեք ամիս հետո:

Առաջին հայացքից թվում է, թե անհատական դիմումի քննության ընդունելու կամ մերժելու սահմանված կարգը նպաստավոր է դիմողի համար: Սակայն, իրականում կարող է ստեղծվել անհատական դիմումների քննության ընդունման անհաղթահարելի պատճեց: Խոսքը վերաբերում է անհատական դիմումի քննության ընդունելու հարցը Գերագույն դատարանի լիակազմ նիստ տեղափոխելուն, որտեղ անհատական դիմումի քննության ընդունելու հարցի լուծմանը պետք է մասնակցեն նաև վճռաբեկ պալատում գործն ըստ էության քննած, կամ ըստ էության չլուծող դատական ակտ կայացրած դատավորները:

Բացի դրանից, անհատական դիմումով որևէ նորմատիվ ակտի Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտը ներակա է վերանայման:

Հաշվի առնելով ներկայացված հանգամանքները, կարծում ենք, որ գործը քննած դատավորների համար դատական նոր գործընթաց սկսելը ողջունելի չէ, ինչը կանդրադառնա նաև դիմումի քննության ընդունելու հարցին<sup>10</sup>:

Մենք համամիտ ենք Զդենեկ Կյունի այն մտքի հետ, որ ինչքան էլ Գերագույն դատարանը ներկայացված լինի փորձառու դատավորներով, ովքեր ամբողջ կյանքը նվիրել են դատավորի կարիերային, միևնույն է տվյալ դատարանի դատավորների իրավական գաղափարախոսությունը պահպանողական է<sup>11</sup>: Իսկ պահպանողականությունը միշտ էլ ընդդիմանում է փոփոխություններին:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը, կարող ենք նշել, որ ԼՂՀ սահմանադրական արդարադատության համակարգը դեռևս զարգացման երկար ճանապարհ պետք է անցնի:

Նախ՝ ԼՂՀ գերագույն դատարանը, հանդիսանալով քաղաքացիական, քրեական և վարչական գործերով բարձրագույն դատարան, միևնույն ժամանակ հանդես է գալիս որպես սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմին: Դատարանի նման կազմակերպարավական ձևը, մեր կարծիքով, չի նպաստում մասնագիտական դատավարության կայացմանը:

Երկրորդ՝ անհրաժեշտ է իրականացնել սահմանադրական արդարադատությանը վերաբերող օրենսդրության կատարելագործումը, որն ուղղ-

<sup>10</sup> Հեղինակը 2007 թ. հոկտեմբերից – 2010 թ. սեպտեմբեր աշխատել է ԼՂՀ գերագույն դատարանի նախագահ:

<sup>11</sup> Зденек Кюн. «Горизонтальный конституционализм: три конституционные стратегии стран Центральной Европы. Сравнительное конституционное обозрение», 2006г. N 2, - С. 45

ված կլինի «սահմանադրական պալատ» եզրույթին նոր ինստիտուցիոնալ ձևակերպում տալուն: Այսինքն՝ անցումային ժամանակաշրջանում և վերափոխվող հասարակարգի համար նպատակահարմար է, որ ԼՂՀ-ում գործի ընդհանուր իրավասության դատարաններից կազմակերպահրավական կառուցվածքի առումով առանձին, սահմանադրական արդարադատություն իրավանացնող մարմին (պալատ), որն իր հերթին կնպաստի տվյալ մարմնի ցանկացած ճնշումներից զերծ մնալուն և հեղինակության բարձրացմանը՝ որպես Սահմանադրության գերակայությունն ապահովող մարմնի: Այդ մարմինն ի սկզբանե լեզիտիմության որևէ կասկած չպիտի առաջացնի:

Երրորդ՝ մինչև անհատական դիմումի ինստիտուտի կայացումը (2-3 տարի), անհրաժեշտ է, որ պետությունը երաշխավորի անվճար իրավաբանական օգնություն սահմանադրական դատավարության օրենքով սահմանված կարգով և նախատեսված դեպքերում (նաև հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով) անհատական դիմում ներկայացնելը և դատական ներկայացուցությունն ապահովելը: Այս խնդրի լուծումը կնպաստի նաև փաստաբանության կայացմանը՝ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի:

Ինչպես նշում է պրոֆեսոր Գ. Հարությունյանը. «Երկրում իրավական պետության կայացման գերագույն խնդիրը սահմանադրականության հաստատումն է ու իրավունքի գերակայության երաշխավորումը: Այս խնդրի համակարգային ու հետևողական լուծումը պահանջում է հանրային հարաբերությունների սահմանադրականացման և սահմանադրական մշակույթի անհրաժեշտ և բավարար մակարդակ, որի ապահովման կարևոր երաշխիքներից է Սահմանադրություն-օրենք-իրավակիրառական պրակտիկա եռամիասնության մեջ ներքին հակասությունների ու տարաբնույթ ձևախնդումների հաղթահարումը»<sup>12</sup>:

<sup>12</sup> Գ. Հարությունյան. «ՀՀ Սահմանադրական դատարանի կազմավորման 15-ամյակի առիթով»: ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2011, թիվ 1, էջ 9:

## ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական դադարության ամբիոնի ղոցեննիկ,  
իրավ. գիր. քեկնածու

## ՎԵՐԱԲԵՐՆԻՉ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՈՒԹՅՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՅ

ՀՀ Սահմանադրությունն<sup>1</sup> արտացոլելով Մարդու իրավունքների եվլուական կոնվենցիայի<sup>2</sup> (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի դրույթները՝ սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք (18-րդ հոդված), իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմանը, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետներում իր գործի իրապարակային քննության իրավունք (19-րդ հոդված): Վերոնշյալ դրույթների միասնականությունը կազմում է դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների բովանդակությունը՝ միաժամանակ կանխորոշելով նաև քաղաքացիական գործերի քննության հիմնական սկզբունքների գոյությունը (օրինակ՝ դատարանի անկախության և միայն օրենքին ենթարկվելու, գործերի քննության իրապարակայնության, կողմերի իրավահավասարության և այլն), որոնք ել իրենց հերթին ապահովում են Հայաստանի Հանրապետությունում իրականացվող քաղաքացիական դատավարության ժողովրդավար բնույթը:

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով): Ընդունվել է 2005թ. 27-ի հանրաքենով:

<sup>2</sup> «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա, ընդունվել է 1950թ. նոյեմբերի 4-ին, Հռոմ: Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2005թ.-ին:

Դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է ոչ միայն խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգնան պահանջով դատարան դիմելու, այլև դատական ակտերը բողոքարկելու՝ պետականորեն երաշխավորված հնարավորությունը։ Եթե խախտված իրավունքի պաշտպանության պահանջով յուրաքանչյուր շահագործիո անձ իրավունք ունի դիմելու դատարան, ապա քաղաքացիական շրջանառության մասնակիցները առաջին ատյանի դատարան են դիմում հայցադիմում (դիմում) ներկայացնելու, իսկ վերադաս դատական ատյաններ՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու միջոցով։ Հետևաբար, դատական ակտերը բողոքարկելու իրավունքն ուղղակիորեն բխում է անձի դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունից, որն ապահովելու պարտականությունն ընկնում է պետության վրա։ Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանվում է, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները (այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքը) բարձրագույն արժեքներ են, և պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան։ Ուստի, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը պետք է դատական ակտերի բողոքարկման իրավունքի իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգեր պարունակի, որոնցից են դատական ակտերի վերաբննության և վճռաբեկության ձևերը։

ՀՀ սահմանադրական դատարանը ևս դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը բնութագրում է որպես մարդու և քաղաքացու անօտարելի իրավունք, նրա մյուս իրավունքներն ու ազատություններն ապահովող երաշխիք, նաև՝ որպես օրենքով սահմանված ժամկետներում և կարգով վճռաբեկ դատարան մուտք գործելու և լիարժեք պաշտպանություն ստանալու հնարավորություն (27.05.2008թ. ՍԴ-754 և 08.10.2008թ. ՍԴ-765 որոշումներ): Դատական պաշտպանության իրավունքին համապատասխանում է ՀՀ-ում սահմանված դատական համակարգի մեջ մտնող ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաբննիչ և վճռաբեկ դատարանների պարտականությունը՝ քաղաքացիական դատավարության կարգով իրականացնելու տվյալ սուրբեկտիվ իրավունքը<sup>3</sup>: 08.10.2008թ. ՍԴ-765 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաբննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. - Եր.: «Իրավունք», 2010, էջ 208-209:

## ԳԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը։ Այն հաճամանքը, թե 6-րդ հոդվածը որքանով է կիրառելի վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների առնչությամբ, կախված է այդ դատարաններում վարույթի առանձնահատկություններից, դիտարկելով իր ամբողջության մեջ՝ հաշվի առնելով վճռաբեկ դատարանի առանձնահատուկ կարգավիճակը (տես Սիալկովսկան ընդդեմ Լեհաստանի գործով (Sialkowska v. Poland) 2007թ. մարտի 22-ի վճիռը):

Դատական վերանայումը պետք է դիտարկել որպես վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքարկման իրավունքների իրականացումն ապահովելու կառուցակարգ, որը միաժամանակ հնարավորություն է ընձեռում երաշխավորել օրինական և հիմնավորված դատական ակտերի կայացումը, օրենքի միատեսակ կիրառությունը, քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը։ Ծիշտ է, դատական վերանայումը և վերաքննությունը՝ որպես դատական ակտերի վերանայման ինքնուրույն ձև, նաև պետական կառավարման գործառույթ է, որը վերապահված է դատական իշխանության մարմիններին, և վերադաս դատական ատյանների կողմից ստորադաս դատական ատյանների դատական ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու միջոցով ապահովվում է նաև պատմականորեն ձևավորված դատական հսկողությունը ստորադաս ատյանների գործունեության նկատմամբ, սակայն դատարանը պետական իշխանության մարմին է, իսկ նրա գործունեությունը՝ պետական կառավարման գործառույթ, և դատական վերանայումն ուղղակիրքն ածանցվում է դատական պաշտպանության, այդ թվում՝ բողոքարկման իրավունքի իրականացումից և հանդես է գալիս որպես այդ իրավունքների իրականացումն ապահովող միջոց։

ՀՀ Սահմանդրությունն ամրագրում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրավական կարգավորման սկզբունքները և, որպես բարձրագույն իրավաբանական ուժով օժտված ակտ, օրենսդրության իրավական հիմքն է։ Ուստի, Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգն ու պայմանները պետք է սահմանվեն օրենքով։ Այսպես՝ «Իրավական ակտերի մասին»<sup>4</sup> ՀՀ օրենքի<sup>4</sup> 9-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ բացառապես օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը։

<sup>4</sup> Ընդունվել է 03.04.2002թ., ՀՀՊՏ N 49(224), ՀՕ-320:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ նաև ՔԴՕ), որպես դատական պաշտպանության իրավունքի հետ կապված համասեռ հասարակական հարաբերությունները կարգավորող իիմնական նորմերը համակարգված և կանոնակարգված ձևով շարադրող օրենք, սահմանում է Հայաստանի Հանրապետությունում վերաքննիչ և վճռաբեկ բողոքարկման իրավունքների իրականացման կարգն ու պայմանները: Ընդ որում, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասն ուղղակիորեն ամրագրել է, որ օրենքները պետք է համապատասխան ՀՀ Սահմանադրությամբ, գործող օրենքներին և ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին:

- ՀՀ օրենքները չպետք է հակասեն ՀՀ Սահմանադրությամբ, գործող օրենքներին և ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին,
- ՀՀ Սահմանադրությամբ հոչակած իրավունքների իրականացման կարգն ու պայմանները որոշող օրենքներով չպետք է սահմանափակվեն սահմանադրական իրավունքները:

Մինչդեռ, ՀՀ-ում դատական ակտերի բողոքարկման իրավունքի իրականացման քաղաքացիադատավարական կարգավորումը, կարելի է ասել, որ շեղվել է այս սկզբունքից: Այսպես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրվել է դատարան դիմելու իրավունքն առ այն, որ շահագրգիռ անձն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար: Հետևում է, որ դատարան դիմելու, այդ թվում՝ վերաքննիչ բողոքարկման իրավունքը՝

- պետք է իրականացվի դատավարության օրենսգրքով սահմանված կարգով,
- վերադաս դատական ատյան դիմելը պետք է ուղղված լինի կոնկրետ իրավական ակտով ամրագրված իրավունքի պաշտպանությանը՝ հակառակ պարագայում դատական պաշտպանության իրավունքը կդառնա առարկայագրութեա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հանգանանալից կարգավորել է Հայաստանի Հանրապետությունում վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման կարգն ու պայմանները (հոդվածներ 205-210)՝ սահմանելով բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, բողոքարկման ենթակա դատական ակտերը և վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգը: Սակայն ՀՀ ՔԴՕ 208-րդ հոդվածը սահմանել է նաև վերաքննիչ բողոք բերելու սահմանափակումներ, նշելով՝

1. եթե կողմերն առաջին ատյանի դատարանում կնքել են վերաքննու-

## ԳԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

թյան իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնություն, ապա նման համաձայնություն կնքած կողմի ներկայացրած վերաբննիչ բողոքը վերաբննիչ դատարանի կողմից ենթակա է քննության միայն նման համաձայնություն կնքած մյուս կողմի համաձայնության դեպքում,

2. գույքային պահանջով քաղաքացիական գործով վերաբննությունը բույլատրելի է միայն, եթե տվյալ գործով վեճի առարկայի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի իիսնապատիկը,

3. վերաբննիչ բողոքը (կամ դրա մասը) ենթակա է քննության, եթե բողոք բերող անձը տվյալ հարցի վերաբերյալ բողոքում արտահայտած իր դիրքորոշումը հայտնել է առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ: Բացառություն է այն դեպքը, եթե բողոք բերող անձը գրկված է եղել այդ հարցի վերաբերյալ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից:

Դատական պաշտպանության, այդ թվում՝ դատական ակտերը բողոքարկելու և դատավարական այլ իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես: Թեև ՀՀ ՔԴՕ-ն դատավարական իրավունակության հասկացությունը և բովանդակությունը չի ձևակերպել՝ քաղաքացիական իրավունակության նման այն ծագում է նրա ծննդյան պահին և դադարում մահվամբ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու իրավունակությունը չի կարող սահմանափակվել այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում և կարգով (դատական կարգով): Ընդ որում, դասագրքային ճշմարտություն է նաև, որ ի տարբերություն քաղաքացիական իրավունակության՝ դատավարական իրավունակությունը սահմանափակվել չի կարող՝ հնարավոր չեն դատական կամ այլ կարգով գրկել որոշակի դատավարական իրավունքներից կամ դատավարական գործողություններ կատարելու հնարավորությունից<sup>5</sup>: ՀՀ ՔԴՕ 208-րդ հոդվածում խոսվում է փոխադարձ համաձայնությամբ վերաբննիչ բողոքարկման իրավունքից հրաժարվելու մասին, որը դատավարական իրավունակության սահմանափակման դրսւորում է, քանի որ անձը գրկվում է դատավարական կոկրետ իրավունքի իրականացման հնարավորությունից: Մինչեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ կետն ուղղակիորեն սահմանում է, որ քաղաքացու իրավունակությունից լրիվ կամ մասնակի հրաժարվելուն և նրա իրավունակության սահմանափակելուն ուղղված գործարքներն առոչինչ են: Իսկ ՀՀ ՔԴՕ 208-րդ հոդվածը վերաբերում է գործին մասնակցող անձանց փոխադարձ համաձայնությամբ հենց նման սահմանափակմանը, որը գրկում

<sup>5</sup>Տե՛ս Պետրոսյան Ռ. Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն (իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գ.Հ.

Ղարախսանյանի խմբագրությամբ): Երրորդ հրաժարակություն: Երևանի պետ. համալսարանի իրատ., 2007, էջ 201-205:

Է համաձայնության կողմին վերաքննության իրավունքից: Ընդ որում, նման համաձայնությունը գործին մասնակցող անձանց (քաղաքացիների և իրավաբանական անձանց) գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական, այդ բվում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13 և 14-րդ հոդվածներով սահմանված սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ձևերից և եղանակներից օգտվելու, դատական պաշտպանության բովանդակությունը կազմող դատավարական գործողություններ կատարելու միջոցով իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանք դադարեցնելուն: Հետևաբար՝ դատական պաշտպանության իրավունքից ամբողջությամբ կամ մասնակի իրաժարվելուն և դատավարական իրավունակությունը սահմանափակելուն ուղղված համաձայնություններն առոչինչ են:

Ոետք է նշել նաև, որ ասվածը չի վերաբերում արքիտրաժային համաձայնությանը, քանի որ արքիտրաժային համաձայնությամբ կողմերը փոխում են գործի ենթակայությունը՝ դատական ենթակայությունից այն վերապահելով արքիտրաժային ենթակայության: Բացի այդ, արքիտրաժային համաձայնության կնքումը կողմին ոչ միայն չի գրկում դատարան դիմելու իրավունքի իրականացումից, այլև չի բացառում նույնիսկ գործով քաղաքացիական դատավարության իրականացումը: Այսպես՝ ՀՀ ՔԴՕ 91 և 92-րդ հոդվածներն արքիտրաժային համաձայնության առկայությունը հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերի շարքում չեն նշել<sup>6</sup>, իսկ 103-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը հայցն առանց քննության է բողնում, եթե կողմերից մեկը հղում է կատարում տվյալ վեճն արքիտրաժային դատարանի քննությանը հանձնելու՝ կողմերի միջև առկա համաձայնությանը: Այսինքն, հայցն առանց քննության բողնելու համար արքիտրաժային համաձայնության առկայությունն ինքնին բավարար չէ, այլ պահանջվում է դրա վրա կատարել հղում:

ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով քաղաքացիական շրջանառության մասնակիցներին ընձեռված դատական պաշտպանության և դատական ակտերը բողոքարկելու իրավունքից կողմերի համաձայնությամբ իրաժարվել չի կարելի, քանի որ նման պարագայում կողմը գրկում է այդ իրավունքից օգտվելու հնարավորությունից: Իրավունքն անձին բույլատրելի վարքագիծ ընտրելու՝ օրենքով երաշխավորված հնարավորություն է, որն այս պարագայում դրսնորվում է դատական ակտը բողոքարկելու կամ չբողոքարկելու իրավազորության իրականացմամբ: Ուստի, անձը կարող է ուղղակիորեն չօգտվել բողոքարկման հնարավորությունից:

Մեր կարծիքով, ՀՀ ՔԴՕ 208-րդ հոդվածը պետք է սահմաներ, ոչ թե

<sup>6</sup>ՀՀ ՔԴՕ 91-րդ հոդվածի «վեճը ենթակա չէ դատարանում քննության» դրույթն արքիտրաժային համաձայնությանը չի վերաբերում, քանի որ հայց առանց քննության բողնելու հիմքերում արքիտրաժային համաձայնությունը քաղաքացիական դատավարությունը բացառող հանգամանք չի դիտարկվել:

## ԳԵՐԱՊԻԾՎԱՆ ՆՅՈՒԹԵՐ

փոխադարձ համաձայնությամբ վերաքննության իրավունքից հրաժարվելու, այլ վերաքննիչ բողոքարկումից չօգտվելու հնարավորություն՝ այն էլ բացառապես առաջին ատյանի դատարանում հաշտության համաձայնություն կնքած կողմերի վերաբերյալ<sup>7</sup>:

ՀՀ Սահմանդրությունն ամրագրել է դատական պաշտպանության անսահմանափակ իրավունք: Ընդ որում, Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածները դատական պաշտպանության իրավունքի մասով հղում չեն պարունակում կոնկրետ օրենքի վրա և դատավարության օրենսգրքով ընդամենը պետք է սահմանվեր այդ իրավունքի իրականացման կարգն ու պայմանները՝ առանց սահմանափակելու ՀՀ Սահմանդրության դրույթները: Մինչդեռ՝ ՀՀ ՔԴՕ 208-րդ հոդվածի 2-րդ մասը վերաքննության իրավունքի իրականացումը սահմանափակել է միայն նվազագույն աշխատավարձի հիմնապատիկը գերազանցող գույքային պահանջներով: Եթե Սահմանադրության վերոնշյալ հոդվածներն ուղղակի հղում պարունակելին օրենքի վրա, ինչպես դա արված է 92, 94, 94.1-րդ և մի շարք այլ հոդվածներում, ապա դատավարության օրենսգրքի նման մոտեցումը գոնե հասկանալի կլիներ: Սակայն Սահմանադրությամբ ամրագրված իրավունքի պաշտպանության կարգն ու պայմանները սահմանելիս, այդ իրավունքի անհարկի սահմանափակումն անբույլատրելի է: Ճիշտ է, օրենսդիրը փորձել է չծանրաբեռնել վերաքննիչ դատարանը մանր գույքային վեճերով, սակայն դա չպետք է արվի քաղաքացիական շրջանառության մասնակիցների սահմանադրական իրավունքների հաշվին: Չպետք է մոռանալ նաև, որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածն ամրագրում է, որ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Եթե իրավական ակտն ընդունվել է ի կատարումն կամ համաձայն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, ապա այդ ակտը պետք է մեկնաբանվի առաջին հերթին իիմք ընդունելով ավելի բարձր իրավական ուժ ունեցող ակտի դրույթներն ու սկզբունքները: Կարող ենք ասել, որ ՀՀ ՔԴՕ 208-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դրույթների սահմանադրականության և օրինականության հարցը լուրջ կասկածների տեղիք է տալիս:

Ինչ վերաբերում է բողոքում արտահատված դիրքորոշումը տվյալ հարցի վերաբերյալ բողոք բերող անձի կողմից առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ հայտնելու մասով վերաքննիչ բողոքարկման սահմանափակմանը, ապա նման դրույթի ամրագրումն ապա-

<sup>7</sup> Անտրամաբանական կլիներ, որպեսզի հաշտության համաձայնություն կնքած կողմերը բողոքարկեին իրենց իսկ հաշտության համաձայնությունը հաստատող վճիռը:

հովում է ոչ լրիվ վերաբննության պայմաններում վերադաս ատյանի կողմից առաջին ատյանի դատարանում գործի քննության սահմաններից դուրս չգալու արգելվը: Վերաբննիշ դատարանը դատական ակտը վերանյում է վերաբննիշ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում և չի կարող դուրս գալ առաջին ատյանի դատարանում գործի քննության սահմաններից: Եթե բողոքում ներկայացված դիրքորոշումն առաջին ատյանի դատարանի քննության առարկա չի հանդիսացել և դատարանը հնարավորություն չի ունեցել դատողություններ անել կամ եզրահանգումների գալ այդ հարցի կապակցությամբ, ապա վերաբննության օբյեկտը բացակայում է, քանի որ վերաբննիշ ատյանը ստուգում և զնահատական է տախս առաջին ատյանի դատարանի գործողություններին: Օրենսդիրն իրավացիորեն բացառություն է համարել այն դեպքը, եթե բողոք բերող անձը զրկված է եղել այդ հարցի վերաբերյալ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից, այսինքն՝ եթե խոչընդոտվել կամ սահմանափակվել է դատական պաշտպանության իրավունքի իրականացումը:

Եվրոպական դատարանը Կոնվենցիային տված իր մեկնաբանություններում դատական ակտի բողոքարկումը չի դիտել որպես արդար դատաքննության իրավունքի տարր և նշել է, որ բողոքարկման հարցերում պետություններն օժտված են որոշակի ինքնուրույնությամբ: Այսպես՝ Եվրոպական դատարանը նշել է, որ «դատարանի իրավունքը», որի մասնավոր դրսուրումն է մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել լրելյայն ենթադրվող սահմանափակումների, մասնավորապես բողոքի ընդունելության պայմանների հարցում, քանի որ դրա էությունից բխում է հայեցողության որոշակի ինքնուրույնությամբ օժտված՝ պետության կողմից կարգավորում: Քայլ և այնպես, արդարադատության մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես կամ այն աստիճան, որ դրա էությունը խաթարվի: Վերջապես, այդ սահմանափակումները կհամապատասխանեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին կետին՝ պայմանով, որ դրանք հետապնդեն օրինական նպատակ, և գոյություն ունենա ողջամիտ համամասնություն օգտագործվող միջոցների ու սահմանված նպատակի միջև<sup>8</sup>:

Արդար և հրապարակային դատաքննության և դրա բովանդակությունից բխող դատական ակտերը բողոքարկելու իրավունքն, ընդգրկվելով մարդու իրավունքների առաջին սերնդի անձնական և քաղաքական իրավունքների և ազատությունների խմբի մեջ, անօտարելի է և անբաժան<sup>9</sup>:

<sup>8</sup> Տե՛ս՝ Case of Brualla Gomez de la Torre v. Spain, judgment, 19 դեկտեմբերի 1997թ., կետ 33, Case of Edificaciones March Gallego S.A. v. Spain, judgment, 19 փետրվարի 1998թ., կետ 34:

<sup>9</sup> Տե՛ս Վ. Այլազյան, Մարդու իրավունքներ և ազատություններ: Ուս. ձեռնարկ.-Եր.: Տիգրան Սեծ, 2007, 21-35 էջերը:

## ԳԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Ինչպես նշում է Վ. Կարավայեվան. «Դատական պաշտպանության իրավունքը չի կարող վերացվել, սահմանափակվել: Այն պետք է բովանդակի անիրաժեշտ իրավական երաշխիքներ դատական պաշտպանությունն ամբողջ ծավալով բոլոր դատական ատյաններում իրացնելու և արդար դատաքննության միջոցով իրավունքների արդյունավետ վերականգնան համար»<sup>10</sup>:

Հարկ է նշել, որ իրավաբանական գրականության մեջ վերաքննիչ բողոքարկման իրավունքի հասկացությունը և իրավաբանական բնույթը մինչ օրս պատշաճ ուշադրության չեն արժանացել: Մասմակորապես, Ռ.Գ. Պետրոսյանը «Հայաստանի քաղաքացիական դատավարություն» դասագրքի «Վերաքննիչ բողոքարկման իրավունքը և դրա իրականացման կարգը» պարագրաֆում վերաքննիչ բողոքարկման իրավունքի հասկացության ձևակերպումը չի տալիս, այլ միանգամից անցնում է վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման նախադրյալները ներկայացնելուն<sup>11</sup>: Վերաքննիչ բողոքարկման հասկացության և իրավաբանական բնույթի վերաբերյալ դատողություններ չեն պարունակում նաև Մ.Վ. Տրեռունիկովի, Տ.Վ. Սահմանվայի, Դ.Ա. Ֆուրսովի և Ի.Վ. Խարլամովայի, Վ.Վ. Յարկովի հեղինակած դասագրքերի համապատասխան պարագրաֆները<sup>12</sup>: Սակայն, բազմաթիվ են այնպիսի աշխատությունները, որոնք ընդհանուր առմամբ անդրադարձ են կատարել դատական ակտերը բողոքարկելու իրավունքին՝ այն դիտարկելով դատական պաշտպանության իրավունքի իրականացման համատեքստում: Այսպես՝ Մ.Վ. Աֆանասևն առաջարկում է տարրերակել դատարան դիմելու և դատական պաշտպանության իրավունքները՝ դատարան դիմելու իրավունքը համարելով կոնկրետ քաղաքացիական գործով արդարադատություն իրականացնելուն ուղղված դատավարական ինստիտուտ, որը ծագում է օրենքով նախատեսված որոշակի նախադրյալների առկայության պարագայում, իսկ դատական պաշտպանության իրավունքը բնութագրել որպես անձի նյութական իրավունք<sup>13</sup>: Ա.Ա. Մելիքիկովը գտնում է, որ դատական պաշտպանության իրա-

<sup>10</sup> Տե՛ս Կարավաևա Ե.Բ. Вопросы апелляционного производства в гражданском процессе, дисс. к.ю.н., Саратов, 2005, էջ 88-121:

<sup>11</sup> Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն (իրավ. գիտ. ողկուոր, պրոֆ. Գ.Հ. Ղարախանյանի խմբագրությամբ): - Երրորդ հրատարակություն - Երևանի համալսարանի հրատ., 2007, էջ 588:

<sup>12</sup> Տե՛ս Гражданский процесс.: учебник/ Под ред. М.К. Треушникова. - М.: ООО «Городец-издат», 2003, էջ 483-488: Т.В. Сахнова. Курс гражданского процесса: теоретические начала и основные институты/ - М.: Волтерс Клювер, 2008. էջ 620-629: Д.А. Фурсов, И.В. Харламова. Теория правосудия в кратком трехтомном изложении по гражданским делам. Том второй: Гражданское судопроизводства как форма от правления правосудия. - М: Статут, 2009, էջ 481: Арбитражный процесс под ред. В.В. Яркова - М.: Волтерс Клювер, 2003, էջ 520-524:

<sup>13</sup> Տե՛ս Աֆանասյան Ս.Փ. Օ соотношении конституционного права на судебную защиту и юридического интереса в цивилистическом процессе // Арбитражный и гражданский процесс. 2004. № 12. էջ 4-5:

փունքն ունի ինչպես նյութական, այնպես էլ դատավարական բովանդակություն, որի նյութական կողմը դրսենորվում է ներկայացված պահանջների բավարարման, իսկ դատավարական կողմը՝ իրավունքների հարկադիր պաշտպանության և իրականացման մեջ<sup>14</sup>:

Դատական ակտերի բողոքարկումը, վերադաս դատարանի կողմից ստորադաս դատարանների կայացված դատական ակտերի նկատմամբ արդյունավետ հսկողությունը պետք է դիտարկել որպես արդար դատաքննության իրավունքի տարր: Դատական ակտի բողոքարկումը պետք է ապահովվի դատական քննության ցանկացած փուլում: Բողոքարկման ենթակա պետք է լինի դատական ցանկացած ակտ, որով միաժամանակ խախտվել է անձի՝ արդար դատաքննության իրավունքի որևէ տարր և դատական պաշտպանության իրավունքը՝ գործի սխալ լուծման, կամ դատական պաշտպանության իրավունքից զրկելու հետևանքով<sup>15</sup>:

Դատական պաշտպանության և դատական ակտերը բողոքարկելու իրավունքի բնույթի վերաբերյալ արտահայտված տեսակետները կարելի է դասակարգել երկու խմբի: Հեղինակների առաջին խումբը գտնում է (Ս.Ս. Մելինիկով, Վ.Վ. Բուտնեն, Ե.Ա. Աղգինովա, Օ.Վ. Իվանով և այլն), որ դատական պաշտպանության իրավունքի ինստիտուտի նյութականական բովանդակությունը ներկայացվող պահանջների բավարարման իրավունքն է, այսինքն՝ խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ իրավունքի կամ օրենքով պահպանվող օրինական շահի կամ ազատության վերականգնման իրավունքը, իսկ սուբյեկտիվ իրավունքը պաշտպանելու և հարկադրաբար իրականացնելու հնարավորությունը կազմում է դատական պաշտպանության իրավունքի գուտ դատավարական կողմը<sup>16</sup>: Հեղինակների այս խմբում առանձնանում է Ս.Յու. Կացը, որը նշում է, որ դատական պաշտպանության իրավունքն իր մեջ ներառում է ոչ միայն իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունք, այլև դատարանի պարտականությունը՝ համապատասխան հիմքերի առկայության պայմաններում բավարարելու անձի օրինական պահանջները<sup>17</sup>:

<sup>14</sup> Տե՛ս A.A. Մելինոկով. Правовое положение личности в советском гражданском процессе. - М., 1969, էջ 110-115.

<sup>15</sup> Տե՛ս Հ.Ս. Տիր-Վարդակյան. Արդար դատաքննության իրավունք սահմանադրաբարական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, ի.գ.ք. աստիճանի հայցման առենախոսություն, Երևան, 2009, էջ 12:

<sup>16</sup> Տե՛ս A.A. Մելինոկով, նոյն տեղում, Ազգինովա Ե. Ա., Обеспечение конституционного права на судебную защиту в экономической сфере: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. - М., 2006, Բուտնեվ Բ. Բ., Կ понятию механизма защиты субъективных прав, Субъективное право: Проблемы осуществления и защиты. Владивосток, 1989, էջ 9, Իվանов Օ. Բ., Օ связи материального и гражданского процессуального права, Правоведение, 1973, № 1, էջ 50:

<sup>17</sup> Տե՛ս Каց Ս. Յ., Конституционное право граждан на судебную защиту (Гражданско-процессуальный аспект), Проблемы социалистической законности на современном этапе коммунистического строительства. Краткие тезисы докладов и научных сообщений республиканской научной конференции 21-23 ноября, 1978, Харьков, Издательство Харк. юрид. ин-та, էջեր 135-137:

## ԳԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Հեղինակների երկրորդ խմբի (Վ.Ս. Ժոյկով, Մ.Ա. Վիկուտ, Գ.Ա. Ժիլին) կարծիքով՝ դատական պաշտպանության իրավունքը բացառապես դատավարական իրավունք է: Օրինակ՝ Վ.Ս. Ժոյկովը նշում է, որ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը ներառում է յուրաքանչյուր շահագրգիռ անձի իրավունքն առանց որևէ խոչընդոտի դատարան դիմել՝ իր իրավունքների, ազատությունների և օրենքով պահպանվող շահերի պաշտպանության համար, ինչպես նաև իր գործի՝ անկախ ու անաշառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում քննության և դատական ակտի կատարման իրավունքները<sup>18</sup>: Ընդ որում, քաղաքացիական դատավարությունում դատական պաշտպանության իրավունքը չի պայմանավորվում բոլոր դեպքերում բարենպաստ դատական ակտի կայացմամբ: Հիշատակման է արժանի նաև Լ. Ա. Տերեխովայի տեսակետն առ այն, որ խախտված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը ենթադրում է դրա քաղադրությունը կազմող տարրերի համալիրություն, այն է՝ դատարան դիմելու, վերջնական դատական ակտի կայացմամբ գործի քննության, դատական սխալի վերացման և դատական ակտի կատարման իրավունքը<sup>19</sup>:

Մեր կարծիքով, պետք չէ առանձնացնել դատական պաշտպանության և դատարան դիմելու, այդ թվում՝ վերադաս դատական ատյան դատական ակտը բողոքարկելու իրավունքները: Վերադաս դատարան դիմելը կամ դատական ակտը բողոքարկելը դատական պաշտպանության իրավունքի իրականացման ձևեր են՝ արդար դատաքննության իրավունքի ապահովման միջոցներ, որոնք ուղղված են քաղաքացիական շրջանառության մասնակիցների օրինական և հիմնավորված պահանջների բավարարմանը, իրավունքների հարկադիր պաշտպանությանը: Ընդ որում, ՀՀ օրենսդրությունը չի արգելում անհիմն հայցերով կամ բողոքներով դատարան դիմելու հնարավորությունը:

Վերաքննիչ բողոքարկման իրավունքը դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունից բխող՝ առաջին ատյանի դատարանում ոչ իրավաչափ «արդարադատության» իրականացման դեմ ուղղված բողոքներկայացնելու՝ օրենքով երաշխավորված հնարավորություն է: Եթե փորձնենք ձևակերպել վերաքննիչ բողոքարկման իրավունքի հասկացությունը, կարող ենք ասել, որ այն քաղաքացիական շրջանառության մասնակիցների՝ առաջին ալյանի դադարանի ակտերի օրինականությունն ու հիմնա-

<sup>18</sup>Տե՛ս Ժյուկով Վ. Մ., Теоретические и практические проблемы конституционного права на судебную защиту: Диссертация на соискание ученой степени доктора юридических наук в форме научного доклада, выполняющего также функции автореферата. Московская государственная юридическая академия, - М, 1997, Библиогр, էջեր 49-51:

<sup>19</sup>Տե՛ս Տերեխովա Լ. Ա., Право на исправление судебной ошибки как компонент судебной защиты, автореферат диссертации на соискание ученой степени доктора юридических наук, Екатеринбург, 2008, էջ 1:

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

վորվածությունը պարզելու պահանջով վերաքննիչ դատարան դիմելու օրենքով երաշխավորված հնարավորությունն է:

Վերաքննիչ բողոքարկման իրավունքն ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրությունից, քանի որ Սահմանադրությամբ ամրագրվել է ոչ միայն դատական պաշտպանության, այլև ՀՀ դատարանակազմության հիմունքները, նշելով որ Հայաստանում գործում են ընդիանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև մասնագիտացված դատարաններ (հոդվ. 92): Հետևում է, որ վերաքննիչ դատարանն ունի սահմանադրական կարգավիճակ, որը ենթադրում է նաև քաղաքացիական շրջանառության մասնակիցների՝ վերաքննիչ ատյան դիմելու հնարավորությունը: Իսկ օրինակ վարչական վերաքննիչ դատարանի և մասնագիտացված այլ դատարանների ստեղծումը և վերոնշյալ դատարաններ դիմելու հնարավորության հարցի կարգավորումը ՀՀ Սահմանադրությունը վերապահել է օրենքներին:

Եթե դատական պաշտպանության իրավունքի իրականացմանը ծառայում է ՀՀ ողջ դատական համակարգի գործունեությունը, ապա վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացումն ապահովում է ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանը: Ընդ որում, վերաքննիչ բողոքարկման արդյունքում ստուգելով առաջին ատյանի դատարանի վերջնական և միջանկյալ դատական ակտերի օրինականությունը և հիմնավորվածությունը՝ վերաքննիչ ատյանը իրականացնում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը, այսինքն՝ իր առջև դրված սահմանադրական խնդիրները:

Վերաքննիչ բողոքարկումը ոչ միայն խախտված և վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգնման միջոց է, այլև ստորադաս դատական ատյանի գործունեությունն ստուգելու, գործի քննության ընթացքում թույլ տրված իրավախսահութումների, դատական սխալների բացահայտման կառուցակարգ, որը միաժամանակ ապահովում է արդարադատության իրականացման ոլորտում օրինականությունը: Ուստի վերաքննիչ բողոքարկման իրավունքի նշանակությունը կայանում է հետևյալում՝

- այս ձևով անձն իրականացնում է իր իրավունքների դատական պաշտպանությունը,
- վերաքննիչ բողոքարկումը հնարավորություն է ընձեռում անձին վերականգնել իր խախտված կամ վիճարկվող իրավունքները,
- այն միաժամանակ ուղղված է դատական սխալների բացահայտմանը,
- հանդիսանալով առաջին ատյանի դատարանի ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու հիմք, ապահովում է

## ԳԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- Վերաքննիչ ատյանի կողմից ստորադաս ատյանի գործունեությունն ստուգելու և օրինականությունն ապահովելու կառուցակարգ,
- ♦ բարձարցնում է գործը քննող առաջին ատյանի դատարանի պատասխանատվությունը,
  - ♦ ապահովում է օրինական և հիմնավորված դատական ակտերի կայացումը, միաժամանակ ամրապնդելով օրինականությունը քաղաքացիական շրջանառության ոլորտում:

Դեռևս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1995թ. փետրվարի 7-ի «Քաղաքացիական և տնտեսական գործերով բողոքարկման համակարգերի և ընթացակարգերի գործադրման և գործունեության կատարելագործման մասին» R(95)5 հանձնարարականի 1-ին կետի ա) ենթակետով սահմանվել է, որ սկզբունքորեն պետք է գոյություն ունենա վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) կողմից կայացված ցանկացած որոշման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորություն։ Հնդ որում, պետությունները կարող են հետաձգել որոշակի միջանկյալ հարցերի բողոքարկման իրավունքի իրականացումը՝ մինչև հիմնական գործով գլխավոր բողոքի ներկայացումը (կետ դ):

Վերոգրյալը մեզ բոյլ է տալիս եզրակացնելու, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ 208-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված վերաքննության իրավունքի սահմանափակումներն անպայմանորեն պետք է վերացվեն։

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻ  
ՆԱՐԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 21, 22 ԵՎ 23-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ  
ՀԱՅՏԱԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻԶԱՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ  
ՄԱՍՈՎ, ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 91-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ՝**

**Քաղ. Երեւան**

**28 սեպտեմբերի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյա-  
նի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի  
(զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

թիվ 6-172 դիմումը ներկայացրած դիմող՝ քաղաքացի Ն. Սահակյանի  
եւ թիվ 7-31 դիմումով դիմողի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի եւ Ա. Ղա-  
զարյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհր-  
դական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-  
րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմա-  
նադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դրմբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հանրապետություն»  
կուսակցության եւ քաղաքացի Նարինե Սահակյանի դիմումների հիման  
վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

օրենսգրքի 21, 22 և 23-րդ հոդվածների՝ ինքնարացարկ հայտնելու մասին միջնորդություն ներկայացնելու մասով, և ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Հանրապետություն» կուսակցության և քաղաքացի Ն. Սահակյանի համապատասխանարար՝ 2010 թվականի ապրիլի 1-ի և մայիսի 18-ի՝ ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի հիմքով սահմանադրական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 18-ի ՍԴԱՆ-94 որոշմամբ վերոհիշյալ դիմումներով գործերը միավորվել են՝ դատարանի նոյն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ դատական օրենսգրքերը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 21-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի ապրիլի 7-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի մայիսի 18-ին:

Սույն գործով քննության առարկա իրավահարաբերությունները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում նախկինում կարգավորվել են 4-րդ գլխում ամփոփված 21-րդ, 22-րդ, ինչպես նաև 25-րդ և 26-րդ հոդվածներում ամրագրված նորմերով (1998թ. հունիսի 17-ի խմբագրությամբ), մասնավորապես՝ նախատեսելով ոչ միայն դատավորի **ինքնարացարկի**, այլև՝ նրան բացարկ հայտնելու և դրանց լուծման կարգի հետ կապված հարաբերությունները։ Այդ նորմերը «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (28.11.2007թ. ՀՕ-277-Ն) 9-րդ հոդվածի համաձայն շարադրվել են այլ խմբագրությամբ, ինչպես նաև օրենսգրքի նախկին 25-րդ և 26-րդ հոդվածները ճանաչվել են ուժը կորցրած։ Արդյունքում՝ գործող իրավակարգավորումը վերաբերում է **ինքնարացարկի** հետ կապված հարաբերություններին։

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Դատավորի

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ինքնարացարկը» վերտառությունը կրող 21-րդ հոդվածը (2007թ. նոյեմբերի 28-ի խմբագրությամբ) սահմանում է:

«1. Դատավորի ինքնարացարկի հիմքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 91 հոդվածով:

2. Դատավորն ինքնարացարկ է հայտնում իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ: Գործին մասնակցող անձը նման միջնորդություն կարող է ներկայացնել, իսկ դատավորը ինքնարացարկ կարող է հայտնել միայն մինչեւ դատաքննությունն սկսվելը, քաղաքությամբ այն դեպքերի, երբ անձը կապացուցի, իսկ դատավորը կիմնավորի, որ ինքնարացարկի հիմքն իրեն հայտնի է դարձել դատաքննությունն սկսվելուց հետո եւ մինչ այդ չէր կարող հայտնի լինել: Ամեն դեպքում միջնորդությունը կարող է ներկայացվել, կամ ինքնարացարկը կարող է հայտնվել միայն մինչեւ դատաքննության ավարտը»:

Նույն օրենսգրքի 22-րդ հոդվածը (2007թ. նոյեմբերի 28-ի խմբագրությամբ) սահմանում է ինքնարացարկի միջնորդություն ներկայացնելու հետևյալ կարգը.

«1. Սույն օրենսգրքի 21 հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատավորը պարտավոր է ինքնարացարկ հայտնել: Ինքնարացարկը պետք է լինի պատճառաբանված:

2. Դատավորի ինքնարացարկի մասին միջնորդությունը ներկայացվում է գրավոր, որում շարադրվում են դրա հիմքերը:

3. Նույն հիմքով դատավորի ինքնարացարկի մասին միջնորդություն կրկին ներկայացնել չի թույլատրվում»:

Օրենսգրքի 23-րդ հոդվածը (2007թ. նոյեմբերի 28-ի խմբագրությամբ) կրում է «Ինքնարացարկի միջնորդության լուծման կարգը» վերտառությունը եւ սահմանում է.

«1. Ինքնարացարկի միջնորդություն հայտնելու դեպքում գործի քննությունը ընդհատվում է մինչեւ այդ հարցի լուծումը: Նիստը կարող է ընդհատվել ոչ ավելի, քան երեք օրով:

2. Նույն հիմքով հայտնված ինքնարացարկի միջնորդությունը չի քննարկվում:

3. Հայտնված ինքնարացարկի միջնորդության քննության արդյունքներով դատավորը կամ ինքնարացարկ է հայտնում, կամ կայացնում է որոշում միջնորդությունը մերժելու մասին»:

ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 4-րդ մասը սահմանում է.

«4. Ինքնարացարկի մասին որոշումը կարող է բողոքարկվել»:

2. Քննության առարկա միավորված գործով դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Դիմող «Հանրապետություն» կուսակցությունը 11.09.2008թ. «Խաղաղ հավաքների իրավունքի եւ արտահայտվելու ազատության իրավունքների խախտման փաստը ճանաչելու եւ Երեւանի քաղաքապետարանի լիազոր ներկայացուցի 08.09.2008թ. թիվ 128, 129, 130, 132 որոշումները վերացնելու պահանջի մասին» հայցով դիմել է ՀՀ վարչական դատարան: Այդ գործով դատարնենությունն սկսվել է 01.10.2009թ.: «Դատաքննության սկզբում դիմողը գործը քննող դատավորին՝ նրա անկողմնակալության մեջ ողջամիտ կասկածի հիմքով ներկայացրել է ինքնարացարկ հայտնելու միջնորդություն, որը մերժվել է 02.10.2009թ. կայացված որոշմամբ: Գործով դատաքննությունն ավարտվել է 23.10.2009թ. եւ վճռի հրապարակման օր է հայտարարվել 03.11.2009թ.: Նշված օրը վարչական դատարանը կայացրել է գործի քննությունը վերսկսելու մասին որոշում, որից անմիջապես հետո դատավորը հայտնել է ինքնարացարկ՝ հրապարակելով իր՝ 03.11.2009թ. «Ինքնարացարկ հայտնելու մասին» որոշումը:

Զաղաքացի Ն. Սահակյանի դիմումի եւ դրան կից փաստաթղթերի համաձայն՝ 2009 թվականի հուլիսի 10-ին ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դուրսաց դատական նիստում քննվել է Նարինե Սահակյանի հայցն ընդդեմ Գեղրգի Պապոյանի եւ Անահիտ Շահվերդյանի՝ գույքի, հազուստի եւ անձնական իրերի պահանջի մասին: «Դատական նիստի ընթացքում հայցվոր կողմը ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի հիմքերով եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ գլխում սահմանված կարգի համաձայն նախազահող դատավորին ներկայացրել է ինքնարացարկի միջնորդություն, ինչը մերժվել է 18.07.2009թ. կայացված որոշմամբ: 21.07.2009թ. այդ որոշումը դիմողը բողոքարկել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան: Վերջինս վերաքննիչ բողոքը վերադարձրել է: ՀՀ վճռաբեկ դատարանը նույնապես վերադարձրել է վճռաբեկ բողոքը՝ 07.10.2009թ. կայացնելով համապատասխան որոշում:

3. Դիմոդ «Հանրապետություն» կուսակցությունը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21, 22 եւ 23-րդ հոդվածների դրույթները՝ ինքնարացարկ հայտնելու մասին միջնորդություն ներկայացնելու մասով, հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանդրության 18 եւ 19-րդ հոդվածներին: Մասնավորապես կարծիք է հայտնվում, որ անկողմնակալության եւ անաշառության հարցի քննությունը դատավորի հայեցողությանը բողնելը կասկածի տակ է դնում այդ ինստիտուտի, որպես իրավական պաշտպանության միջոցի, արդյունավետությունը: «Դատավորը չի կարող անկողմնակալ կերպով լուծել իր անկողմնակալության հարցը, եթե նա իրոք շահագրգուված է գործի ելքով կամ կամ նրա օրենսդիրության, արդարության եւ օրենքի հիման

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վրա գործը լուծելու վերաբերյալ կասկած հարուցող այլ հանգամանքներ: Միաժամանակ, սեփական անկողմնակալության հարցը քննելիս անկողմնակալ չիմելուն նպաստում է այն հանգամանքը, որ միջնորդության կապակցությամբ կայացված որոշումն առանձին բողոքարկման ենթակա չէ, այլ կարող է ներառվել միայն վերաքննիչ եւ վճռաբեկ բողոքներում: Եթե առաջին ատյանի դատարանում գործը քննելիս դատավորի անկողմնակալությունը կարող է ապահովվել հետագա դատական ատյանների կայացրած որոշումներով, ապա գործին մասնակցող անձանց՝ դատավորին ինքնարացարկ հայտնելու միջնորդություն ներկայացնելու լիազորությամբ օժտելը կորցնում է իր իմաստը:

Հղում կատարելով դատարանի «անկողմնակալ ու անաշառ» լինելու վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական մուտքումներին՝ դիմողը նշում է, որ որոշակի դեպքերում, երբ ոչ օրյեկտիվ, կողմնակալ դատավորի կայացրած դատական ակտը ենթակա է անհապաղ կատարման, կամ վարչական արդարադատությունում, երբ առկա է երկաստիճան դատական համակարգ, կամ՝ վճռաբեկ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի կայացրած դատական ակտերի դեմ բերված բողոքները վարույթ ընդունելու հարցի լուծումը հայեցողության սկզբունքով, ապա դրանք կասկածի տակ են դնում դատավորի անկախության եւ անկողմնակալության կարեւրագույն երաշխիքներից մեկի արդյունավետությունը: Խնդրու առարկա դրույթներն ինքնարացարկի «օրյեկտիվ» հիմքով միջնորդության մասին հարցը քննելիս սկզբունքորեն այլ լուծում չեն ենթադրում, քան միջնորդության մերժումը: Տվյալ դրույթները չեն երաշխավորում մարդու արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրերից մեկի՝ դատավորի անկախության եւ անկողմնակալության սկզբունքի պահպանումը: Նմանատիպ կարգավորումը խախտում է դիմողի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքը:

Դիմող՝ քաղաքացի Ն. Սահակյանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին այն պատճառաբանությամբ, որ ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ինքնարացարկի որոշումը ենթակա է բողոքարկման: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունից բխում է, որ կարող են բողոքարկվել ինչպես ինքնարացարկի մերժման, այնպես էլ բավարարման մասին որոշումները: Սակայն, ըստ դիմողի, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը եւ ՀՀ վճռաբեկ դատարանն իրենց որոշումներով վիճարկող նորմին տվել են այլ մեկնարանություն՝ նշելով, որ այն կիրառելի է միայն ինքնարացարկի միջնորդությունը բավարարելու որոշման դեպքում: Այսպիսի մոտեցումը նեղացնում է նորմի կիրառման դաշտը՝ միաժամանակ փոխելով դրա իմաստը: Արդյունքում՝ ստեղծվում է այնպիսի իրա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վակիրառական պրակտիկա, որը հակասում է Սահմանադրությամբ սահմանված դատական պաշտպանության իրավունքին: Վիճարկվող դրույթը, այսպիսով, առաջ է բերում իրավական անհստակություն, ինչն էլ, ըստ դիմոնի, հնարավորություն է տալիս վերադաս դատարանների կողմից նորմին տալ կամայական մեկնաբանություն՝ ստեղծելով հակասահմանադրական իրավակիրառական պրակտիկա, սահմանափակելով ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով սահմանված իրավունքները: Վերջիններիս իրացման համար, ըստ դիմոնի, նախատեսված է նաև ինքնաբացարկի իմստիտուտը, որի իրականացման երաշխիքներից է ինքնաբացարկի միջնորդության վերաբերյալ որոշումը դատական վերադասության կարգով բողոքարկելու այնպիսի հնարավորության սահմանումը, որը կերաշխավորի այդ միջնորդության քննության արդյունքում առաջին ատյանի դատարանում կայացված՝ այն մերժելու մասին որոշման օրինականության եւ հիմնավորվածության ստուգումը:

4. Դատասխանող կողմը գտնում է, որ որպես դատավորի անկողմնակալությունն ապահովող մեխանիզմներ օրենսդրությամբ նախատեսվել են գործով քննությանը դատավորի մասնակցությունը բացառող ընթացակարգեր, որոնց նպատակը գործի ելքով շահագրգուված դատավորի՝ գործի քննությանը մասնակցության բացառումն է՝ դրանով իսկ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի եւ Սահմանադրության 19-րդ հոդվածի հիմքում ընկած «անաշառ դատարանի» կողմից իր գործի քննության՝ յուրաքանչյուրի իրավունքի ապահովումը:

Ըստ պատասխանողի՝ դատավորի անաշառությունն ու անկողմնակալությունը սուբյեկտիվ կատեգորիաներ են եւ յուրաքանչյուրի դեպքում դատավորն ինքն է ունակ ու պարտավոր գնահատելու՝ արդյո՞ք տվյալ գործով նա կարող է հանդես գալ որպես արդարադատություն իրականացնող սուբյեկտ:

Պատասխանողը գտնում է նաև, որ դատարանի նախագահը կամ մեկ այլ դատավոր չեն կարող միանշանակորեն անկողմնակալ կերպով լուծել բացարկի միջնորդությունը, ինչն առկա էր նախկին իրավակարգավորման դեպքում, նշելով, որ դատարանների նախագահները չպետք է միջամտեն այլ դատավորների կողմից որոշումների կայացման գործընթացին՝ վկայում է նաև միջազգային պրակտիկան: Հետեւաբար, պատասխանողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21, 22 եւ 23-րդ հոդվածները չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը:

Պատասխանողը վիճարկելով դիմոնի փաստարկները միջազգային իրավական լուծումների առնչությամբ՝ գտնում է, որ դիմոնի կողմից վիճարկվող իրավակարգավորումը խորթ չէ նաև Եվրոպայի խորհրդի անդամ մի շարք երկրների քաղաքացիական դատավարության օրենսգրե-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թին եւ ՀՀ Սահմանադրության համատեքստում սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության վերաբերյալ պատասխանող կողմը գտնում է, որ այն համապատասխանում է ՄԻԵԴ-ի կողմից իր նախադեպային իրավունքով սահմանված իրավական որոշակիության սկզբունքի չափանիշներին: Իրավական որոշակիության սկզբունքի շահարկումն այս պարագայում տեղին չէ, քանի որ վիճարկվող իրավանորմը հստակ սահմանում է օրենսդրի կամքը, պարզ, հասկանալի եւ միանշանակ է իրավակիրառողի եւ տվյալ նորմի հետագա ենթադրյալ հասցեատերերի համար: ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքին եւ դիմողի համար ինքնարացարկ հայտնելու միջնորդություն ներկայացնելիս եւ դրանից հետո հստակ է եղել միջնորդությունը մերժելու որոշման բողոքարկման օրենսդրական արգելքը: Վիճարկվող նորմի եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերի, ինչպես նաև ձեռավորված իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը, ըստ պատասխանողի, ցույց է տալիս, որ ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ ինքնարացարկի միջնորդությունը բողոքարկելու հնարավորություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատել.

- ինքնարացարկի, որպես սահմանադրական սկզբունքներին համապատասխան արդարադատության անկախությունը եւ անկողմնակալությունը, ինչպես նաև իրավունքի գերակայությունն ապահովող ինստիտուտի, օրենսդրական երաշխավորման տեսանկյունից,
- արդար եւ արդյունավետ դատաքննության իրավունքի, ինչպես նաև գործին մասնակցող անձանց դատավարական այլ իրավունքների երաշխավորված գործադրումը եւ պաշտպանությունն ապահովելու տեսանկյունից,
- ինքնարացարկի ինստիտուտի՝ միջազգային իրավակիրառական պրակտիկայում հաստատված սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից:

Ինքնարացարկը ՀՀ իրավահամակարգում հանդիսանում է այնպիսի ինստիտուտ, որը կոչված է արդարադատության բնագավառում երաշխավորելու օբյեկտիվ եւ անաշառ որոշումների կայացումը՝ ինչպես ընթաց-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կարգային (դատավարական), այնպես էլ նյութական իրավահարաբերություններ կարգավորելիս, եւ կոչված է երաշխավորելու դատական իշխանության անկախությունը, արդարադատության արդյունավետությունը, անկողմնակալությունը:

Քաղաքացիադատավարական հարաբերությունների կարգավորման բնագավառում ինքնարացարկի ինստիտուտը նախատեսված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 21, 22 և 23-րդ, ինչպես նաև 24-րդ հոդվածներում: Այդ հարաբերությունները նյութահրավակական առումով կարգավորվում են նաև ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածով, որով սահմանված են դատավորի կողմից՝ որպես նորմատիվ պարտավորություն, ինքնարացարկ հայտնելու հիմքերը եւ կարգը: Այդ հոդվածների նորմերի համակարգված վերլուծությունը վկայում է, որ:

- դատավորի ինքնարացարկի հիմք կարող են լինել այնպիսի փաստերը եւ հանգամանքները, որոնք ողջամիտ կասկած կարող են հարուցել տվյալ գործով դատավորի անկողմնակալության հարցում (ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերություն),
- նման հիմքերի առկայության դեպքում դատավորը պարտավոր է ինքնարացարկ հայտնել,
- ի թիվս այլոց, դատավորի ինքնարացարկ հայտնելու կոնկրետ հիմքերը հստակեցված են ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում,
- ինքնարացարկ հայտնելիս դատավորը պարտավոր է կողմերին բացահայտել ինքնարացարկի հիմքերը, կարող է կողմերին առաջարկել իր բացակայությամբ քննել ինքնարացարկի անտեսման հարցը (ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 3-րդ մաս),
- դատավորի ինքնարացարկը պետք է լինի պատճառաբանված,
- ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի հիմքերով դատավորի ինքնարացարկի մասին որոշումը կարող է բողոքարկվել (ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մաս):

Սույն գործով վիճարկվող նորմերի եւ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերի, ինչպես նաև ինքնարացարկի ինստիտուտի իրավակարգավորմանն առնչվող այլ իրավական ակտերի համապատասխան դրույթների համակարգային վերլուծությունը վկայում է, որ, մասնավորապես, քաղաքացիադատավարական հարաբերություններում դատավորի ինքնարացարկի ինստիտուտի իրավակարգավորման շրջանակներում օրենսդրություն ամրագրվել են հետեւյալ մոտեցումները.

- ինքնարացարկի վերաբերյալ որոշումը դիտարկվում է որպես գործնաստ էության չլուծող, միջանկյալ դատական ակտ,

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- դատավորի ինքնարացարկի մասին որոշման կայացումը ոչ թե դատավորի հայեցողական լիազորությունն է, այլ պարտականությունը,
- դատավորի՝ իր անմիջական պարտականության կատարումից հետարավոր խուսափելու բացառելու իրավական միջոց է հանդիսանում նրա կողմից կայացված ինքնարացարկի մասին որոշման բողոքարկման հետարավորությունը,
- ինքնարացարկի հանգամանքների օբյեկտիվ բացահայտման եւ դատարանի իրավագորության երաշխավորման կարեւոր նախադրյալ է դատավորի ինքնարացարկի վերաբերյալ գործին մասնակցող անձանց կողմից միջնորդություն ներկայացնելու ինստիտուտը,
- դատավորի ինքնարացարկի վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշման անմիջական դատական բողոքարկման կարգ ու պայմաններ (ժամկետներ) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի նախատեսել՝ չբացառելով նման բողոքի քննությունը գործով կայացրած դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

Այդպիսով, վիճարկվող նորմերում ամրագրված է ինքնարացարկի ինստիտուտի իրավակարգավորման այն սկզբունքը, համաձայն որի տվյալ գործով քննություն իրականացնող դատավորի բացահիկ լիազորությունն ու պարտականությունն է դատաքննության շրջանակներում լուծել գործի հետ կապված ցանկացած, այդ թվում՝ նաև իր անաշառության վերաբերյալ կասկած հարուցող փաստերի եւ հանգամանքների առկայության հարցը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է այն սկզբունքային տարբերությունները, որպիսիք առկա են այդ ինստիտուտի նախկին (1998թ. հունիսի 17-ի խմբագրությամբ) եւ ներկա իրավակարգավորումների միջեւ: Սասնավորապես, բացարկի հարցն ըստ նախկին իրավակարգավորման ենթակա էր լուծման ոչ թե գործը քննող դատավորի, այլ՝ համապատասխան դատարանի նախագահի կողմից, իսկ գործը վերջինիս վարույթում գտնվելու դեպքում՝ մեկ այլ դատավորի կողմից: Բացի այդ, բացարկի (այն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ) եւ ինքնարացարկի հարցի արդյունքներով կայացված որոշումը ենթակա չէր բողոքարկման (ՀՀ քաղ. դատ. օր-ի 1998թ. հունիսի 17-ի խմբագրությամբ 25-րդ հոդվածի 2-րդ եւ 7-րդ կետեր): Ներկա իրավակարգավորմամբ գործը քննող դատավորին պարտավորեցնելով համապատասխան հիմքերի առկայության դեպքում կայացնելու ինքնարացարկի վերաբերյալ որոշում՝ օրենսդրությամբ սահմանակ սահմանել է դատավորի նախաձեռնությամբ կայացված այդպիսի որոշման բողոքարկման հնարավորություն (ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մաս), նախատեսելով լրացուցիչ իրավական երաշխիք՝ անաշառ որոշում կայացնելու եւ ինքնարացարկի ինստիտուտը սահմանադրական նպատակներին ծառայեցնելու համար:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

6. Գնահատելով սույն գործով վիճարկվող իրավակարգավորման ազդեցությունն արդար եւ անկողմնակալ դատաքննության իրավունքի, ինչպես նաև դրա արդյունավետ իրականացման երաշխիքների վրա, նկատի ունենալով նաև ինքնարացարկ հայտնելու միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ սահմանադրական դատարան ներկայացված դիմումներում առկա հարցադրումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե դատավորն իր անաշառության վրա ազդող հանգամանքներն իրավաչափորեն գնահատում է այն դեպքում, եթե ինքնարացարկի նախաձեռնությունն իրենն է, ապա նույն տրամաբանությամբ նա կարող է եւ պարտավոր է իրավաչափորեն գնահատել նույն հանգամանքները, եթե դատավարության կողմն է հանդես եկել ինքնարացարկի միջնորդությամբ։ Հետեւարար, չկա որեւէ տարբերություն՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ով է հանդես գալիս ինքնարացարկի նախաձեռնությամբ՝ կողմը, թե՝ դատավորը։ Ավելին, ինքնարացարկի հիմքերի առկայության հարցի վերաբերյալ դատավորի ոչ անաշառ մնտեցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ընդիուպ հանգեցնել այդ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման (մասնավորապես՝ ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի հիման վրա), քանի որ դատավորն է պարտավոր ապահովել դատարանի անաշառությունն ու այդ սկզբունքով արդարադատության իրականացումը։ Կողմնակալ դատավորն անկախ չեւ ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ արդարադատություն իրականացնել չի կարող, իսկ այդպիսի պայմաններում կայացված դատական ակտը (որպես իրավական ակտ) ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով՝ գործադրվել չի կարող։

Խնդիրը, սակայն, այն է, թե դատավորի ինքնարացարկի վերաբերյալ միջնորդության քննության եւ լուծման գործող կարգը որքանով է իրավաչափ։ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հայտնիած ինքնարացարկի միջնորդության քննության արդյունքներով դատավորը կամ ինքնարացարկ է հայտնում, կամ կայացնում է որոշում միջնորդությունը մերժելու մասին։ Նկատի ունենալով, որ խոսքը վերաբերում է դատավորի ինքնարացարկին, որը նա պարտավոր է իրականացնել օրյեկտիվ հիմքերի առկայության դեպքում, ինքնարացարկի միջնորդության մերժումը չի կարող բողոքարկման առարկա չդառնալ։ Հակառակ դեպքում իմմանավոր կլինի դիմող կողմի պնդումն այն մասին, որ վերջին հաշվով դատավորի անկողմնակալության մասին հանգամանքներն օրյեկտիվ գնահատման առարկա չեն դառնում։

Միջազգային փորձի եւ տարբեր երկրների սահմանադրական արդարադատության պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ այս հարցում գոյություն ունի հստակ դիրքորոշում՝ ինքնարացարկի որոշումը պարտադիր ենթակա է բողոքարկման, սակայն դրա կարգի եւ ժամկետների որոշումն

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

**օրենսդրի հայեցողության հարցն է:** Որպես կանոն, օրենսդրական կարգավորման պրակտիկայում գերապատվությունը տրվում է ոչ թե ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման անմիջական բողոքարկմանը, որը լուրջ վտանգ կարող է ներկայացնել գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքի իրացման հարցում, այլ, այսպես կոչված, «հետաձգված բողոքարկմանը»՝ գործով կայացրած որոշման բողոքարկման շրջանակներում դրա քննությանը, որը նույնապես ապահովում է դատարանի իրավագործության երաշխավորման հարցում կողմերի իրավունքների իրացումը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ նման ընտրությունն օրենսդրի իրավասության խնդիրն է, սակայն պարտադիր պետք է երաշխավորված լինի դատական ակտի բողոքարկման շրջանակներում դատավորի ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման հետ կապված հանգամանքների համակողմանի քննությունը: ՀՀ գործող օրենսդրությունն այս հարցում որեւէ արգելանք չի նախատեսում, եւ այս ուղղությամբ պետք է ընթանա նաև իրավակիրառական պրակտիկան: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ինքնաբացարկի վերաբերյալ կայացված որոշման բողոքարկման հնարավորության բացակայությունը եւ, միաժամանակ՝ ՀՀ դատական օրենսգրքում դատավորի ինքնաբացարկի որոշման բողոքարկման իրավունքը՝ ինքնաբացարկի դեպքում՝ անմիջականորեն, ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու դեպքում՝ ըստ էության գործով կայացված դատական ակտի բողոքարկման շրջանակներում: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դա բխում է նաև «Քաղաքացիական եւ տնտեսական գործերով բողոքարկման համակարգերի եւ ընթացակարգերի ու դրանց գործառնության կատարելագործման մասին» ԵԽ նախարարների կոմիտեի թիվ R 95 (5) հանձնարարականի դրույթներից (հոդված 3):

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի պահանջը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21, 22 եւ 23-րդ հոդվածների դրույթները՝ ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն ներկայացնելու մասով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ, չի երաշխավորում կողմերի իրավունքը հասնելու այն բանին, որ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկողմնակալ ու իրավագոր դատարանի կողմից իրականացվի գործի քննություն:

7. ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության խնդիրի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ նորմի իրավակարգավորման առարկան դատավորի՝ ինքնաբացարկի վերաբերյալ կայացված որոշման բողոքարկումն է: Միա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ դատական օրենսգրքի վերոհիշյալ հոդվածում ամրագրված են նաև ինքնարացարկի ինստիտուտի իրավակարգավորման շրջանակներում ընդհանուր նշանակության նորմեր (հոդվածի 1-ին եւ 2-րդ մասեր): Վիճարկվող նորմը կոչված է երաշխավորելու անկախ, արդար դատաքննության իրավունքի (ՀՀ Սահմ. 19-րդ հոդված) իրացումն այն դեպքերում, երբ դատավարության կողմն ունի ողջամիտ կասկածներ գործը քննող դատավորի՝ իր ինքնարացարկի հարցի լուծման իրավաչափության հարցում, նախատեսելով դատավորի ինքնարացարկի մասին որոշման բողոքարկման հնարավորություն:

ՀՀ սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ դատավորի բացարկի եւ ինքնարացարկի ինստիտուտների իրավակարգավորման գործում անհրաժեշտ է միասնական ու համակարգային մոտեցում: Հարկ է նկատել, որ այս խնդիրն առավել հստակ է կարգավորված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (հոդվածներ 88, 89, 90, 299, 322 եւ այլն), քան ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, որտեղ ընդհուպ անհամաձայնություն գոյություն ունի 21-26-րդ հոդվածների եւ 28-րդ հոդվածի միջեւ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21, 22 եւ 23-րդ հոդվածները՝ ինքնարացարկ հայտնելու մասին միջնորդություն ներկայացնելու մասով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրավարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 սեպտեմբերի 2010 թվականի  
**ՍՊ-918**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԻԳՈՐ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՖԻ  
53-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**5 հոկտեմբերի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի, Մ. Թոփոլյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող), մասնակցությամբ՝

դիմող Ի. Հակոբջանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դրսեաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Իգոր Հակոբջանյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Ի. Հակոբջանյանի՝ 07.04.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ ընտանեկան օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. ՀՀ ընտանեկան օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի դեկտեմբերի 8-ին եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի ապրիլի 19-ին:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջեւ վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից եւ հաշվի առնելով տար տարին լրացած երեխայի կարծիքը: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական եւ անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի եւ երեխայի միջեւ գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը եւ այլն»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատճենությունը հանգում է նրան, որ ըստ հայցի Կարինե Հակոբջանյանի ընդդեմ Իգոր Հակոբջանյանի եւ երրորդ անձ՝ Երեւանի Նոր Նորք վարչական շրջանի խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովի՝ երեխաների բնակության վայրը որոշելու պահանջի մասին եւ ըստ հայցի Իգոր Հակոբջանյանի ընդդեմ Կարինե Հակոբջանյանի եւ երրորդ անձ՝ Երեւանի Նոր Նորք վարչական շրջանի խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովի՝ երեխաների խնամքն ու դաստիարակությունը հորը հանձնելու, հոր հետ համատեղ բնակության իրավունք ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԱՆԴ-0589/02/09 քաղաքացիական գործով Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 2009 թվականի հոկտեմբերի 14-ին վճռել է երկու հայցերն էլ քավարարել մասնակիորեն. երեք երեխաներից մեկի խնամքն ու դաստիարակությունը հանձնել մորը, իսկ մյուս երկուսի խնամքն ու դաստիարակությունը հանձնել հորը:

ՀՀ վերաբննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 24.12.2009թ. որոշմամբ մասնակիորեն բեկանել եւ փոփոխել է Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ԵԱՆԴ-0589/02/09 վճիռը: Նշված որոշմամբ դատարանը վերահաստատել է ստորադաս դատարանի եզրահանգումները՝ կապված ստորադաս դատարանի կողմից ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի նորմերի կիրառման, նաև 12 տարեկան Վիկտորյա Հակոբջանյանի կարծիքը եւ 4 տարեկան Մարիա Հակոբջանյանի տարիքը հաշվի առնելու իրավաչափության հետ: Ինչ վերաբե-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

բում է Կամո Հակոբջանյանի խնամքի եւ դաստիարակության հարցին, ապա վերաբննիչ դատարանը, ի տարբերություն առաջին ատյանի դատարանի, Կամո Հակոբջանյանի խնամքն ու դաստիարակությունը հանձնել է մորք՝ հղում կատարելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի նորմերին եւ երեխայի «լավագույն շահերից ելեկով»:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 24.02.2010 թվականի որոշմամբ Խզոր Հակոբջանյանի ներկայացուցի վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ վերահաստատելով վերաբննիչ դատարանի եզրահանգումները:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ «երեխաների շահերից» բառակապակցությունն առանձին վեցրած, ինչպես նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի ամբողջ 3-րդ մասը՝ նման ձեւակերպմամբ հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված իրավական պետության սկզբունքին, 14.1-րդ հոդվածին, 18 եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերին, 35 եւ 36-րդ հոդվածների 1-ին մասերին:

Ըստ դիմողի՝ օրենսդիրը, հաշվի առնելով ընտանեկան հարաբերությունների առանձնահատկությունները, պետք է օրենսդրությամբ հստակ կանոնակարգեր երեխայի խնամքի ու դաստիարակության հարցի լուծման հետ կապված հարաբերությունները: Մինչդեռ, ըստ դիմողի, վիճարկվող նորմերը չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջին, քանի որ դրանցում բացահայտված չէ «երեխաների շահերից» հասկացությունը, որը միայն տվյալ պարագայում կարող է ընկած լինել ծնողական իրավունքների սահմանափակման հիմքում:

Դիմում գտնում է նաև, որ վիճարկվող նորմերը նման ձեւակերպմամբ չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջին, քանի որ, ըստ նրա, պարզ չէ, թե վիճարկվող նորմերում «ընդ որում» բառակապակցությունից հետո ամրագրված դրույթները որքանով են տրամաբանութեն փոխկապակցված նույն բառակապակցությունից առաջ ընկած նախադասության դրույթների հետ: Վիճարկվող նորմերի նման ձեւակերպման դեպքում, ըստ դիմումի՝ «երեխաների շահերից» բառակապակցության առկայությունը խոչընդոտում է իրավահարաբերության արդյունավետ կանոնակարգմանը:

ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերի առնչությամբ դիմումը կարծիք է հայտնում, որ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերով սահմանված՝ համապատասխանաբար՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ արդար դատաքննության դատավարական իրավունքներն իրենց հիմքում ունեն ոչ միայն տվյալ դատավարական իրավունքների համար անհրաժեշտ իրավական կառուցակարգեր, այլև կարեւորվում է նյութական իրավունքի դատական

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կարգով իրացվելիության հանգամանքը: Ըստ այդմ էլ դիմողը գտնում է, որ եթե տվյալ նյութական իրավունքի վերաբերյալ նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության եւ կանխատեսելիության պահանջներին, կամ թեկուզեւ համապատասխանում է այդ պահանջներին, սակայն օրենսդրությամբ տվյալ նյութական իրավունքի իրացման համար սահմանված են այնպիսի պայմաններ, որոնք արգելափակում են այդ նյութական իրավունքի՝ դատական կարգով իրացվելու հնարավորությունը, ապա այդ պայմանը չի կարող համարվել դատական պաշտպանության արդյունավետ միջոց կամ արդար դատաքննության տարր:

ՀՀ Սահմանադրության 35 եւ 36-րդ հոդվածների 1-ին մասերի առնչությամբ ներկայացնելով նշված հոդվածների վերաբերյալ իր մեկնաբանությունները՝ դիմողը կարծիք է հայտնում, որ սահմանադրական պարտականության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար անձին պատասխանատվության շենթարկելու համար պետությունը, իր հերթին, պարտավոր է վերացնել բոլոր այն խոչընդոտները, որոնք կղծվարացնեն կամ անհնարին կրաքննեն անձի կողմից իր սահմանադրական պարտականության կատարումը: Ըստ այդմ էլ դիմոդ գտնում է, որ տվյալ դեպքում այդ միջոցներից մեկն էլ այն է, որ պետությունը պարտավոր է այնպիս կարգավորել ընտանեկան հարաբերությունները, որ դրանք իսկապես բխեն երեխաների լավագույն շահերից, քանի որ, ըստ դիմոդի, միայն այդ պայմաններում է, որ ծնողը կկարողանա կատարել իր երեխայի լիարժեք ու ներդաշնակ զարգացմանը հոգ տանելու իր սահմանադրական պարտականությունը:

4. Պատասխանողը գտնում է, որ դիմոդը ձեւականորեն վիճարկելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության հարցը՝ իրականում առաջ է քաշում միայն այդ հոդվածի՝ իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանության հարցը:

Պատասխանողը, հղում կատարելով, մասնավորապես, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, Երեխայի իրավունքների կոմիտեի իրավական փաստաթղթերին, գտնում է, որ դիմոդի կողմից վիճարկվող դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը, քանի որ երեխայի շահերին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերում «Երեխայի լավագույն շահերի պաշտպանությունը» բարձրացվել է համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքի աստիճանի:

Իր վերոհիշյալ դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողը նաև վկայակոչում է արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրությունները եւ ձեւավորված իրավաբանական դոկտրինան՝ փաստելով, որ վերջիններս եւս «Երեխայի լավագույն շահերի պաշտպանություն» սկզ-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

բունքը դիտում են որպես ընտանեկան օրենսդրության հիմքում ընկած ինքնուրույն սկզբունք: Ծեշտվում է, որ երեխայի շահերի պաշտպանությունը նախ եւ առաջ ենթադրում է երեխայի սուբյեկտիվ իրավունքների եւ ծնողների պարտականությունների օրենսդրական ամրագրում: Նման կարգավորում է ընկած նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքի հիմքում: Վկայակոչելով, որ «երեխայի շահերի պաշտպանության» սկզբունքը ոչ թե կարգավորում է առանձին իրավանորմով, այլ «...կարմիր թելի պես անցնում է ողջ օրենսգրքով», պատասխանող կողմը գտնում է, որ վիճարկվող դրույթը չի հակասում ՀՀ Սահմանադրությանը:

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն իր իրավունքների խախտումը պայմանավորում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «երեխաների շահերից» հասկացության, ինչպես նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի ողջ իրավակարգավորման իրավական անորոշությամբ եւ դրա հետեւանքով, իր կարծիքով, հակասական իրավակիրառ պրակտիկայի առկայությամբ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի եւ 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները՝ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւորում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «երեխաների շահեր» հասկացության, «հաշվի առնելով տար տարին լրացած երեխայի կարծիքը» բառակապակցության, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման սահմանադրահրավական իմաստի բացահայտման, ինչպես նաև կիրառման պրակտիկայում դրսեւրված մոտեցումների գնահատման անհրաժեշտությունը:

6. ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի համաձայն երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման համար հոգ տանելը ծնողների իրավունքն ու պարտականությունն է: Սահմանադրահրավական այս պահանջի իրացմանն է ուղղված ՀՀ ընտանեկան օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմը: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների վերլուծությունից ելնելով, մասնավորապես, հիմք ընդունելով վիճարկվող դրույթներում «ընդ որում» եւ «եւ այլն» բառակապակցությունների առկայությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթներում «ընդ որում» բառակապակցությունից հետո ամրագրված պայմանները, այն է՝ «երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական եւ անձնական այլ հատկանիշները, ծնողներից յուրաքանչյուրի եւ երեխայի միջեւ գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնող-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունն» այն նվազագույն պայմաններն են, որոնք ճշգրտում են բացահայտում են վիճարկվող դրույթներում «երեխանների շահերից» հասկացության բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը: Ընդունում, վերը նշված պայմանները սպառիչ չեն, եւ երեխայի շահը գնահատելիս օրենսդիրը դատարանների հայեցողությանն է վերապահում նաև այլ պայմաններ հաշվի առնելը:

Սահմանադրական դատարանը, վերահստատելով իր ՍԴՈ-747 եւ ՍԴՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով եւս ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնարավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «երեխանների շահեր» հասկացությանը եւ դրա բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը: Ընդունում, նշված հասկացությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում «ընդ որում» բառուկապակցությունից հետո թվարկված պայմանները պարտավորեցնում են դատարաններին երեխայի շահը գնահատելիս հիմք ընդունել այդ պայմանները, ինչպես նաև, առաջնորդվելով իրենց հայեցողական լիազորությամբ, հիմք ընդունել նաև այլ պայմաններ, եթե դատարանի գնահատմամբ այդպիսիք կան: Դատարանների այդպիսի պարտականության մասին իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 30.03.2007թ. թիվ 3-432 (ՏԴ) որոշման մեջ: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման պարտականությունը միաժամանակ ապահովում է դատական ակտի պատճառաբանվածությունը, որի վերաբերյալ սահմանադրական դատարանն իր, մասնավորապես, 2007 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-690, 2007 թվականի ապրիլի 11-ի ՍԴՈ-691 եւ մի շարք այլ որոշումներում բազմիցս արտահայտել է համապատասխան իրավական դիրքորոշումներ:

Անդրադառնալով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը» բառակապակցության սահմանադրահրավական բովանդակության պարզաբանմանը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված բառակապակցությունը վերաբերում է տասը տարին լրացած երեխայի՝ դատարանում լսվելու իրավունքին եւ դատարանի համապատասխան

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

պարտականությանը՝ լսելու երեխայի կարծիքը: Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, այնուամենայնիվ, տվյալ իրավակարգավորման համատեքստում երեխայի կարծիքը դատարանի համար պարտադիր չէ: Նման եզրահանգման համար հիմք է երեխայի շահը, որն առաջնային է ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխայի բնակության վայրը որոշելիս: Բացի դրանից, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում երեխայի շահը գնահատելիս օրենսդիրն օգտագործում է «ելնելով» բառը, մինչդեռ տասը տարին լրացած երեխայի կարծիքի կապակցությամբ օրենսդիրն օգտագործում է «հաշվի առնելով» բառակապակցությունը: Այսինքն՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում «ընդ որում» բառակապակցությունից հետո շարադրված դրույթները փոխկապակցված են նշված բառակապակցությունից առաջ շարադրված դրույթների հետ, բացահայտում են «երեխայի շահեր» հասկացության բովանդակությունը, իսկ եթե դատարանի գնահատմամբ երեխայի կարծիքը չի համընկնում երեխայի շահերի հետ, ապա դատարանը պարտավոր է առաջնորդվել երեխայի շահերով, այն է՝ երեխայի կարծիքը գնահատել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում «ընդ որում» բառակապակցությունից հետո շարադրված պայմանների համատեքստում:

7. Արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխայի բնակության վայրի, խնամքն ու դաստիարակությունը ծնողներից որեւէ մեկին հանձնելու հետ կապված վեճի լուծման իրավասությունը բոլոր դեպքերում վերապահվում է դատարանին՝ վերջինիս վերապահելով հայեցողական ազատություն: Ընդ որում, հիմնականում օրենսդիրը չի օգտագործում «երեխաների շահեր» հասկացությունը, իսկ այդ հասկացությունն օգտագործելու դեպքում, այնուամենայնիվ, չի սահմանում նշված հասկացության նվազագույն չափորոշիչները, եւ երեխաների շահերի գնահատման իրավասությունը վերապահում է դատարանների հայեցողությանը:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի ուսումնասիրությունը եւս ցույց է տալիս, որ վերջինս նույնական օգտագործում է «երեխայի լավագույն շահ» հասկացությունը՝ առանց սահմանելու նշված հասկացության նվազագույն չափորոշիչները:

Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի տեսանկյունից քննարկվող հարցին է բազմից անդրադարձել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ երեխայի խնամքի եւ դաստիարակության վերաբերյալ

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վեճը լուծելիս դատարանները պետք է առաջնորդվեն երեխայի լավագույն շահերով (C. v. Finland գործով 2006թ. մայիսի 9-ի վճիռը, Olsson v. Sweden գործով 1988թ. մարտի 24-ի վճիռը):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս տեսանկյունից Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն առավել մանրակրկիտ է կարգավորում ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխայի խնամքն ու դաստիարակությունը ծնողներից որեւէ մեկին հանձնելու հետ կապված հարաբերությունները՝ օգտագործելով «երեխաների շահեր» հասկացությունը եւ սահմանելով նշանակած հասկացության նվազագույն չափորոշիչները:

Վերոգրյալի, ինչպես նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանված իրավակարգավորումների տրամաբանության հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտանեկան իրավահարաբերություններում «երեխայի շահ» հասկացությունը բարձրացվել է համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքի աստիճանի եւ հանդիսանում է ընտանեկան օրենսդրության հիմքում ընկած ինքնուրույն սկզբունք:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների՝ դիմողի կարծիքով իրավական անորոշությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Յ Ե Ց**.

1. ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**5 հոկտեմբերի 2010 թվականի  
ՍՊԸ-919**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱՇԵՍ ԱՆՏՈՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 203-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

12 հոկտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող),  
Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Մ. Թոփուլյանի,  
Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող Ա. Անտոնյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արտաշես Անտոնյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Ա. Անտոնյանի՝ 03.05.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ մաքսային օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. ՀՀ մաքսային օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2000 թվականի հուլիսի 6-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2000 թվականի օգոստոսի 9-ին եւ ուժի մեջ է մտել 2001 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ մաքսային օրենսգրքի՝ «Ապրանքները եւ տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ դրանց հայտարարագրելը ոչ իրենց անվանմամբ» վերտառությամբ վիճարկվող 203-րդ հոդվածը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները եւ տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը, այսինքն՝ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձեռով չհայտարարագրելը, ինչպես նաև հայտարարագրումը ոչ իրենց անվանմամբ՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: «Զանգեզուրի պղնձամոլիրդենային կոմքինատ» ՓԲԸ-ի անվամբ 21.10.2006թ. թիվ 264724 եւ 264726, 24.10.2006թ. թիվ 264820, 26.10.2006թ. թիվ 2647867 փոխադրման ամփոփագրերով Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել «Ֆլոտոմաշինա» անվանումը կրող լեռնահանքային սարքավորում: Վերջինիս հայտարարագրումն իրականացրել է «Զանգեզուրի պղնձամոլիրդենային կոմքինատ» ՓԲԸ-ի լիազոր ներկայացուցիչ Արտաշես Անտոնյանը՝ 30.10.2006թ. թիվ C 3883 թերուային մաքսային հայտարարագրով:

ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) կողմից Զանգեզուրի պղնձամոլիրդենային կոմքինատի անունով սկսած 2006թ. ներմուծված եւ ԱԱՀ-ի գրոյական դրույքաշափով կատարված մաքսային ձեւակերպումների օրինականության ուսումնասիրության արդյունքում 30.07.2008թ. կազմվել է համապատասխան տեղեկանք: 17.10.2008թ. ՊԵԿ հետաքննության բաժնի հետաքննիչի կողմից կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն: 27.10.2008թ. ՊԵԿ հետաքննության եւ իրավաբանական վարչության պետի կողմից կայացվել է «Քրեական գործի հարուցումը մերժելու եւ վարչական տույժ նշանակելու մասին» որոշում, որով Արտաշես Անտոնյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է՝ արարքում հանցագմի բացակայության պատճառով, եւ միաժամանակ Արտաշես Անտոնյանը ճանաչվել է զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով եւ տուգանվել հաշիվ-ապրանքագրային արժեքի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրված «Ֆլոտոմաշինա» տեսակի լեռնահանքային սարքավորումների մաքսային արժեքի՝ 579.506.236,48

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ՀՀ դրամի չափով: Դա տեղի է ունեցել այն բանի արդյունքում, եթե 17 վագոն ապրանքաբեռից ստանալով 15 վագոն՝ 1.461.176 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով, այն մաքսագերծվել է դեռևս չափացված 2 վագոն ապրանքաբեռի՝ 194.823 ԱՄՆ դոլար գումարի չափով:

22.12.2008թ. դիմողը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՊԵԿ-ի՝ ՀՀ ԿՍ ՊԵԿ հետաքննության եւ իրավաբանական վարչության պետի՝ 27.10.2008թ. «Քրեական գործի հարուցումը մերժելու եւ վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը մասնակի՝ վարչական տույժ նշանակելու մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին:

19.01.2009թ. ՊԵԿ-ը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ Արտաշես Անտոնյանի՝ վերջինից պետական բյուջե գանձվող տուգանքի եւ պետական տուրքի գումարների բռնագանձման պահանջի մասին:

ՀՀ վարչական դատարան՝ 26.02.2009թ. որոշմամբ վերոնշյալ երկու վարչական գործերը միացվել են մեկ վարույթում: ՀՀ վարչական դատարան՝ 28.08.2009թ. կայացված վճռով (վարչական գործ թիվ ՎԴ/7499/05/08) ՊԵԿ-ի հայցը բավարարվել է, իսկ Արտաշես Անտոնյանի հայցը՝ մերժվել: Դիմողի հայցը մերժելով՝ ՀՀ վարչական դատարանը, հղում կատարելով ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածին, նշել է. «ԶՊԱԿ» ՓԲԸ-ի լիազորված անձ Ա. Անտոնյանի կողմից թույլ է տրվել ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով սահմանված իրավախախոտումը, քանի որ վերջինս հանդիսանալով ընկերության ներկայացուցիչը՝ ՀՀ տարածք ներմուծված վերոհիշյալ լեռնահանքային սարքավորումները հայտարարագրել է 194.823 ԱՄՆ դոլար արժեքով, հաշիվ-ապրանքագրում նշված 1.461.176 ԱՄՆ դոլարի փոխարեն»:

Արտաշես Անտոնյանը 28.08.2009թ. թիվ ՎԴ/7499/05/08 վճռի դեմ ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 04.11.2009թ. որոշմամբ վերադարձվել է:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ հոդվածներին՝ այն պատճառաբանությամբ, որ վիճարկվող հոդվածը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, ինչի արդյունքում իրավակիրառական պրակտիկայում դրան տրվել է կամայական մեկնարանություն: Այդ պնդումը դիմողը հիմնավորում է նրանով, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը հստակորեն չի սահմանում, թե որ գործողություններն են ներառվում «ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձեւով չհայտարարագրելու գանցակագմի մեջ», չի հստակեցնում, թե մեղքի որ ձեւի դեպքում է պատասխանատվությունը ծագում՝ դիտավորության, թե՝ անզգուշության, եւ դրանցից յուրաքանչյուրի դեպքում չի տարբերակում պատասխանատվու-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թյան չափը: Բացի դրանից, դիմողը գտնում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը հակասում է նաև ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածին՝ անհամաշափ պատասխանատվության միջոց նախատեսելու տեսանկյունից: Դիմողը նշում է, որ վիճարկվող հոդվածը նույն հարթության վրա է դիտում որակապես տարբեր իրավախախումներ եւ դրանց համար նախատեսում է պատասխանատվության միեւնույն չափ՝ վերջինս պայմանավորելով տեղափոխվող ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքով:

Դիմողի պնդմամբ՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը հակասում է նաև ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածին՝ իրավակիրառական այրակտիկայում դրան տրված մեկնարանության իմաստով: Այդ հակասությունը, ըստ դիմողի՝ դրսեւորվում է նրանում, որ պարագայում հաճախ մաքսային մարմինները քրեական եւ վարչական վարույթներն իրականացնում են միաժամանակ, եւ այդ վարույթների արդյունքներն անփոփում են մեկ ընդհանուր որոշմամբ:

4. Ըստ պատասխանող կողմի՝ վիճարկվող իրավադրույթը կիրառելիս իրավական որոշակիության խնդիր չի առաջանում: Դիմողի իսկ փաստարկները վկայում են, որ վիճարկվող նորմն իրավակիրառողի կողմից ընկալվում եւ մեկնարանվում է միատեսակ:

Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող նորմի հակասահմանադրականության առնչությամբ դիմողն իր դիմումը հիմնավորում է բացառապես իրավակարգավորման նպատակահարմարության վերաբերյալ մոտեցումներ ներկայացնելով՝ չիմնավորելով վիճարկվող նորմի եւ ՀՀ Սահմանադրության միջեւ առկա որեւէ հակասություն: Այսինքն՝ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է իրավադրույթով տրված իրավակարգավորման եւ տվյալ իրավակարգավորմամբ իր նկատմամբ առաջացած հետեւանքների իրավաչափության հարց:

Վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ, մասնավորապես՝ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, հիմնվելով 17.03.2009թ. ՍԴ-ԱՌ-21, 23.03.2010թ. ՍԴ-Օ-870 եւ 24.11.2009թ. ՍԴ-Օ-839 որոշումներում ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների վրա՝ պատասխանող կողմը միջնորդություն է ներկայացրել կարծել սույն գործի վարույթը:

Սահմանադրական դատարանը միջնորդության քննության արդյունքում այն չի բավարարել:

5. ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

օրենսդրի բացառիկ իրավասությանն է վերապահված ֆիզիկական եւ իրավաբանական անձանց պարտականությունների եւ պատասխանատվության տեսակների, չափերի ու հարկադրանքի միջոցների սահմանումը։ Իր այդ լիազորությունն իրականացնելիս օրենսդրին ինքնուրույնաբար որոշում է, մասնավորապես, վարչական իրավախախումների վերաբերյալ օրենսդրության դրույթների բովանդակությունը, այն արարքների շրջանակը, որոնց կատարումը հանգեցնում է վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների շրջանակը, սահմանում է վարչական պատասխանատվության միջոցներն ու չափերը։ Նշված հարցերում օրենսդրի հայեցողությունը, սակայն, ունի իր սահմանադրական շրջանակները, եւ օրենսդրին իր նշված լիազորությունն իրականացնելիս կաշկանդված է առանձին սահմանադրական սկզբունքներով։ Օրենսդրի հայեցողության ազատության սահմանները նախանշված են, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ եւ 43-րդ հոդվածներում։ Սահմանադրության նշված հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ դրանց իրավական բովանդակությունը, ի թիվս այլոց, հանգում է նրան, որ հանրային իշխանության իրականացումը նախեւառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ համաշափության ընդհանուր սկզբունքով։ Այս սկզբունքը հանդիսանում է ընդհանրապես իրավաբանական պատասխանատվության եւ, մասնավորապես՝ վարչական պատասխանատվության հիմքում ընկած կարեւորագույն սկզբունքներից մեկը, որի ապահովման տեսանկյունից էլ նախեւառաջ անհրաժեշտ է գնահատել վիճարկվող նորմի սահմանադրականությունը։

Խնդրո առարկա սահմանադրափական վեճի համատեքստում համաշափության սկզբունքը պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի եւ պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջեւ։

Տվյալ դեպքում վիճարկվող նորմով սահմանված վարչական պատասխանատվությունն իրավաչափ նպատակ է հետապնդում ապահովել ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով սահմանված՝ տուրքեր մուծելու՝ անձանց սահմանադրական պարտականության կատարումը։

Ինչ վերաբերում է նշված իրավաչափ նպատակի եւ վիճարկվող նորմով սահմանված պատասխանատվության միջեւ համաշափության գնահատմանը, ապա այդ նպատակով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմը դիտարկել ՀՀ մաքսային օրենսգրքի՝ «Մաքսային կանոնների խախտումները եւ պատասխանատվությունը դրանց համար» վերտառությամբ 37-րդ գլուխ նորմերի հետ համակարգային ամբողջականության համատեքստում։

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

6. Մաքսային օրենսգրքի՝ «Մաքսային կանոնների խախտումները եւ պատասխանատվությունը դրանց համար» վերտառությամբ 37-րդ գլխի նորմերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մաքսային կանոնների խախտման երկու հիմնական խումբը.

ա. մաքսային կանոնների խախտումներ, որոնք չեն առնչվում պետության ֆինանսական շահերին, մաքսային վճարների վճարման պարտականության կատարման ապահովմանը (օրենսգրքի 190-199.1-րդ հոդվածներ),

բ. մաքսային կանոնների խախտումներ, որոնք անմիջականորեն վերաբերում են պետության ֆինանսական շահերին եւ նպատակառուղղված են մաքսային վճարների վճարման պարտականության կատարման ապահովմանը (օրենսգրքի 200-204-րդ հոդվածներ): Դրանք վերաբերում են, մասնավորապես, մաքսային սահմանված պարանքների եւ տրանսպորտային միջոցների տեղափոխմանը՝ մաքսային հսկողությունը շրջանցելով, մաքսային հսկողությունից բաքցնելով, ապրանքները եւ տրանսպորտային միջոցները չհայտարարագրելով, մաքսային եւ այլ փաստաթղթերը կամ մաքսային ապահովման միջոցները խարեւությամբ օգտագործելով: Նշված իրավախախտումների դեպքում այդ չափով չեն ապահովվում տվյալ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների կամ դրանց առանձին խմբաքանակի մասով մաքսատորքների, օրենքով սահմանված հարկերի, տուրքերի եւ այլ պարտադիր վճարների գծով պետական բյուջեի մուտքերը:

Պայմանավորված իրավախախտումների վերոհիշյալ առանձնահատկություններով՝ ի տարբերություն օրենսգրքի 190-199.1-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների, օրենսդիրն օրենսգրքի 200-204-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների համար պատասխանատվության չափը հավասարեցրել է ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքին: Բացի դրանից, օրենսգրքի 200-204-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների համար պատասխանատվության առանձնահատկություններից է նաև այն, որ օրենսդիրը, ելեկով նշված հոդվածներով պահպանվող արժեքների կարեւությունից եւ դրանով պայմանավորված՝ հետապնդվող իրավաչափ նպատակից, վարչական պատասխանատվություն նախատեսում է միայն հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ինչպես վիճարկվող նորմում, այնպես էլ օրենսգրքի 200-202-րդ եւ 204-րդ հոդվածներում տուգանքի չափն ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքով պայմանավորելով իրավաչափ է եւ արդարացված է այդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությամբ հետապնդվող իրավաչափ նպատակով, այն է՝ ապահովել ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

սահմանված՝ հարկեր, տուրքեր եւ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտականության երաշխավորված կատարումը:

7. Վիճարկվող դրույթի սահմանադրախրավակական բովանդակությունը բացահայտելու համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է հանձնում վիճարկվող դրույթը դիտարկել այդ նորմի իրավակարգավորման առարկայի եւ օրենսգրքի 200-202-րդ եւ 204-րդ հոդվածների ընդհանուր տրամաբանության լույսի ներքո:

Այդ նորմների վերլուծությունը վկայում է, որ դրանցում նշված բոլոր իրավախսատումների դեպքում փաստացիորեն տեղի է ունենում ապրանքների կամ դրանց որոշակի խմբաքանակի չհայտարարագրում: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 200-202-րդ եւ 204-րդ հոդվածների իմաստով «չհայտարարագրել» հասկացության ներքո օրենսդիրը նկատի է ունեցել ոչ միայն ապրանքները եւ տրանսպորտային միջոցներն ընդհանրապես չհայտարարագրելը (օրենսգրքի 200 եւ 201-րդ հոդվածներ), այլ նաև ապրանքների եւ տրանսպորտային միջոցների այնպիսի **հայտարարագրումը**, որը զուգորդվում է մաքսային մարմին մաքսային հսկողության եւ մաքսային ձեւակերպման համար կեղծ, անօրինական ճանապարհով ստացված, անվավեր համարված կամ այլ ապրանքներին եւ տրանսպորտային միջոցներին վերաբերող փաստաթղթեր ներկայացնելով, կեղծ մաքսային ապահովման միջոցներ օգտագործելով, ինչպես նաև առանց մաքսային մարմինների թույլտվության՝ մաքսային վճարումների գծով արտոնություններ ունեցող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների օգտագործմամբ, տնօրինմամբ եւ այդ արտոնություններով չպայմանավորված նպատակներով այլ անձանց հանձնելով (օրենսգրքի 202 եւ 204-րդ հոդվածներ): Վերջին դեպքերում եւս փաստացիորեն տեղի է ունենում կոնկրետ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների կամ դրանց կոնկրետ խմբաքանակի **չհայտարարագրում**: Ընդ որում, նշված իրավախսատումներն իրենց իրավական հետեւանքներով այնպիսին են, որ դրանց կատարման դեպքում այդ չափով չեն ապահովվում տվյալ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների կամ դրանց առանձին խմբաքանակի մասով մաքսատուրքերի, օրենքով սահմանված հարկերի, տուրքերի եւ այլ պարտադիր վճարների գծով պետական բյուջեի մուտքերը:

Վիճարկվող նորմի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այդ նորմով նախատեսված իրավախսատման, այն է՝ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների չհայտարարագրման դրսեւում երկու ձեւների համար էլ օրենսդիրը, հետեւողական մոտեցում ցուցաբերելով օրենսգրքի 200-202-րդ եւ 204-րդ հոդվածների տրամաբանությանը, նկատի է ունեցել հայտարարագրման կանոնների այնպիսի խախտումներ,

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

որոնք հանգեցնում են կոնկրետ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների կամ դրանց կոնկրետ խմբաքանակի չհայտարարագրմանը: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների չհայտարարագրման կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրման դեպքում եւս չի ապահովվում տվյալ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների կամ դրանց առանձին խմբաքանակի՝ այդ չափով մաքսատուրքերի, օրենքով սահմանված հարկերի, տուրքերի եւ այլ պարտադիր վճարների գծով պետական բյուջեի մուտքերը՝ միատեսակ դարձնելով դրանց հասարակական վտանգավորության աստիճանը:

Հիմք ընդունելով վերոգրյալ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 200-204-րդ հոդվածների սահմանմամբ օրենսդրի նպատակը վարչական պատասխանատվություն սահմանելն է ոչ թե Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների չհայտարարագրման դրսեւորման բոլոր դեպքերի համար, այլ միայն այն դեպքերի, որոնց հետեւանքով չի ապահովվում կոնկրետ ապրանքի եւ տրանսպորտային միջոցի կամ դրանց առանձին խմբաքանակի՝ այդ չափով մաքսատուրքերի գծով պետական բյուջեի մուտքերը: Քննության առարկա գործի շրջանակներում 1.461.176 ԱՄՆ դոլար գումարի ապրանքաբեռի փոխարեն մաքսատուրք է վճարվել 194.823 ԱՄՆ դոլար ապրանքաբեռի դիմաց: Սահմանադրափական առումով համոզիչ չէ այն հանգամանքը, որ այս հարցում բացառվել են հանցակազմի հատկանիշները եւ պահանջներ չեն ներկայացվել իրավաբանական անձին:

Այսուհետեւ, վերոհիշյալ համակարգային վերլուծությունը վկայում է, որ վիճարկվող դրույթում «ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձեւով չհայտարարագրել» բացահայտիչ միջանկյալ ձեւակերպման ներքո տվյալ հոդվածի իրավակարգավորման առարկայի շրջանակներում պետք է նկատի ունենալ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մասին այնպիսի ոչ ճշգրիտ տեղեկություններ հայտարարագրելը, որը գործնականում հանգեցնում է իրական բերի չհայտարարագրման, ինչի մասին վկայում է նաև սույն գործին առնվազող դատավարական նախապատմությունը: Ընդ որում, նշված նորմում ճշգրիտ տեղեկությունների ներքո նկատի են առնվում ՀՀ մաքսային վարչության՝ 1998թ. հունիսի 12-ի թիվ 71-ՄՎՀ իրամանով նախատեսված միայն այն տեղեկությունները, որոնց ոչ ճշգրիտ հայտարարագրումն իր իրավական հետեւանքներով հավասարագոր է մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները կամ տրանսպորտային միջոցները հայտարարագրելու պարտականությունը չկատարելուն, այսինքն՝ հանգեցրել է մաքսային պարտավորության չկատարմա-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նը, կամ որ նույնն է՝ դրանց հետեւանքով չեն ապահովել կոնկրետ ապրանքի եւ տրանսպորտային միջոցի կամ դրանց առանձին խմբաքանակի՝ այդ չափով մաքսատուրքերի, օրենքով սահմանված հարկերի, տուրքերի եւ այլ պարտադիր վճարների գծով պետական բյուջեի մուտքերը:

**Միայն վիճարկվող նորմի նման ընկալումը կարող է համապատասխանել սույն հոդվածի իրավակարգավորման տրամադրանությանն ու նպատակին:**

Միաժամանակ, նկատի ունենալով, որ վիճարկվող նորմում՝ «այսինքն՝ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձեւով չհայտարարագրելը» արտահայտությունը կարող է բույլ տալ նորմի այնպիսի մեկնաբանություն, ըստ որի՝ վիճարկվող նորմով նախատեսված պատասխանատվությունը կարող է կիրառվել նաեւ հայտարարագրման սահմանված կարգից ցանկացած շեղման դեպքում՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող նորմով նախատեսված արարքի համար անձի վարչական պատասխանատվությունն իրավաչափ է միայն այն դեպքում, եթե այդ պատասխանատվությունը նպատակառուղղված է մաքսային պարտավորությունների կատարումն ապահովելու՝ վերը նշված իրավաչափ նպատակին հասնելուն: Հետեւաբար, այն դեպքում, եթե տեղափոխվող ապրանքի կամ տրանսպորտային միջոցի մասին ճշգրիտ տեղեկություններ չհայտարարագրելը չի հանգեցրել ապրանքի կամ տրանսպորտային միջոցի մաքսային արժեքի նվազեցմանը եւ ըստ այդմ չի հանգեցրել օրենքով սահմանված կարգով եւ չափով մաքսատուրք վճարելու սահմանադրական պարտականության ոչ պատշաճ կատարմանը, նշված արարքի համար պատասխանատվությունը՝ վիճարկվող նորմով սահմանված չափով, դառնում է ինքնանպատակ եւ չի բխում վիճարկվող նորմի ընդհանուր իրավակարգավորման առարկայից:

8. ՀՀ մաքսային օրենսգրքի 128-րդ հոդվածը սահմանում է ապրանքները եւ տրանսպորտային միջոցները հայտարարագրելու ընդհանուր պարտականությունը: Ըստ նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 3-րդ մասի՝ այդ պարտականությունը կրող սուրբեկտ է հանդիսանում հայտարարատուն: Համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի՝ որպես հայտարարատուն կարող է հանդիսանալ գալ ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը:

Վարչական իրավախսատումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9, 32 եւ 279-րդ հոդվածների համադրված ուսումնասիրությունը վկայում է, որ վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախսատում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ: Այդ սկզբունքն

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Է ընկած նաեւ մաքսային կանոնների խախտման համար պատասխանատվության հիմքում: Մասնավորապես, ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական եւ պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

**Հետեւաբար՝ մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիկ կողմի պարտադիր տարր, հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը: Նշված սկզբունքը սերտորեն առնչվում է նաեւ վարչական պատասխանատվության մեկ այլ սկզբունքի՝ անձնական պատասխանատվության սկզբունքին, որի համաձայն անձը ենթակա է պատասխանատվության միայն անձամբ կատարած իրավախախտման համար:**

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմը կիրառելիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավակիրառողը պարտավոր է, ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, պարզել լիազորված անձի, լիազորողի եւ տեղափոխողի մեղքի առկայությունը՝ ըստ այդմ որոշելով պատասխանատու սուբյեկտին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լիազորված անձը գործում է տեղափոխողի անունից եւ ի շահ վերջինիս՝ համապատասխան ակտի հիման վրա տրամադրված լիազորությունների շրջանակներում, եւ հայտարարագրումն իրականացնում է տեղափոխողի տրամադրած տեղեկատվության հիման վրա՝ այդ լիազորությունների շրջանակներում կատարած ցանկացած գործողության համար վիճարկվող դրույթով սահմանված պատասխանատվության սուբյեկտ պետք է հանդիսանա տեղափոխողը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ձեւավորված իրավակիրառական այն պրակտիկան, երբ չապահովելով իրավախախտման համար մեղավորի պատասխանատվությունը եւ բոլոր դեպքերում որպես պատասխանատվության սուբյեկտ դիտարկելով տեղափոխող ապրանքների կամ տրանսպորտային միջոցի նկատմամբ որեւէ գույքային իրավունք չունեցող լիազորված անձին, բույլ չի տալիս արդյունավետորեն իրացնել վիճարկվող նորմով սահմանված պատասխանատվության իրավաչափ նպատակը, այն է՝ ապահովել տնտեսավարող սուբյեկտի կողմից՝ Սահմանադրության 45-րդ հոդվածով ամրագրված պարտականության իրական կատարումը:

Այս խնդրի իրավակարգավորումը հետագա համակարգային բարեփոխման անհրաժեշտություն ունի:

9. Ինչ վերաբերում է վիճարկվող նորմի՝ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածին ենթադրյալ հակասության վերաբերյալ դիմողի պնդմանը, ապա այդ առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

մատնանշած՝ մաքսային մարմինների կողմից քրեական եւ վարչական վարույթների միաժամանակյա իրականացման եւ այդ վարույթների արդյունքները մեկ ընդհանուր որոշմամբ ամփոփելու խնդիրն ինքնին ՀՀ մաքսային օրենսգրքի վիճարկվող նորմին չի առնչվում:

Բացի դրանից, 2009-2010թթ. իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ քրեական վարույթը եւ վարչական վարույթն իրականացվում են միմյանցից անջատ, եւ խնդրու առարկա զանցանքի համար պատասխանատվության վարույթը հարուցվում է քրեական գործով վարույթի ավարտից եւ քրեական գործ հարուցելու մերժելու մասին որոշում կայացնելուց հետո միայն:

Հաշվի առնելով, որ դիմողի մատնանշած գործելակերպը չի հանդիսանում ձեւավորված իրավակիրառական պրակտիկա՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմի՝ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածին ենթադրյալ հակասության վերաբերյալ պնդմամբ դիմողը բարձրացնում է ոչ թե իրավակիրառական պրակտիկայի իրավաչափության, այլ իր առնչությամբ կայացված «Քրեական գործի հարուցումը մերժելու եւ վարչական տույժ նշանակելու մասին» որոշման իրավաչափության հարց, ինչի լուծումը դուրս է սահմանադրական դատավարության շրջանակից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

### **ՆԱԽԱԳԱՀՈՂ**

### **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**12 հոկտեմբերի 2010 թվականի  
ՍՊԸ-920**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ «ՀԱՄԱՆԵՐՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ  
ՄՎԱԽ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի ՈՐՈՇՄԱՆ 8-ՐԴ ԿԵՏԻ 2-ՐԴ  
ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐճԵԼՈՒ ՄՎԱԽ»

**Քաղ. Երեւան**

**19 հոկտեմբերի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարույրյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիել-  
յանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող),  
Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝  
ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ նախագահի  
խորհրդական՝ Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ  
հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին»  
ՀՀ օրենքի 25 եւ 71-րդ հոդվածների,

դրնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայա-  
տանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դիմումների հիման վրա՝  
«Համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության  
Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ  
ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համա-  
պատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 11.06.2010թ. սահ-  
մանադրական դատարանում մուտքագրված թիվ 4-170 եւ 4-171 դիմում-  
ներն են:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Սահմանադրական դատարանը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով, իր՝ 2010թ. հունիսի 18-ի ՍԴԱՈ-67 աշխատակարգային որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի ՎԴ-1-Ե4684 և ՎԴ-1-Ե4685 դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը միավորել է՝ որոշելով դրանք քննել դատարանի նույն նիստում: Սահմանադրական դատարանի 2010թ. հուլիսի 20-ի ՍԴԱՈ-81 աշխատակարգային որոշմամբ գործի դատաքննությունը հետաձգվել է եւ նշանակվել 19.10.2010թ.:

Ուստիմնամափրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատաժանող կողմերի գրավոր բացատրությունները, դատական գործերը, հետազոտելով «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշումն ընդունվել է 2009 թվականի հունիսի 19-ին, ՀՀ Ազգային ժողովի նախագահի կողմից ստորագրվել՝ 2009 թվականի հունիսի 19-ին եւ ուժի մեջ մտել 2009 թվականի հունիսի 20-ին:

«Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշման վիճարկվող 8-րդ կետի երկրորդ ենթակետը սահմանում է. «Համաներումը չկիրառել ... այն անձանց նկատմամբ, որոնց հանդեպ նշանակված պաժմաշափր կրծատվել է, կամ որոնք դիտավորությամբ կատարած հանցագործության համար պատիժը կրելուց ազատվել են ներում շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով, կամ որոնց նկատմամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար քրեական հետապնդում չի հարուցվել, կամ քրեական գործերը կարճվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով, եւ կրկին կատարել են դիտավորյալ հանցագործություն, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հանցագործությունների համար դատվածությունը մարելուց հետո անցել է 10 տարի»:

2. Նախկինում համաներման հիմքով պատասխանատվությունից ազատված քաղաքացիներ Ա. Սիմոնյանի եւ Ա. Գալլաքյանի նկատմամբ համապատասխանաբար Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. հուլիսի 21-ի որոշմամբ եւ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. օգոստոսի 18-ի որոշմամբ կիրառվել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշումը: Գեղարքունիքի մարզի եւ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանների նշված որոշումները բողոքարկվել

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշումներով վերաքննիչ բողոքները մերժվել են, իսկ առաջին ատյանի դատարանների որոշումները թողնվել են օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի որոշումները ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից բողոքարկվել են ՀՀ վճռաբեկ դատարան:

Վերաքննիչ բողոքներում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը գտել է, որ ՀՀ Գեղաքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. հունիսի 21-ի եւ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. օգոստոսի 18-ի որոշումներն անհիմն են ու ենթակա են բեկանման, քանի որ դրանցով թույլ է տրվել դատական սխալ: Ծեշտվում է, որ Արմեն Սիմոնյանի նկատմամբ 01.09.2006թ. ՀՀ ԱԱԾ-ի կողմից որոշում է կայացվել համաներման ակտի հիմքով քրեական գործը կարձելու մասին, իսկ Արմեն Դավթյանի նկատմամբ նույն հիմքով 2003թ. հունվարի 15-ին ՀՀ ոստիկանության Ստեփանավանի քամինի կողմից քրեական գործի հարուցումը մերժվել է: Դատախազությունը գտել է, որ երկու դեպքում էլ առաջին ատյանի դատարաններն այս հանգանանքները հաշվի չեն առել եւ չեն կիրառել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված սահմանափակումները՝ համաներումը չկիրառելու հիմքերի առնչությամբ:

Համաձայն քրեական գործերի նյութերի՝ երկու դեպքում էլ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը նույնաբնույթ որոշում է կայացրել՝ մերժելով վերաքննիչ բողոքները՝ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «...անձի նկատմամբ դատվածությունը կարող է մարվել կամ հանվել միայն վերջինիս նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի /նեղադրական դատավճռի/ առկայության պայմանում»: Եվ քանի որ Արմեն Սիմոնյանի եւ Արմեն Դավթյանի նկատմամբ «...մեղադրական դատավճռի առկա չէ եւ դատվածությունը մարելու խնդիր առաջանալ չի կարող, որպեսզի հանգանանքը ...համաներումը չկիրառելու հիմք համարվել չի կարող, ենտեւաբար ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտը բեկանելու եւ փոփոխելու հիմքեր չկան»: Փաստորեն, առաջին եւ վերաքննիչ ատյաններում դատական պրակտիկան հիմք է ընդունել այն կանխադրույթը, որ եթե անձը դատվածություն չունի, ապա նրա նկատմամբ համաներման սահմանափակումներ չեն կարող լինել:

3. Դիմող կողմն առաջադրում է իրավական երկու խնդիր.

**նախ**՝ եթե «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի համատեքստում համաներում կիրառելու արդյունքում անձը դատվածություն չունի, ապա

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նրա նկատմամբ համաներում պետք է տարածվի, թե՞ ոչ, եւ արդյո՞ք այդ իրավանորմի ձեւակերպումը չի հակասում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա իրավական ակտերին ներկայացվող որոշակիության եւ կանխատեսելիության պահանջներին,

**Երկրորդ՝** նշված անձանց նկատմամբ համաներում չկիրառելու դեպում չի՝ խախտվի, արդյոք, ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածը, որի համաձայն՝ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև:

Դիմող կողմը «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթների առնչությամբ գտնում է, որ համաձայն առկա իրավակարգավորման՝ «... եթե անձը չի առարկում կիրառել համաներումը, որի արդյունքում նրա նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվում, կամ կարճվում է քրեական գործը եւ արդյունքում նա չի ունենում դատվածություն, ապա այդ անձը զրկվում է հետազայում իր նկատմամբ համաներում կիրառելու հնարավորությունից: Իսկ եթե նույն հանցանքը կատարած անձը համաներում կիրառելու դեմ առարկում է եւ դատապարտման արդյունքում ունենում է դատվածություն, ապա նրա դատվածությունը մարելուց 10 տարի անցնելուց հետո նրա նկատմամբ համաներումը կիրավում է»: Ըստ դիմոնդի՝ «Փաստորեն նույն դիտավորյալ հանցագործությունը կատարած անձինք, որոնց նկատմամբ նախկինում կիրավել է համաներում, կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելիս հայտնվում են անհավասար վիճակում, որի արդյունքում խախտվում է օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը»:

Դիմոդի կարծիքով՝ քննարկվող որոշման վիճարկվող դրույթներն առեւույթ հակասում են ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, քանի որ «Համաներում հայտարարելու մասին» որոշման 8-րդ կետի երկրորդ ենթակետի ձեւակերպման պայմաններում հնարավոր չէ ապահովել օրենքի առջեւ բոլորի հավասարությունը, իրավական ակտի որոշակիությունը եւ կանխատեսելիությունը: Դիմոդի պնդմամբ՝ համաներման չկիրառումն այն անձանց նկատմամբ, որոնց նկատմամբ դիտավորյալ հանցագործության համար քրեական հետապնդում չի իրականացվել, կամ քրեական գործերը կարճվել են ՀՀ ԱԺ համաներման մասին նախկին որոշումներով, կդիտվի որպես իրավական ակտի տարածական մեկնաբանում եւ կհանգեցնի նրանց սահմանադրական իրավունքների խախտման: Միաժամանակ դիմոդի գտնում է, որ «...դատվածությունը մարելուց հետո 10 տարի անցնելն անալոգիայով (համանմանությամբ) չի կարելի տարածել նաեւ այն անձանց վրա, որոնց նկատմամբ դիտավորյալ հանցագործության համար քրեական հետապնդում չի հարուցվել, կամ քրեական գործերը կարճվել են ՀՀ Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով, քանի որ դա ակն-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հայտորեն կիակասի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի պահանջման»: Ըստ դիմողի՝ դա կիակասի նաև նույն օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջման, որի համաձայն՝ անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են ֆիզիկական անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտավորություն կամ պատասխանատվություն:

4. Ըստ պատասխանողի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ դիտավորյալ հանցագործության համար քրեական հետապնդում չհարուցելու, կամ քրեական գործով վարույթը կարճելու դեպքում դատվածություն չի կարող առաջանալ, ուստիեւ՝ «Համաներում հայտարարելու մասին» որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված բացառությունն այս դեպքերի վրա չի կարող տարածվել:

Պատասխանողը գտնում է, որ հիմնավորված չէ նաև դիմողի մոտեցումն առ այն, որ վիճարկվող իրավանորմի ձեւակերպումը հակասում է իրավական ակտին ներկայացվող որոշակիության եւ կանխատեսելիության պահանջներին: Հանդիսանալով իրավական ակտերի պարտադիր հատկանիշ՝ իրավական որոշակիությանը ներկայացվող պահանջները չեն կարող նույն կերպ տարածվել նաև համաներման ակտի վրա, քանզի անձը հանցանք կատարելու պահին չի կարող եւ չպետք է կանխատեսի համաներման ակտի ընդունման հնարավորությունը: Անձի վարքագիծը հիմնվում է կանխատեսելի եւ խիստ որոշակի քրեական օրենսգրքի վրա, սակայն հանցագործությունը կատարելուց հետո նա չի կարող եւ չպետք է կանխատեսի համաներման հնարավորությունը:

Ինչ վերաբերում է վիճարկվող նորմի առնչակցությանը ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, ապա այս կապակցությամբ պատասխանողը գտնում է, որ համաներումն արտադատական ակտ է, որի կիրառման օրենսդրական իիմքերը նախատեսված չեն: Այսինքն՝ հարցի կարգավորումն ամրողությամբ բողնված է պետական իշխանության բարձրագույն մարմնի հայեցողությանը: Յուրաքանչյուր դեպքում օրենսդրի հայեցողությանն է բողնված ինչպես համաներում հայտարարելու նպատակահարմարության եւ հանցանք կատարած անձանց շրջանակի որոշումը, այնպես էլ համաներման կիրառման պայմանների եւ բացառությունների սահմանումը: Կոնկրետ հանցագործությունների եւ հանցանք կատարած անձանց շրջանակի, համաներման կիրառման պայմանների եւ բացառությունների սահմանումը չի կարող դիտվել ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածով երաշխավորված սահմանադրական սկզբունքի խախտում: ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածը խտրականությունն արգելում է դրանում նշված իիմքերից որևէ մեկով: Նշված հոդվածը, չսահմանափակվելով խտրականությունն արգելող իիմքերի սպառիչ ցանկով, խտրակա-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նույրունն արգելում է նաեւ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հիմքով: Դրանք վերաբերում են բացառապես անձնական կամ սոցիալական բնույթի հանգամանքներին, ուստիեւ՝ համաներման ակտի հիմքում ընկած չափանիշների վրա տարածվել չեն կարող:

Վերոնշյալ հիմնավորումներով պատասխանողը գտնում է, որ վիճարկող նորմը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի մտահոգությունը «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի առկա ձեւակերպման, հատկապես բացառության մասի, առնչությամբ՝ հիմնավոր է, եւ նման ձեւով այն կիրառելու պարագայում կարող է խտրական իրավիճակ ստեղծվել: Այս հարցում, ըստ գործի նյութերի, տարակարծություն չի արտահայտել նաեւ ՀՀ դատախազությունը: Վերջինիս հարցադրումն այն է, որ իրավական ակտով նախատեսված սահմանափակումները հաշվի չեն առնվել:

Միաժամանակ, ակնհայտ է, որ համաներման ակտն ընդունողի հայեցողական լիազորությունը կարող է իրացվել միայն իրավաչափ լուծումների ու ՀՀ Սահմանադրության հիմնարար սկզբունքների շրջանակներում՝ բացառելով նաեւ խտրականության որեւէ դրսեւորում: Վիճարկվող նորմն ունի հասցեատերերի հիմնականում երկու խումբ, այն է՝ անձինք, ում նկատմամբ համաներումը նախսկինում կիրառվել է նախաքննության փուլում, եւ անձինք, ում նկատմամբ համաներումը կիրառվել կամ ներում է շնորհվել մեղադրական դատավճռի կայացումից հետո: Վիճարկվող նորմի կարգավորման առարկայի տեսանկյունից այս երկու խումբ անձինք համանման իրավիճակում են, քանի որ նրանց համար ընդհանուր է այն իրավակարգավորումը, որը հիմք է հանդիսանում նրանց նկատմամբ համաներումը չկիրառելու համար՝ ելնելով արդեն մեկ անգամ պետության մարդասիրական վերաբերմունքից օգտված լինելու փաստից:

Սակայն նշյալ անձանց քրեական պատասխանատվությունից ազատելուն առնչող հարցերի իրավակարգավորման շրջանակներում նրանց նկատմամբ կարող է տարբերակված մոտեցում դրսեւորվել միայն օբյեկտիվ եւ ողջամիտ արդարացման դեպքում:

Վիճարկվող նորմում օրենսդրի վերաբերմունքն այդ անձանց նկատմամբ արտահայտվում է երկու հիմնական հարցի իրավակարգավորման առնչությամբ.

ա/ այն անձանց շրջանակը որոշելիս, ում նկատմամբ համաներման ակտը չի կիրառվում,

թ/ համաներումը չկիրառելու վերաբերյալ ընդհանուր կանոնից բացառություն սահմանելիս:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Սահմանադրական դատարանը գտնում է, որ համաներումը չկիրառելով ե՛ւ նախկինում նախարձնության փուլում համաներման հիմքով պատասխանատվությունից ազատված անձանց նկատմամբ, ե՛ւ համաներման կամ ներման հիմքով պատժից մասամբ կամ ամրողությամբ ազատված դատապարտյալների նկատմամբ՝ օրենսդիրը գործել է օրենքի առջեւ բոլորի հավասարության եւ խորականության արգելման սկզբունքին համահունչ՝ ապահովելով նույնական վերաբերմունք համանման իրավիճակում գտնվող անձանց առնչությամբ։ Մինչդեռ նույն հետեւողականությունը չի դրսեւորվել համաներումը չկիրառելու վերաբերյալ ընդհանուր կանոնից բացառությունը նման ձեւով սահմանելիս եւ «...որոնց նկատմամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար քրեական հետապնդում չի հարուցվել» դրույթը սույն իրավակարգավորման համատեքստում ներկայացնելիս։

Այսուհանդերձ, քննության առարկա գործով խնդիրը վերաբերում է կոնկրետ քրեական գործերի լուծմանը եւ դրանց շրջանակներում կիրառվելիք նորմի սահմանադրականության վերաբերյալ հարց առաջարելուն։ Այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի եւ 71-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքերով սույն գործի վարույթը ենթակա է կարճման՝ հետեւյալ պատճառաբանությամբ։

**առաջին՝ «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները՝ անկախ բացառության պարագայից, միանշանակ նախատեսում են, որ համաներում չի կարող կիրառվել այն անձանց նկատմամբ, «...որոնց նկատմամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար քրեական հետապնդում չի հարուցվել, կամ քրեական գործերը կարճվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով»։ Նույն կետով նախատեսված բացառությունը՝ «...բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հանցագործությունների համար դատվածությունը մարելուց հետո անցել է 10 տարի», նախ՝ չի վերաբերում այն անձանց, որոնց նկատմամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար քրեական հետապնդում չի հարուցվել, կամ քրեական գործերը կարճվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով, եւ ապա՝ չի վերաբերում նաև սահմանադրական դատարան վճռարեկ դատարանի դիմումների ներկայացման համար առիթ հանդիսացած քրեական գործերին, քանի որ բացառությունը հստակ ժամկետային սահմանափակում ունի։ Անկախ բովանդակային մեկնարանություններից, նշված քրեական գործերով Արմեն Սիմոնյանի նկատմամբ նախորդ համաներումը կիրառվել է վերջին համաներումից 3 տարի առաջ, իսկ Արմեն Դալլարյանի նկատմամբ՝ 6 տարի առաջ։ Հետեւաբար, քրեա-**

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

կան գործերի լուծումը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից պայմանավորված չէ նշված բացառությամբ,

**Երկրորդ՝** ՀՀ վճռաբեկ դատարանն ըստ էության վերացական վերահսկողության կարգով է բարձրացնում վեճի առարկա դրույթի սահմանադրականության հարցը, որի իրավասությունը նախատեսված չէ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով։ Վերջինիս 1-ին մասով սահմանված է, որ դատարանները կարող են սահմանադրական դատարան դիմել նորմատիվ ակտի այն դրույթմերի սահմանադրականության հարցով, «...որոնք ենթակա են կիրառման իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով», իսկ համաձայն նույն հոդվածի 5-րդ մասի՝ դիմողը պետք է հիմնավորի, որ «...այդ գործի լուծումը կարող է իրականացվել միայն վիճարկվող դրույթի կիրառմամբ»։ Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ գործերի լուծման առումով իրավական որեւէ անորոշություն առկա չէ։ Ինչպես նշվեց, «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետում հստակ սահմանված է, որ համաներում չի կարող կիրառվել այն անձանց նկատմամբ, «...որոնց նկատմամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար քրեական հետապնդում չի հարուցվել, կամ քրեական գործերը կարճվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով»։ Նման իրավիճակը դատվածության հանգամանքի հետ որեւէ առնչություն չունի։ Իսկ բացառության քննարկումն այս գործերի լուծման համատեքստում որեւէ գործնական իրավական հետեւանք ունենալ չի կարող, քանի որ այդ դրույթը թե՛ սահմանադրական եւ թե՛ հակասահմանադրական ճանաչելու դեպքում, միեւնույն է, «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետը կրացարի վերոնշյալ հիմքերով համաներման կիրառումը։ Ընդ որում, դատական պրակտիկայում չի կարող ենթադրվել, որ եթե համարժեք բացառություն նախատեսված չէ, ապա նախատեսված սահմանափակումը կիրառելի չէ, ինչը քննության առարկա քրեական գործերի շրջանակներում տեղ է գտնել առաջին ատյանի եւ վերաքննիչ դատարանների մոտեցումներում,

**Երրորդ՝** ՀՀ վճռաբեկ դատարանի առաջադրած 1-ին հարցի պատասխանը՝ «Եթե «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի համատեքստում համաներում կիրառելու արդյունքում անձը դատվածություն չունի, ապա նրա նկատմամբ համաներում պետք է տարածվի, թե՞ ոչ, եւ արդյո՞ք այդ իրավանորմի ձեւակերպումը չի հակասում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա իրավական ակտին ներկայացվող որոշակիության եւ կանխատեսելիության պահանջներին», կարող է տրվել իր իսկ իրավագործության շրջանակներում,

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

չորրորդ՝ բարձրացվում է այնպիսի իրավական ակտի նորմի սահմանադրականության խնդիր, որը, նորմատիվ ակտ լինելով հանդերձ, ունի էական լուրջ առանձնահատկություն՝ այն առնչվում է կոնկրետ անձանց ու կոնկրետ իրավիճակների, օբյեկտիվ իրավունքի պաշտպանության խնդիրներ չի լուծում։ Մինչդեռ կոնկրետ վերահսկողության շրջանակներում նորմի սահմանադրականության գնահատումն իմաստ ու նշանակություն է ստանում տվյալ կոնկրետ գործով սուրյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով։ Հետեւարար, դատական պրակտիկան չի կարող անտեսել տվյալ կոնկրետ գործին առնչվող այնպիսի հանգամանքներ, որոնք վերաբերում են համաներումը կիրառելու սահմանափակումներին (օրինակ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 2009թ. հուլիսի 21-ի որոշման հիմքում դրել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի եւ 12-րդ կետի 1-ին ենթակետի «բ» կետի դրույթները՝ առանց անդրադարձ կատարելու նույն որոշման 8-րդ կետին, եզրահանգելով, որ «...քացակայում են համաներումը կիրառելու սահմանափակումները»։ Այս հարցի շուրջ ծագած վեճն իրավական նորմի կիրառման եւ ոչ թե սահմանադրականության խնդիր է։

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60, 63, 64 եւ 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Ո Շ Ե Յ**։

1. «Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դիմումների հիման վրա՝ «Համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել։

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրավարակման պահից։

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19 հոկտեմբերի 2010 թվականի  
ՍՊ-921



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԱՊԵՏ ՀԱԶԻՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ 108-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

2 նոյեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյա-  
նի, Ֆ. Թոփյանի, Մ. Թոփովյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նա-  
զարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող Կ. Հաջիյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողո-  
վի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ նախագահի խորհրդական  
Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ  
հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին»  
ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դրսիրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Կա-  
րապետ Հաջիյանի դիմումի իման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավա-  
րության օրենսգրքի 108-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերա-  
բերյալ» գործը:

Գործի քննության առիթը Կ. Հաջիյանի՝ 21.05.2010թ. ՀՀ սահմանա-  
դրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի  
գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

Դիմողի կողմից ի սկզբանե վիճարկվում էր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Գործի վարույթի կասեցումը» վերտառությանը 16-րդ գլուխն ամբողջությամբ: ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի 08.06.2010թ. որոշմամբ դիմումը քննության է ընդունվել մասնակի՝ միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի մասով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Գործի վարույթը կասեցնելու եւ վերսկսելու կարգը» վերտառությամբ 108-րդ հոդվածը սահմանում է.

«1. Դատարանը, սույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, գործի վարույթը կասեցնելու կամ վերսկսելու մասին կայացնում է որոշում՝ եռօրյա ժամկետում պատշաճ ձեւով ուղարկելով գործին մասնակցող անձանց:

2. Գործի վարույթը կասեցնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան գործին մասնակցող անձանց կողմից այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

3. Գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը վերացվելու դեպքում գործի վարույթը համարվում է վերսկսված»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալների ընդհանուր իրավասության դատարանի 06.03.2009թ. որոշմամբ վարույթ է ընդունվել Արքահամ Հաջիյանի հայցադիմումն ընդդեմ Կարապետ, Սամվել, Գրիգոր Հաջիյանների՝ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքից բաժինն առանձնացնելու պահանջի մասին: Կ. Հաջիյանի միջնորդության հիման վրա նույն դատարանի՝ 06.03.2009թ. որոշմամբ նշված քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է՝ մինչեւ թիվ 14108208 քրեական գործով վերջնական որոշում կայացնելը: Երեւան քաղաքի Արարկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի նախագահի կողմից 23.03.2009թ. նշված քաղաքացիական գործը հանձնվել է նույն դատարանի մեկ այլ դատավորի՝ ըստ էության քննելու նպատակով: Երեւան քաղաքի Արարկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի /դատավոր Ս. Հովսեփյան/՝ 26.03.2009թ. որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ եւ

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

կասեցվել է, իսկ նոյն դատարանի՝ 25.08.2009թ. որոշմամբ հիշյալ քաղաքացիական գործի վարույթը վերսկսվել է:

Երեւան քաղաքի Արարկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 25.08.2009թ. «Քաղաքացիական գործի վարույթը վերսկսելու մասին» որոշման դեմ գործով պատասխանող Կարապետ Հաջիյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 16.10.2009թ. որոշմամբ բողոքը բավարարվել է եւ վերացվել Երեւան քաղաքի Արարկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 25.08.2009թ. «Քաղաքացիական գործի վարույթը վերսկսելու մասին» որոշումը:

Հիշյալ քաղաքացիական գործով հայցվոր Աբրահամ Հաջիյանի ներկայացուցիչի կողմից ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի վերոնշյալ որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 10.02.2010թ. որոշմամբ բավարարվել է վճռաբեկ բողոքը եւ վերացվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 16.10.2009թ. որոշումը՝ օրինական ուժ տալով Երեւան քաղաքի Արարկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 25.08.2009թ. «Քաղաքացիական գործի վարույթը վերսկսելու մասին» որոշմանը:

3. Դիմողի կողմից ներկայացված փաստարկները, ընդհանուր առմամբ, հանգում են նրան, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վիճարկվող իրավանորմի եւ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների միջև հակասությունը դրսեւրկում է նրանում, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումը հնարավորություն չի ընձեռում բողոքարկել «գործի վարույթը վերսկսելու մասին» առաջին ատյանի դատարանի որոշումը, որի հետեւանքով խախտվում է անձի իրավունքների վերականգնման հնարավորությունը:

Դիմողի պնդմամբ՝ օրենսդրի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ գլխում գործի վարույթը վերսկսելու մասին որոշման վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն չնախատեսելու արդյունքում առաջացած բացը խոչընդուն է հանդիսանում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման համար:

4. Պատասխանողը գտնելով, որ վիճարկվող նորմը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, նշում է, որ վերջնական դատական ակտերի բողոքարկման իրավունքի իրացումը վերադաս դատարանին հնարավորություն է տալիս վերջնական դատական ակտի հետ միաժամանակ ստուգել նաև միջանկյալ դատական ակտերի օրինականությունը: Բոլոր միջանկյալ դատական ակտերի բողոքարկման իրավունքի նախատեսումը կհակասեր մեկ գործով վարույթը մեկ մարմնի կողմից իրականացնելու սկզբունքին,

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կիանգեցներ դատավարական այնպիսի սկզբունքների խախտման, ինչպիսիք են ողջամիտ ժամկետում գործի քննությունը, դատարանի անկախությունը, ապացույցների ազատ գնահատումը, ներքին համոզման հիման վրա դատավճռի կայացումը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածը գործին մասնակցող անձանց իրավունք է վերապահում բողոքարկելու գործի վարույթը կասեցնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը: Այս դատական ակտի բողոքարկման իրավունքի վերապահումը դատավարության մասնակիցների՝ արդարադատության մատչելիության եւ դատական պաշտպանության իրավունքների, ողջամիտ ժամկետում իրենց գործը քննելու իրավունքի իրացման երաշխիք է: Մինչդեռ գործի վարույթը վերսկսելու մասին որոշումը ոչ միայն ինքնին չի խախտում ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները, այլև անհրաժեշտ նախապայման է այդ իրավունքների կենսագործման համար:

5. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատել միջանկյալ դատական ակտերի բողոքարկման իրավակարգավորմանն առնչվող իր՝ 2007թ. նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 եւ 2010թ. սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-918 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հաշվի առնելով օրենսդրի կողմից միջանկյալ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի հիմքում դրված ընդհանուր տրամարանությունը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2007թ. նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ, վերլուծելով միջանկյալ դատական ակտերի բողոքարկմանն առնչվող իրավանորմերը, արձանագրել է. «օրենսդրը հիմնականում բողոքարկելի է համարում այն բոլոր ակտերը, որոնք կարող են կասեցնել կամ խոչնդուտել դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, այն է՝ հայցադիմումի ընդունումը մերժելու, հայցադիմումը վերադարձնելու, հայցը կամ դիմումն առանց քննության բողնելու, գործի վարույթը կասեցնելու մասին որոշումները»: Սահմանադրական դատարանը միաժամանակ նկատել է, որ բողոքարկման ոչ ենթակա ակտերն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն կասեցնում գործի քննության հմարավորությունը եւ վերաբերում են գործի քննությունը կազմակերպելու՝ դատավորի հայեցողությանը: Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ 2007թ. նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ արտահայտած իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումներում «բողոքարկելի է», «բողոքարկման ենթակա չէ» արտահայտությունները վերաբերում են համապատասխանաբար՝ **անմիջականորեն** բողոքարկմանը եւ **անմիջականորեն** բողոքարկման ենթակա չինելուն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի նման մոտեցումն իր հերթին բխում է այն ողջամիտ տրամարանությունից, որ հարուցված, չկասեցված եւ շարունակվող վարույթի տրամարանական ավարտը գործն ըստ

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Էռության լուծող դատական ակտի կայացումն է, հետեւաբար՝ նման վարույթի շրջանակներում կայացված միջանկյալ ակտերը, անձի իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում, կարող են վիճարկվել գործն ըստ էռության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում։ Մինչդեռ կասեցված կամ ընդհատված վարույթի պարագայում նման հնարավորությունը բացառվում է եւ միջանկյալ դատական ակտի դեմ պաշտպանության միակ միջոցը դրա անմիջականորեն բողոքարկման հնարավորությունն է։

**6.ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2213 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էռության չլուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաբենության կարգով միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով եւ այլ օրենքներով նախատեսված դեպքերում։ Սահմանադրական դատարանը վկայակոչելով եւ զարգացնելով իր՝ 2010թ. սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-918 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ արձանագրում է, որ օրենսդրի սահմանած նման իրավակարգավորումը վերաբերում է ոչ թե միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությանն ընդհանրապես, այլ բողոքարկման կարգին։ Այսինքն՝ օրենսդրը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սահմանելով տվյալ միջանկյալ ակտի անմիջական բողոքարկման հնարավորություն՝ չի բացառում միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությունը գործն ըստ էռության լուծող դատական ակտերի բողոքարկման շրջանակներում։**

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրը տարբերակում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու հիմնական կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էռության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ «հետաձգված բողոքարկում», եւ միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկում։ Եթե վարույթի հետագա ընթացքը կասեցնող միջանկյալ դատական ակտի դեմ իրավական պաշտպանության միակ հնարավոր միջոցը դրա անմիջական բողոքարկումն է եւ ըստ այդմ օրենսդրից պահանջվում է նախատեսել տվյալ ակտի անմիջական բողոքարկման կարգ, ապա չկասեցված եւ շարունակվող վարույթի ընթացքում ընդունված միջանկյալ դատական ակտի բողոքարկման նշանակում է։

Հիմք ընդունելով վերոհիշյալը եւ հաշվի առնելով գործի քննությունը վերսկսելու մասին որոշումը՝ գործն ըստ էռության լուծող դատական ակտը բողոքարկելու շրջանակներում վիճարկելու օբյեկտիվ հնարավորությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այս որոշման անմիջական բողոքարկման կարգ չսահմանելմ օրենսդրի հայեցողության շրջանակներում է։ Սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ անհիմն է դիմողի այն պնդումը, որ վարույթը կասեցնելու որոշման անմիջական բողո-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

քարկման հնարավորությունը պետք է ենթադրի նաև վարույթը վերսկսելու մասին որոշման բողոքարկման նույն կարգի սահմանում: Նշված երկու որոշումները վարույթի ընթացքի շարունակականության ապահովման վրա ազդեցության առումով ունեն միմյանցից էապես տարբերվող բնույթ եւ օբյեկտիվորեն պայմանավորում են օրենսդրի ոչ նույնական մոտեցումը դրանց բողոքարկման կարգի առնչությամբ:

Սահմանադրական դատարանն անընդունելի է համարում դիմողի պնդումն առ այն, որ գործի վարույթը վերսկսելու մասին որոշման անբողոքարկելիության առումով առկա է **օրենքի բաց**, որը խոչընդոտում է դատական պաշտպանության իրավունքի իրացմանը: Սահմանադրական դատարանն իր առանձին որոշումներում անդրադառնալով «օրենքի բաց» հասկացության բովանդակությանը՝ նշել է, որ օրենքի բացն իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությունն է: Հիմք ընդունելով նշված սահմանումը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ խնդրո առարկա իրավակարգավորման առնչությամբ օրենքի բաց առկա չէ, քանի որ օրենսդրի հետեւողականորեն եւ ամբողջությամբ կանոնակարգել է միջանկյալ դատական ակտերի, այդ թվում՝ գործի վարույթը վերսկսելու մասին որոշման բողոքարկման հետ կապված իրավահարաբերությունները:

7. Սահմանադրական դատարանը գործի վարույթը վերսկսելու մասին որոշման անմիջականորեն բողոքարկման հնարավորության բացակայության իրավաչափությունը հարկ է համարում գնահատել նաև վիճարկվող իրավակարգավորմանը հետապնդվող իրավաչափ նպատակի լույսի ներքո: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ միջանկյալ դատական ակտերի «հետաձգված բողոքարկման», այն է՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում բողոքարկելու կարգի սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել գործի քննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու, դատաքննությունն անհարկի ձգձգումներից զերծ պահելու պահանջի երաշխավորումը, ինչպես նաև դատավարական գործընթացի արդյունավետության իրավաչափ նպատակ:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ, ելնելով վերոհիշյալ իրավաչափի նպատակների իրացման անհրաժեշտությունից, առկա է միջանկյալ դատական ակտերի անմիջական բողոքարկման հնարավորությունը նվազագույնի հասցնելու եւ դրանց «հետաձգված բողոքարկման» կարգին նախապատվություն տալու ընդհանուր միտում: Նման մոտեցումը խրախուսվում է նաև Եվրոպայի խորհրդի մարմինների կողմից: Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն այս խնդրի առնչությամբ 1995թ. փետրվարի 7-ին ընդունել է «Քաղաքացիական եւ տնտեսական գործերով բողոքարկման համակարգերի և ընթացակարգերի գործադրման

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

**ԵԽ ԳՈՐԾՈՒՄՆԵՐՅԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» R(95)5 հանձնարարականը, որի 1-ին կետի ա) ենթակետը սահմանում է. «Սկզբունքորեն պետք է գոյություն ունենա վերադաս դատարանի («երկլորդ ատյանի դատարան») կողմից ստորադաս դատարանի («առաջին ատյանի դատարան») կողմից կայացված ցանկացած որոշման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորություն»: Միաժամանակ նույն հանձնարարականի 3-րդ հոդվածում (կետ «d») ամրագրված է, որ պետությունները կարող են «... հետաձգել որոշակի միջանկյալ հարցերի բողոքարկման իրավունքի իրականացումը՝ մինչեւ հիմնական գործով գլխավոր բողոքի ներկայացումը»:**

8. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործի վարույթը վերսկսելու մասին որոշման «հետաձգված բողոքարկման» հնարավորության միջոցով ապահովում է այդ որոշումների իրավական վերահսկելիությունը, որ այդ որոշումների անմիջական բողոքարկման հնարավորություն չնախատեսելը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրված՝ միջանկյալ ակտերի բողոքարկման հիմքում ընկած ընդհանուր տրամաբանության շրջանակներում է եւ հետապնդում է իրավաչափ նպատակ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ գործի վարույթը վերսկսելու մասին որոշումն անմիջականորեն բողոքարկելու հնարավորության բացակայությունը չի խոչընդոտում անձին արդյունավետորեն իրացնել իր իրավունքների դատական պաշտպանության իրավունքն ըստ էության դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ գործի վարույթը վերսկսելու մասին որոշման անմիջականորեն բողոքարկելու հնարավորության բացակայությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրավարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՎԱՌ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**2 նոյեմբերի 2010 թվականի  
ՍՊԸ-922**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՈՎԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՍԳՐՔԻ 221-ՐԴ ՀՈԴՎԱՃԻ 7-ՐԴ ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ և

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

9 նոյեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոփյանի (գեկուցող), Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչ Ա. Խաչատրյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական՝ Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի եւ 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 68-րդ հոդվածների,

դոնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության մարդու

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

իրավունքների պաշտպանի՝ սահմանադրական դատարանում 11.06.2010թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթրերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող՝ 221-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է.

«Անհրաժեշտության դեպքում ճանաչումը կարող է կատարվել արտաքինով եւ հագուստով ճանաչվողին նման տարբեր անձանց լուսանկարներով»:

2. Ի հիմնավորումն վիճարկվող դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ իր դիրքորոշման՝ դիմողը նշում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի բացահայտում վիճարկվող նորմում ամրագրված «անհրաժեշտության դեպքում» բառակապակցության բովանդակությունը: Նման իրավական կարգավորումը, ըստ դիմողի, պայմաններ է ստեղծում իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող նորմի կամայական եւ տարածական մեկնաբանման եւ կիրառման համար: Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումները՝ դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավական նորմը՝ «անհրաժեշտության դեպքում» բառակապակցության մասով, չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին:

Դիմողը նաև վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանված նորմերը՝ եզրակացնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում նախքան ճանաչվողին նման տարբեր անձանց լուսանկարները ձեռք բերելը եւ օգտագործելն այդ լուսանկարներում պատկերված անձանց համաձայնությունն ստանալու որեւէ լճացակարգ, որպիսի օրենսդրական կարգավորման բացակայության պայմաններում կարող են խախտվել լուսանկարներում պատկերված անձանց անձնական կյանքը հարգելու իրավունքը եւ դրա ապահովմանն ուղղված՝ Սահմանադրությամբ ամրագրված երաշխիքները:

Դիմողի պմիմամբ՝ վիճարկվող դրույթը՝ վերոհիշյալ հիմնավորումներով, հակասում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերին եւ 23-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերին:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3. Պատասխանողը, առարկելով դիմողի փաստարկների դեմ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին հակասելու առնչությամբ գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասը, որն ամրագրում է լուսանկարներով ճանաշման ներկայացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի իրավունքը, որեւէ կերպ չի առնչվում իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքին կամ օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանվելու իրավունքին, ուստիեւ՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին դրա համապատասխանության վերաբերյալ հարց չի կարող բարձրացվել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին հակասելու առնչությամբ պատասխանողը, հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված երաշխիքներին, «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքին եւ, մասնավորապես, դրա 6-րդ հոդվածով սահմանված՝ անհատական տվյալների մշակման օրինականության հիմքերին, գտնում է, որ օրենքով սահմանված կարգի պահպանմամբ կատարված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված ճանաչումը չի խախտում ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով երաշխավորված անձնական կյանքի գաղտնիությունը, քանի որ ճանաշման ընթացքում օգտագործվող տեղեկությունների ձեռքբերման հնարավորությունը նախատեսված է օրենքով, այն հետապնդում է օրինական նպատակ, եւ տվյալ տեղեկությունների օգտագործումը չի հակասում դրանց հավաքման նպատակին:

Դիմումի ուսումնասիրության արդյունքներով պատասխանողը գտնում է նաև, որ դիմողն առավելապես վիճարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի հիմքում ընկած իրավական որոշակիության սկզբունքին: Այս առնչությամբ պատասխանողը, հղում կատարելով ՄԻԵԴ եւ սահմանադրական դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումներին, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասը չի կարող հակասել իրավական կանխատեսելիության սկզբունքին, քանի որ այն դատավարության մասնակիցների, մասնավորապես՝ վկայի, տուժողի, կասկածյալի կամ մեղադրյալի համար որեւէ վարքագիծ դրսեւորելու կամ որեւէ վարքագիծ դրսեւորելուց ծեռնպահ մնալու իրավունք կամ հնարավորություն չի նախատեսում:

Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ «օրենսգիրքը չի բացահայտում «անհրաժեշտության դեպքում» բառակա-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

պակցության բովանդակությունը՝ պատասխանողը, հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասում, 233-րդ հոդվածի 4-րդ մասում, 242-րդ հոդվածի 2-րդ մասում, 253-րդ հոդվածի 3-րդ մասում, 258-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված «անհրաժեշտության դեպքում» բառակապակցությանը, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը մի կողմից նանրանասն կարգավորելով քննչական գործողությունների կատարման դատավարական կարգը, իմացերատիվ կերպով արգելել է դրանից որեւէ շեղում, սակայն մյուս կողմից՝ ելնելով տակտիկական նկատառումներից, միեւնույն կարգավորման շրջանակներում վարույթն իրականացնող մարմնին ընձեռել է հայեցողական ազատություն:

4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի կողմից վիճարկվող իրավանորմով սահմանված՝ «անձին լուսանկարներով ճանաչման ներկայացնելը» քննչական գործողությունը հանդիսանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ «անձին ճանաչման ներկայացնելը» քննչական գործողության տարատեսակ՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավանորմը դիտարկել օրենսգրքի՝ «անձին ճանաչման ներկայացնելը» քննչական գործողության իրավական կարգավորմանն առնչվող դատավարական նորմերի համատեքստում:

«Անձին ճանաչման ներկայացնելը» քննչական գործողության իրավական բովանդակությունն այն է, որ այդ քննչական գործողության միջոցով բացահայտվում է ճանաչողի, այն է՝ վկայի, տուժողի, կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձանց կողմից նախկինում տեղի ունեցած տեսողական կամ այլ եղանակով ընկալման արդյունքում վերջիններիս գիտակցության մեջ արտացոլված որոշակի հատկանիշների, ինչպես, օրինակ՝ անձի արտաքին տեսքը, ձայնը, շարժուձեւը, եւ դրանց՝ ճանաչման ներկայացված սուբյեկտի հատկանիշների հետ մտովի համադրման արդյունքում այդ հատկանիշների նույնականությունը, նմանությունը կամ տարբերությունը։ Այսինքն՝ տվյալ պարագայում հիմնական շեշտադրումը կատարվում է անձի հոգեբանական ընկալունակության վրա։ Օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախքան որեւէ անձի՝ վկային, տուժողին, կասկածյալին կամ մեղադրյալին ճանաչման ներկայացնելը, քննիչը պարտավոր է հարցաքննել ճանաչողին անձի արտաքին տեսքի, նշանների եւ այն հանգամանքների մասին, որոնցում նա տեսել է այդ անձին, ինչը հանդիսանում է հիշյալ քննչական գործողության անցկացման օրինականության նախապայմաններից մեկը։ Ի լրումն վերոնշյալի՝ օրենսգրքի 221-րդ հոդվածի 6-րդ մասն ամրագրում է ճանաչողի կողմից հայտնվող տեղեկություններին ներկայացվող որոշակի-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ության եւ հստակության պահանջ, ըստ որի՝ ճանաչում չի կատարվում, իսկ կատարվածը չի կարող ճանաչվել հիմնավորված, եթե ճանաչողը նշել է այնպիսի հատկանիշներ, որոնք իրենց անորոշության պատճառով բավարար չեն ճանաչվողի անձի նույնացման համար: Օրենսգրքի 221-րդ հոդվածը կարգավորում է նաև անձանց ճանաչման ներկայացնելու դատավարական ընթացակարգը՝ սահմանելով ինչպես գործողությունների հաջորդականությունը, այնպես էլ մասնակիցների շրջանակը: Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճանաչման ներկայացնելուց հետո կազմվում է արձանագրություն, որում, ի թիվս այլնի, նշվում են ճանաչման ներկայացված անձանց տվյալները՝ մանրամասնորեն շարադրելով այն հատկանիշները, որոնցով կատարվել է ճանաչումը: Ճանաչման ներկայացնելուն մասնակցած անձինք իրավունք ունեն պահանջնելու արձանագրության մեջ մտցնել իրենց դիտողությունները:

Վերոհիշյալ իրավանորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ խնդրո առարկա քննչական գործողության իրականացման ամենակարեւոր եւ իր բնույթով պարտադիր պայմանը՝ համապատասխան դատավարական կարգավիճակ ունեցող՝ քրեադատավարական հարաբերությունների մասնակցի առկայությունն է՝ որպես ճանաչվող: Այսինքն՝ անձին ճանաչման ներկայացնելը հանդիսանում է հստակ անձնավորված եւ հասցեավորված քննչական գործողություն, որը կարող է իրականացվել միայն համապատասխան դատավարական կարգավիճակ ունեցող սուրյեկտի առկայության դեպքում եւ վերջինիս պարտադիր մասնակցությամբ:

5. Օրենսդիրը հնարավոր է համարում անձին ճանաչման ներկայացնել նաև լուսանկարներով, որոնցում պատկերված անձինք պետք է իրենց արտաքին հատկանիշներով հնարավորին չափ նման լինեն ճանաչման ենթակա սուրյեկտին: Միաժամանակ, անձին լուսանկարներով ճանաչման ներկայացնելու համար օրենսդիրը որպես նախապայման է դիտարկում համապատասխան «անհրաժեշտության» առկայությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴ-747, ՍԴ-780 եւ ՍԴ-919 որոշումներում իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող լինել ինքնարավ: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Վերահաստատելով այդ իրավական դիրքորոշումը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ «անհրաժեշտության դեպքում» հասկացությունը ենթակա է գնահատման՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, ենթելով կոնկրետ հանգամանքներից, վարույթն իրականացնող մարմինը գնահատում է անհրաժեշտության առկայությունը: Այն պետք է լինի իրավաչափ եւ համաշափ հետապնդվող օրինական նպատակին:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վերոհիշյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավանորմում ամրագրված՝ «անհրաժեշտության դեպքում» բառակապակցության իրավական բովանդակությունն իրավակիրառողի կողմից պետք է մեկնաբանվի՝ ելակետ ընդունելով քրեական գործի քննության ընթացքում տարբեր փաստական հանգամանքների ուժով համապատասխան անձին ընդիհանուր կարգով ճանաչման ներկայացնելու անհնարինության պայմաններում վերջինիս վերաբերյալ ստացված տեղեկատվության հավաստիությունն ստուգելու անհրաժեշտությունը։ Վերջինս պետք է պատշաճ ձեւով հիմնավորվի՝ կամայականությունների տեղիք չտալու համար։

6. Ինչ վերաբերում է դիմողի այն հարցադրմանը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում նախքան ճանաչվողին նման տարբեր անձանց լուսանկարները ձեռք բերելը եւ օգտագործելն այդ լուսանկարներում պատկերված անձանց համաձայնությունն ստանալու որեւէ իրավական ընթացակարգ, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ հարցադրմամբ առաջադրվում է վիճարկվող դրույթի իրավական բովանդակությամբ չպայմանավորված օրենսդրական բացի խնդիր։

Սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-864 եւ ՍԴՈ-914 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների միջոցով ձեւավորել է այն չափանիշները, որոնք հիմք են հանդիսանում օրենքի բացի խնդիրը սահմանադրական դատարանի քննության առարկա համարելու համար։ Մասնավորապես, ՍԴՈ-864 որոշման մեջ ամրագրված է. «... սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»։ ՍԴՈ-914 որոշման մեջ ամրագրված է. «...օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, եթք օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձեւավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, եթք առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը»։

Հիմք ընդունելով նշված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել այն իրավական երաշխիքների առկայությունը, որոնք բույլ են տալիս խնդրու առարկա քննչա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կան գործողությունը կատարելու գործընթացում ապահովելու հարգանքը ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով երաշխավորված՝ անձի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի հանդեպ:

7. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002 թվականի հոկտեմբերի 8-ին ընդունվել եւ 2003թ. փետրվարի 14-ին ուժի մեջ է մտել «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքը, որի կարգավորման առարկան են հանդիսանում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային իիմնարկների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անհատական տվյալների մշակմանն առնչվող հարաբերությունները:

Հիշյալ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ **անհատական տվյալ** է հանդիսանում ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը: Նույն հոդվածի 2-րդ պարբերությունը սահմանում է, որ **անհատական տվյալների մշակում** է համարվում ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է անհատական տվյալների հավաքման, մուտքագրման, համակարգման, վերափոխման, փոխանցման, պահպանման, ուղղման, ուղեփակման, ոչնչացման եւ օգտագործման հետ: Նույն հոդվածի չորրորդ պարբերության համաձայն՝ **տվյալների սուբյեկտ** է համարվում այն ֆիզիկական անձը, ում վերաբերում են անհատական տվյալները:

Վերոհիշյալ նորմերի վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանը գտնում է, որ **անձի լուսանկարը** հանդիսանում է նրա ինքնությունը նույնականացնելու հնարավորություն ընձեռող անհատական տվյալի աղբյուր, իսկ անձի **լուսանկարահանումը՝** նրա վերաբերյալ անհատական տվյալների հավաքում, եւ այդ տեսանկյունից՝ որպես անհատական տվյալների մշակման ամրողական գործընթացի բաղկացուցիչ մաս:

«Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը, որպես անհատական տվյալների մշակման **օրինականության նախապայման**, ի թիվս այլնի, ամրագրում է անհատական տվյալների մշակումը տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կատարելու պահանջը: Հիշյալ հոդվածի 2-րդ մասը, կանոնակարգելով **տվյալների սուբյեկտի համաձայնությունը ստանալու իրավական ընթացակարգը**, ամրագրում է, որ տվյալների սուբյեկտի համաձայնությունն անհատական տվյալների մշակման միանշանակ, ցանկացած ձեւով արտահայտված կամավոր թույլտվությունն է: Տվյալների սուբյեկտը յուրաքանչյուր պահի կարող է համաձայնությունը գրավոր ձեւով հետ կանչել: Համաձայնության հետկանչը հետադարձ ուժ չունի:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

«Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ օրենսդրությունը, ի մասնավորի՝ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի նորմերը դիմողի կողմից վկայակոչված օրենսդրական բացի պայմաններում ապահովում են այն իրավական երաշխիքների առկայությունը, որոնք բույլ են տալիս խնդրությունը կատարելու գործողությունը կատարելու գործընթացում ապահովել հարգանքը ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով երաշխավորված անձի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի հանդեպ:

Միաժամանակ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ օրենսդրությամբ երաշխավորված է նաև անձի իրավական պաշտպանության, այդ բարում՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը բոլոր այն դեպքերում, երբ լուսանկարներն ստացվել են առանց դրանցում պատկերված անձանց համաձայնության:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Յ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**9 նոյեմբերի 2010 թվականի  
ՍՊԸ-923**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԹԱՂԵՎՈՍ ԴԵՐՄԵՆՁՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 165-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝**

**Քաղ. Երեւան**

**16 նոյեմբերի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող Թ. Դերմենջյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Զաղաքացի Թաղեւս Դերմենջյանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Թ. Դերմենջյանի՝ 10.06.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Վարչական իրավախախումնե-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թի վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաբղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Յ.**

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքն ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին եւ ուժի մեջ մտել 1986 թվականի հունիսի 1-ից:

Դիմողն ի սկզբանե վիճարկել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1-7-րդ հոդվածների եւ 165-րդ հոդվածի սահմանադրականությունը: Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմի 22.06.2010թ. ՍԴԴԿՈ/2-21 որոշմամբ դիմումի քննության ընդունումն օրենսգրքի 1-7-րդ հոդվածների մասով մերժվել է, դիմումը քննության է ընդունվել միայն օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասի մասով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների եւ իրավական այլ ակտերի խախտումները» վերտառությամբ վիճարկվող 165-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետությունում ապրանքների իրացման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման փողային գնանշումները, ինչպես նաև այդ գործարքների դիմաց դրամական (փողային) վճարումները Հայաստանի Հանրապետության դրամով իրականացնելու պահանջը չկատարելը»

առաջացնում են տուգանքի նշանակում՝ խախտման գումարի չափով, բայց ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, ընդ որում՝ յուրաքանչյուր պահանջի մի քանի խախտումներ թույլ տալու դեպքում յուրաքանչյուր խախտում համարվում է մեկ խախտում»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 08.05.2009թ. հանձնարարգրի հիման վրա հարկային տեսուչները «Ռաֆայել 1» Ա/Կ-ում անցկացրել են «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի եւ արժութային հարաբերությունները կանոնակարգող այլ իրավական ակտերի պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում՝ 11.05.2009թ. կազմված ստուգման ակտում արձանագրվել է «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների խախտում: Նշված ակտի հիման վրա դիմողը ենթարկվել է վարչական պատասխանատվության ըստ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի: Դիմողի նկատմամբ նշանակվել է

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տուգանք՝ նշված հոդվածի 1-ին մասով սահմանված նվազագույն չափով: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի հարկային տեսչությունը դիմել է ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Ո-աֆայել 1» Ա/Կ-ի՝ Թ. Դերմենջյանից տուգանքը բռնագանձելու պահանջով: Թ. Դերմենջյանը ներկայացրել է հակլնդրեմ հայց՝ վարչական գործով պատասխանողի 26.05.2009թ. վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը եւ վերոհիշյալ ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջով: ՀՀ վարչական դատարանի 20.10.2009թ. վճռով հայցը մերժվել է, իսկ Թ. Դերմենջյանի հակլնդրեմ հայցը՝ բավարարվել: Պատասխանող ՀՀ ԿՍ ՊԵԿ Սպանդարյանի հարկային տեսչությունը 11.11.2009թ. ներկայացրել է վճռաբեկ բողոք ընդդեմ վարչական դատարանի նշված վճռի: ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 22.04.2010թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարել է ամրողությամբ, բեկանել է ՀՀ վարչական դատարանի բողոքարկված վճռը, փոփոխել է այն եւ որոշել հօգուտ ՀՀ պետական բյուջեի Թ. Դերմենջյանից բռնագանձել նշանակված տուգանքը:

3. Օրենսգրի 165-րդ հոդվածի 1-ին մասի ենթադրյալ հակասահմանադրականության առնչությամբ դիմողը հիմնականում առաջադրում է այդ հոդվածով սահմանված տուգանքի մեծության անհամաշափության խնդիր՝ գտնելով, որ այդ հոդվածի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկված անձը կրում է իր զանցանքին «ոչ համաշափ պատիճ»: Վիճարկվող նորմով սահմանված տուգանքի չափի անհամաշափությունը դիմողը փորձում է փաստարկել ՀՀ քրեական օրենսգրի 51-րդ հոդվածով սահմանված տուգանքի չափերի եւ վիճարկվող նորմով սահմանված տուգանքի չափի միջեւ, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրի նշված հոդվածով սահմանված՝ տուգանքը վճարելու կարգի եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրի 305-րդ հոդվածով սահմանված՝ 165-րդ հոդվածով նախատեսված տուգանքը վճարելու կարգի միջեւ համեմատության միջոցով:

4. Պատասխանողը գտնում է, որ դիմողն առավելապես բարձրացնում է առկա իրավակարգավորման նպատակահարմարության եւ իր նկատմամբ կայացված վարչական ակտի իրավաչափության հարց:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրի 165-րդ հոդվածն իրավակիրառողի կողմից ընկալվում եւ մեկնարանվում է միատեսակ, տարամեկնարանությունների տեղիք չի տալիս, որոշակի է իրավակիրառողի եւ իրավադրույթի հասցեատերերի համար:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող հոդվածի հակասահմանադրականության առնչությամբ դիմողն իր դիմումը հիմնավորում է բացառապես

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

իրավակարգավորման նպատակահարմարության վերաբերյալ իր մոտեցումները ներկայացնելով՝ որեւէ կերպ չիմնավորելով վիճարկվող նորմի եւ ՀՀ Սահմանադրության միջեւ առկա որեւէ հակասություն:

Պատասխանողը գտնելով, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտման եւ վիճարկվող դրույթի միջեւ որեւէ պատճառահետեւանքային կապ առկա չէ, վկայակոչելով ՀՀ Սահմանադրական դատարանի 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 եւ 23.03.2010թ. ՍԴՈ-870 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ միջնորդել է գործի վարույթը կարճել:

5. Սահմանադրական դատարանն իրավաբանական պատասխանատվության, այդ թվում՝ վարչական պատասխանատվության հիմքում ընկած համաշափության սահմանադրական սկզբունքի բովանդակությանն անդրադարձել է իր՝ 2010թ. հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-920 որոշման մեջ: Մասնավորապես, անդրադառնալով պատասխանատվության տեսակները, չափերն ու հարկադրանքի միջոցները սահմանելու՝ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված լիազորությունն իրականացնելիս օրենսդրի հայեցողության շրջանակներին՝ սահմանադրական դատարանը նշել է, որ՝ օրենսդրի հայեցողության ազատության սահմանները նախանշված են, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ եւ 43-րդ հոդվածներում: Սահմանադրության նշված հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ դրանց իրավական բովանդակությունը, ի թիվս այլոց, հանգում է նրան, որ հանրային իշխանության իրականացումը նախեւառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ հասարակական հարաբերությունների կարգավորման համաշափության ընդհանուր սկզբունքով: Այս սկզբունքը հանդիսանում է նաեւ իրավաբանական պատասխանատվության, այդ թվում՝ վարչական պատասխանատվության հիմքում ընկած կարեւորագույն սկզբունքներից մեկը...: Սահմանադրական դատարանը, անդրադառնալով համաշափության սկզբունքի բովանդակությանը, նաեւ նշել է, որ «համաշափության սկզբունքն առաջին հերթին պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի եւ պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջեւ»:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումներին համապատասխան՝ սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը փաստելով, որ դիմողը հիմնականում վարչական ակտի իրավաչափության հարց է բարձրացնում, այդուհանդերձ, անհրաժեշտ է համարում պարզել այն իրավաչափ նպատակը, որը հետապնդվում է վիճարկվող նորմով նախատեսված զանցանքի համար սահմանված պատասխանատվությամբ, քանի որ վերջինս կարեւոր է նաեւ օրենսդրության հետագա բարեփոխումների տեսանկյունից:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

6. Հայաստանի Հանրապետությունում արժութային հարաբերությունները կարգավորող հիմնադրույթներն ամրագրված են մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 142-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում Հայաստանի Հանրապետության դրամն անվանական արժեքով պարտադիր ընդունման համար օրինական վճարամիջոց է: Նույն օրենսգրքի 356-րդ հոդվածը պարտավորեցնում է դրամական պարտավորություններն արտահայտել Հայաստանի Հանրապետության դրամով:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004թ. նոյեմբերի 24-ին ընդունված՝ «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը կանոնակարգում է Հայաստանի Հանրապետության արժույթով գործարքների իրականացումը: Այդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման դրամական (փողային) գնանշումներն իրականացվում են, Հայաստանի Հանրապետության տարածքում ռեզիլիտների միջեւ ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման դիմաց փողային վճարումներն ընդունվում են իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով, բացառությամբ նշված օրենքով նախատեսված դեպքերի: Հիշյալ օրենքի 10-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում դրանում նշված սուրյեկտների կողմից արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների եւ դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջների խախտման համար, իսկ, այդ սուրյեկտներից բացի, ռեզիլիտն կամ ոչ ռեզիլիտն անձանց կողմից արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների եւ դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջների խախտումների առնչությամբ հղում է կատարում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքին:

Վերոհիշյալ իրավանորմերի եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի համադրված վերլուծությունը վկայում է, որ օրենսգրքի 165-րդ հոդվածի հիմնական նպատակն է ստեղծել իրավական երաշխիք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոհիշյալ դրույթների եւ «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում իրականացվող արժութային քաղաքականության կատարումն ապահովելու համար:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող նորմով սահմանված վարչական պատասխանատվությունն իրավաչափ նպատակ է հետապնդում՝ ապահովել Հայաստանի Հանրապետության տարածքում ՀՀ ազգային արժույթի՝ դրամի կայունու-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թյունը եւ ձեւավորել դրամի նկատմամբ վստահություն ներքին արժութային շուկայում:

Ազգային արժույթի առկայությունը պետական ինքնիշխանության հատկանիշներից մեկն է, իսկ ազգային արժույթի կայունության ապահովածությունը՝ պետական իշխանության արդյունավետության չափանիշներից մեկը։ Հիշյալ նպատակին պետությունը հասնում է իրականացվող դրամավարկային քաղաքականության եւ դրա շրջանակներում իրականացվող արժութային կարգավորման, այսինքն՝ արժույթով կատարվող գործարքների պայմանների եւ կարգի սահմանմամբ եւ այդ կարգի պահպանման նկատմամբ հսկողություն եւ վերահսկողություն իրականացնելու միջոցով։ Արժութային կարգավորման նպատակն է ապահովել ոչ միայն տնտեսական աճ, այլև պետության տնտեսական անվտանգությունը։

Հաշվի առնելով վերոշարադրյալը եւ ելնելով պաշտպանվող հանրային շահի կարեւորությունից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմով սահմանված տուգանքի նվազագույն չափի եւ դրանով հետապնդվող իրավաչափ նպատակի միջեւ օրենսդրի հայեցողական լիազորությունների շրջանակներում սահմանված հավասարակշռությունը սահմանադրականության խնդիր չի առաջացնում։

Ինչ վերաբերում է դիմողի կողմից՝ վիճարկվող դրույթով սահմանված տուգանքի մեծության անհամաշափությունը ՀՀ քրեական օրենսդրի 51-րդ հոդվածով սահմանված տուգանքի վճարման կարգի ու տուգանքի չափերի եւ վիճարկվող նորմով սահմանված տուգանքի չափի եւ օրենսդրի 305-րդ հոդվածով սահմանված՝ տուգանք վճարելու կարգի միջեւ համեմատության միջոցով փաստարկելու՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի մատնանշած հանգամանքները վերաբերելի չեն՝ վիճարկվող նորմով սահմանված տուգանքի մեծության համաշափությունը գնահատելու տեսանկյունից։ Քրեական օրենսդրությամբ նախատեսված պատժաչափերն ունեն վարչական պատասխանատվությունից որակապես տարբերվող նպատակներ եւ առաջացնում են իրավական տարբեր հետեւանքներ։

7. Իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած համաշափության սահմանադրական սկզբունքը պահանջում է նաեւ, որ սահմանված պատասխանատվության չափը լինի տարբերակված՝ ելնելով կատարված արարքի ծանրությունից, հանրային վտանգավորության աստիճանից, պատճառված վնասից, մեղքի աստիճանից եւ այլ էական հանգամանքներից։ Լստ այդմ, օրենսդրից պահանջվում է սահմանել պատասխանատվության այնպիսի իրավակարգավորում, որը պատասխանատվության ենթարկող իրավասու մարմնին հնարավորություն ընձեռի որոշելու նշանակվող պատասխանատվության կոնկրետ չափը՝ ելնելով զանցանքի բնույթից եւ լրջությունից։

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վիճարկվող դրույթի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրն իր հայեցողության շրջանակներում պատասխանատվության չափի տարրերակման պահանջին համապատասխան սահմանել է տուգանքի նվազագույն չափ՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, եւ առավելագույն չափ՝ խախտման գումարի չափով։ Այդպիսով՝ օրենսդիրը տարրերակել է պատասխանատվության չափը՝ իրավակիրառողին հնարավորություն տալով ըստ արարքի վտանգավորության աստիճանի եւ պատճառված վնասի չափի՝ ապահովել համաշափություն կատարված արարքի եւ նշանակվող տուգանքի չափի միջեւ այն դեպքում, երբ խախտման գումարը գերազանցում է օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի նվազագույն չափը։

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**։

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը։

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից։

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16 նոյեմբերի 2010 թվականի  
ՍՊԸ-924



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՒ 10-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ-ԱՌԱՋԻՆ ՓՈԽ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ և

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երեւան

19 նոյեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուզյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի օգոստոսի 10-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Երեւանի մետրոպոլիտենի վերակառուցում-առաջին փուլ» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ 27.10.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանս-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր քացատրությունը, հետազոտելով քննության առարկա պայմանագիրը և գործում առկա մյուս փաստաթոթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Պայմանագիրն ստորագրվել է 2010 թվականի օգոստոսի 10-ին Երեւանում՝ Երեւանի մետրոպոլիտենի վերակառուցման ժախսերի ֆինանսավորման մի մասն իրականացնելու նպատակով:

2. Ներդրումային ծրագիրը բաղկացած է երկու փուլից: Առաջին փուլն ուղղված է վերականգնման հրատապ կարիքներին, իսկ երկրորդ փուլը ներառում է մետրոյի բունելներում ջրի մուտքի խնդրի վերջնական շտկումը և անվտանգությանը վերաբերող այլ բարեկարգումները: Ծրագրի հիմնական ներդրումների ընդհանուր արժեքը գնահատվել է երեսուն միլիոն եվրո, իսկ ներդրումների ամբողջական արժեքը (ներառյալ չնախատեսված տեխնիկական ծախսերը, գնաճը և վերակառուցման ընթացքում գոյացած տոկոսները) գնահատվել է երեսունչորս միլիոն վեց հարյուր հազար եվրո:

3. Պայմանագրի համաձայն Բանկը որոշում է կայացրել ծրագրի առաջին փուլի ֆինանսավորման նպատակով տրամադրել հինգ միլիոն եվրո գումարի չափով վարկ, որը հատկացվելու է հինգ տրանշով, յուրաքանչյուր տրանշի գումարը նվազագույնը կկազմի մեկ միլիոն եվրո:

4. Պայմանագրի անբաժանելի մաս են հանդիսանում երեք հավելված եւ լրացումը, որոնցում սահմանված են տեխնիկական նկարագիրը, սահմանումները, վճարման առաջարկի ընդունման ձեւերը, տեղեկանքի ձեւը:

5. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- Բանկին վճարել յոթանասունինգ հազար եվրո գումարի չափով կանխավճար՝ պայմանագրի շրջանակներում վարկի հաստատման համար, ինչպես նաև վճարել պարտավորության վճար, որը կհաշվարկվի վարկի չառհանված եւ չմարված օրական մնացորդի վրա՝ տարեկան քառամյակ հարյուրերորդական տոկոս տոկոսադրույթով,
- յուրաքանչյուր մասնավճարի տոկոսը, հետվճարումները եւ այլ վճարումները կատարել եվրոյով, ինչպես նաև ցանկացած այլ վճարում կատարել Բանկի կողմից սահմանված արժույթով՝ հաշվի առնելով այն ծախսը, որը պետք է փոխհատուցվի տվյալ վճարման միջոցով,
- յուրաքանչյուր մասնավճարի չվճարված մնացորդի դիմաց վճարել տոկոս լողացող դրույթաշափով՝ կիսամյակը մեկ անգամ՝ պայմանագրում ամրագրված վճարման առաջարկին համապատասխան, հետ վճարել մասնավճարները՝ մարման ժամանակացույցի պայմաններին համապատասխան,
- եթե այլ բան չի նշվել, ապա տոկոսները, փոխհատուցման եւ մայր գու-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- մարից տարբերվող մյուս գումարները վճարել Բանկի պահանջն ստանալու օրվանից յոթ օրվա ընթացքում,
- ապահովել, որ Բանկը ժամանակին տեղեկացվի այն մասին, որ տեղի է ունեցել կամ հնարավոր է վերահսկողության որեւէ փոփոխություն, օրենքի փոփոխություն,
  - օգտագործել փոխառության միջոցները բացառապես ծրագրի առաջին փուլի իրականացման համար,
  - եթե ծրագրի առաջին փուլի ընդհանուր արժեքը կգերազանցի սահմանված գումարը, առանց Բանկին դիմելու ձեռք բերել միջոցներ՝ գերծախսը վճարելու համար եւ այդ մասին անհապաղ տեղյակ պահել Բանկին,
  - ապահովել ծրագրի մաս կազմող ողջ սեփականության պահպանումը, վերանորոգումը, վերակառուցումը եւ բարձացումը,
  - ապահովագրել ծրագրի մաս կազմող բոլոր աշխատանքները եւ սեփականությունն առաջնակարգ ապահովագրական ընկերությունների միջոցով,
  - իրականացնել ծրագիրը շրջակա միջավայրի մասին օրենքին համապատասխան,
  - համագործակցել խորհրդատվական ընկերությունների հետ տեխնիկական իրագործելիության ուսումնասիրությունը պատրաստելիս,
  - ապահովել Երեւանի մետրոպոլիտենում ուղեվարձի բարձրացումը (որը գործնականում ներպետական իրավակարգավորման խնդիր է),
  - ստեղծել եւ պահպանել ներքին ընթացակարգեր ու վերահսկողություն,
  - ապահովել, որ վճարման իր պարտականությունները պայմանագրի շրջանակներում դասակարգվեն պարտքի՝ ցանկացած փաստաթղթով ստանձնած, առկա եւ հետագա բոլոր չերաշխավիրված այլ պարտավորությունների վճարման իրավունքին առնվազն համարժեք,
  - ըստ Բանկի պահանջի՝ Բանկին տրամադրել համարժեք երաշխիքներ պայմանագրով սահմանված իր պարտավորությունների կատարման համար,
  - բույլատրել Բանկի նշանակած անձանց, որոնց կարող են ուղեկցել նաև ցանկացած այլ իրավասու մարմնի կամ կառույցի ներկայացուցիչները, այցելել ծրագիրը կազմող վայրերը, աշխատանքների եւ սարքավորումների տեղակայման վայրերը, ըստ ցանկության անցկացնել ստուգումներ եւ ապահովել վերջիններիս անհրաժեշտ աջակցություն,
  - վճարել բոլոր հարկերը, տուրքերը, վճարները եւ այլ ցանկացած բնույթի գանձումները, ներառյալ դրոշմանիշի տուրքը եւ գրանցման վճարները, ինչպես նաև վճարել պայմանագրով վճարման ենթակա նայր գումարը, տոկոսը, փոխառությունը եւ այլ վճարներ՝ առանց հանելու պետական կամ տեղական տուրքերը, պայմանով, որ եթե ստիպված է

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կատարելու այդ հանումը, ապա այն կավելանա Բանկին վճարման ենթակա գումարին:

6. Պայմանագրով սահմանված են նաև վճարումների հետաձգման կարգն ու հիմքերը, հետաձգման դեպքում փոխհատուցման կարգը, մասհանումը կասեցնելու, չեղյալ հայտարարելու եւ դադարեցնելու կարգը, ժամկետանց գումարների դիմաց տոկոսների հաշվարկման կարգը, ժամկետից շուտ կամավոր եւ պարտադիր վճարման տարբերակները, վճարումների կատարման, հաշվանցման կարգն ու պայմանները, գնումների գործընթացը, պարտավորությունների չկատարման դեպքում փոխհատուցման կարգը, պայմանագրից բխող վեճների լուծման, պայմանագիրը դադարեցնելու կարգն ու պայմանները:

7. Պայմանագրում հղում է կատարվում 2008 թվականի փետրվարի 12-ին՝ Լյուքսեմբուրգում եւ 2008 թվականի փետրվարի 29-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջև Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական ներդրումային բանկի գործունեության կառավարման համար շրջանակային համաձայնագրին (ՀՀ-ն վավերացրել է 2008թ. հոկտեմբերի 1-ին): Միաժամանակ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականի մարտի 10-ին Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի հետ կնքել է վարկային համաձայնագիր (Երեւանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագիր) հինգ միլիոն եվրո գումարի չափով վարկի տրամադրման վերաբերյալ (ՀՀ-ն համաձայնագիրը վավերացրել է 2010թ. հունիսի 10-ին):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. 2010 թվականի օգոստոսի 10-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջև «Երեւանի մետրոպոլիտենի վերակառուցում-առաջին փուլ» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19 նոյեմբերի 2010 թվականի  
ՍՊԸ- 925

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՈԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԽՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵՎԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 284-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ Ը  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

23 նոյեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոփյանի,  
Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի (գե-  
կոցող),

մասնակցությամբ՝

դիմող՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Ա. Հարությունյանի եւ  
նրա ներկայացուցիչ Ա. Խաչատրյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհր-  
դական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանա-  
դրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դրսիրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրա-  
վունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետու-  
թյան քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասի՝  
Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատաս-  
խանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝  
11.06.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացարությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ «Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննարկման կարգը» վերտառությամբ 284-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Անձանց նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակում նախատեսող օպերատիվ-հետախուզական միջոցառումները, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկը նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնություն է տվել, կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ»:

2. Դիմողը, որպես օրենսգրքի վիճարկվող 284-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին եւ 5-րդ մասերին հակասելու հիմնական փաստարկ, իր դիմումում նշում է. «...այս իրավունքի սահմանափակումն առանց դատարանի որոշման, հիմք ընդունելով միայն տվյալ միջոցառումն իրականացնող օպերատիվ-հետախուզական գործունեության մարմնի որոշումը եւ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկի՝ նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնությունն ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրությանը, քանի որ ՀՀ Սահմանադրությունը միանշանակ սահմանում է, որ յուրաքանչյուրի՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով, դատարանի որոշմամբ: ՀՀ Սահմանադրությունը նշված կարգից որեւէ բացառություն չի նախատեսում»:

Դիմողն իր գրավոր բացարության մեջ հեռում է կատարում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 281-րդ հոդվածին, համաձայն որի դատարանի որոշմամբ են կատարվում այն օպերատիվ-հետախուզական գործողությունները, որոնք կապված են քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հետ:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

3. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Իր այս դիրքորոշումը պատասխանողը փաստարկում է նրանով, որ օրենսգրքի վիճարկվող դրույթը կիրառվում է միայն տվյալ իրավունքը կրող սուբյեկտի համաձայնությամբ, մինչեւ «սահմանափակում» հասկացության պարտադիր բաղադրատարը է հանդիսանում տվյալ իրավունքը կրողի կամքի բացակայությունը:

Պատասխանողը գտնում է նաև, որ անգամ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանափակ մեկնաբանության դեպքում Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված իրավունքը կարող է սահմանափակվել Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի ուժով:

Ըստ պատասխանողի՝ անգամ դատարանի որոշման դեպքում հաղորդակցվողներից մեկի՝ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավունքը դարձյալ խախտվում է, քանի որ դատարանը տալիս է կոնկրետ անձի կոնկրետ հեռախոսահամարը լսելու իրավունքը:

Պատասխանողը գտնում է նաև, որ օրենսգրքի վիճարկվող դրույթը հարկ է դիտարկել Սահմանադրության 18-րդ հոդվածի տեսանկյունից, քանի որ վիճարկվող դրույթը կոչված է երաշխավորելու իրավունքների արդյունավետ պաշտպանության իրավունքը:

4. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում օրենսգրքի վիճարկվող դրույթները դիտարկել օրենսգրքի մյուս դրույթների, ինչպես նաև տվյալ հարաբերությունը կարգավորող՝ այլ իրավական ակտերում ամրագրված քրեադրատավարական նորմերի համատեքստում:

ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասի վերլուծությունը վկայում է, որ վերջինս սահմանում է նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման երեք **համաժամանակյանախապայմանական** ժամանակաշրջան:

- ա/ օրենքով սահմանված դեպքերում,
- բ/ օրենքով սահմանված կարգով,
- գ/ դատարանի որոշմամբ:

Ընդ որում, ՀՀ Սահմանադրությունը չի նախատեսում նշված նախապայմաններից շեղվելու որեւէ իրավական հնարավորություն:

ՀՀ քրեադրատավարական օրենսդրության վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեադրատավարական օրենսդրությամբ սահմանվում է անձի հեռախոսային խոսակ-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ցությունները եւ այլ հաղորդումները լսելու երկու իրավական ռեժիմ՝ որպես քննչական գործողություն եւ որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում: Ընդ որում, երկու իրավական ռեժիմների դեպքում էլ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը երաշխավորում է նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը՝ դրանց սահմանափակման համար, ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածին համահունչ, որպես պարտադիր պայման նախատեսելով դատարանի համապատասխան որոշման առկայությունը:

Մասնավորապես, օրենսգրքի՝ «Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը» վերտառությամբ 14-րդ հոդվածի համաձայն. «1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունք: Քրեական դատավարության ընթացքում արգելվում է անձին նշված իրավունքներից ապօրինի զրկելը կամ այդ իրավունքները սահմանափակելը:

2. Քրեական դատավարության ընթացքում նամակագրության, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը կարող են իրականացվել **միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով**:

Դիտարկվող հոդվածում հիշատակված գործողությունների կատարման կարգը սահմանված է օրենսգրքի՝ «Նամակագրության, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը» վերտառությամբ 33-րդ գլխի նորմերով: Մասնավորապես, նշված գլխի՝ «Նամակագրության, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումները վերահսկելը» վերտառությամբ 239-րդ հոդվածը սահմանում է. «1. Եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ կասկածյալի կամ մեղադրյալի ուղարկած կամ նրանց կողմից ստացվող նամակագրության, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումներում (այսուհետ՝ նամակագրություն) կարող են պարունակվել գործով ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկություններ, քննիչը կարող է պատճառաբանված որոշում կայացնել, որում պարունակվում է միջնորդություն դատարանին՝ նշված անձանց նամակագրությունը վերահսկելու համար:

2. Որոշման մեջ պետք է նշվեն կապի այն հաստատության անվանումը, որի վրա դրվում է նամակագրությունը պահելու պարտականությունը, այն անձի (անձանց) ազգանունը, անունը, որի նամակագրությունը պահվելու է, այդ անձի (անձանց) ճշգրիտ հասցեն, բղթակցության տեսակը, որի վրա կալանք է դրվում, եւ կալանքի ժամկետը:

3. Նամակագրությանը, որի վրա կարող է կալանք դրվել, մասնավորապես, վերաբերում են հետեւյալ օրենկունները՝ նամակները, հեռագրերը, ուա-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

դիոքրերը, փոստածանրոցները (բանդերոլները), ծանրոցները, փոստային բեռնամփոխները (կոնտեյներները), փոխանցումները, ֆաքսով եւ էլեկտրոնային փոստով հաղորդումները:

4. Նամակագրությունը վերահսկելու մասին դատարանի որոշումն ուղարկվում է կապի համապատասխան հաստատության պետին, որի համար որոշումը պարտադիր է:

5. Կապի հաստատության պետը պահում է անհրաժեշտ նամակագրությունը եւ դրա մասին անհապաղ տեղեկացնում է քննիչին:

6. Նամակագրության վերահսկումը վերացվում է համապատասխան որոշումը կայացրած քննիչի, դատախազի կամ դատարանի կողմից»:

Օրենսգրքի 33-րդ գլխի՝ «Նամակագրության գննումը եւ առզրավումը» վերտառությամբ 240-րդ հոդվածը սահմանում է. «1. Քննիչն ստորագրությամբ կապի հաստատության պետին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տվյալ հաստատության այլ ծառայողներին, ծանոթացնում է գննում եւ առզրավում կատարելու մասին որոշմանը եւ տվյալ հաստատության աշխատողների բվից առանձնացված ընթերականների մասնակցությամբ բացում եւ զննում է նամակագրությունը:

2. Այնպիսի փաստաթղեր, առարկաներ հայտնաբերելիս, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, քննիչը կատարում է համապատասխան առաքումների առզրավում կամ սահմանափակվում է դրանցից պատճեններ հանելով: Այն տվյալների բացակայության դեպքում, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, քննիչը ցուցում է տալիս զննված նամակագրությունը հասցեատիրոջը հանձնելու կամ այն իր կողմից սահմանած ժամկետում պահելու մասին:

3. Նամակագրությունը զննելու կամ պահելու յուրաքանչյուր դեպքի մասին կազմվում է արձանագրություն, որում նշվում է ում կողմից, որտեղ, եթե են կոնկրետ որ նամակագրությունն է պահել կամ ենթարկվել զննման, ինչ է վերցվել, ինչը պետք է հանձնվի հասցեատիրոջը կամ ժամանակուրապես պահիվ, որ նամակագրությունն էն հանված պատճենները, ինչպիսի տեխնիկական միջոցներ են օգտագործվել եւ ինչ է հայտնաբերվել: Քննչական գործողությանը մասնակցած բոլոր անձինք պետք է ծանոթացվեն արձանագրությանը, որը նրանք հաստատում են իրենց ստորագրություններով, իսկ անհրաժեշտության դեպքում կարող են պահանջել դրա մեջ նտցնել իրենց դիտողությունները»:

Օրենսգրքի 33-րդ գլխի՝ «Հեռախոսային խոսակցությունները լսելը» վերտառությամբ 241-րդ հոդվածը սահմանում է. «1. Եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ կասկածյալի, մեղադրյալի եւ հանցագործությունների մասին տեղեկություններ ունեցող այլ անձանց, հեռախոսային կամ կապի այլ միջոցներով տարվող խոսակցություններում կարող են գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակվել, դատա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

**բանի որոշմամբ** թույլատրվում է տվյալ խոսակցությունների լսում եւ ձայնագրառում:

2. Խոսակցությունների լսման եւ ձայնագրառման անհրաժեշտության մասին քննիչը կայացնում է՝ **դատարանին** միջնորդություն հարուցելու մասին պատճառարանված որոշում, որում նշվում են՝ քրեական գործը եւ հիմքերը, որոնցով պետք է կատարվի համապատասխան քննչական գործողությունը, այն անձանց ազգանունը, անունը, որոնց խոսակցությունները ենթակա են լսման, լսման ժամկետը, հիմնարկը, որին հանձնարարվում է խոսակցությունների լսման եւ ձայնագրառման տեխնիկական իրականացումը: Որոշումը ուղարկվում է դատարան:

3. Խոսակցությունների լսման եւ ձայնագրառման համար դատավորի համաձայնության դեպքում **որոշումը** կատարման համար քննիչի կողմից ուղարկվում է համապատասխան հիմնարկը:

4. Խոսակցությունների լսումը եւ ձայնագրառումը կարող են սահմանվել վեց ամսից ոչ ավելի ժամանակով: «Իրանք վերացվում են, եթե վերանում է դրանց անհրաժեշտությունը, բայց բոլոր դեպքերում՝ նախնական քննության ավարտից ոչ ուշ:

5. Քննիչը սահմանված ժամկետի ընթացքում իրավունք ունի ցանկացած պահին պահանջել ձայնագրությունը՝ զննելու եւ լսելու համար: Այն քննիչին փոխանցվում է կնքված վիճակում, ուղեկցող նամակի հետ միասին, որում պետք է նշված լինեն խոսակցությունների ձայնագրառումն սկսելու եւ ավարտելու ժամանակն ու կիրառված միջոցների անհրաժեշտ տեխնիկական բնույթագրերը:

6. Քննիչի կողմից ձայնագրության զննումը եւ լսումը կատարվում են ընթերականների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մասնագետի մասնակցությամբ, ինչի մասին կազմվում է արձանագրություն, որում պետք է բառացիորեն վերաբերյալ ձայնագրության՝ գործին վերաբերող մասը: Ձայնագրությունը կցվում է արձանագրությանը, ընդ որում, գործին չվերաբերող մասը, դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց կամ գործը կարգվելուց հետո, ոչնչացվում է»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումների սպառիչ ցանկը եւ դրանց նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության կարգը: Մասնավորապես, օրենքի՝ «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները» վերտառությամբ 14-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ եւ 12-րդ կետերի համաձայն:

«1. Օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում կարող են անցկացվել օպերատիվ-հետախուզական հետեւյալ միջոցառումները.

...

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

11) նամակագրության, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների վերահսկում.

12) հեռախոսային խոսակցությունների վերահսկում»:

Նույն օրենքի՝ «Դատական վերահսկողությունը օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ» վերտառությամբ 34-րդ հոդվածը սահմանում է. «1. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ եւ 16-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները, ինչպես նաև արտաքին դիտում օպերատիվ հետախուզական միջոցառումը, եթե արտաքին դիտման արդյունքների ամրագրումն առանց տեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր չէ, եւ անձը (անձինք), որի (որոնց) նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը, ողջամտորեն չէր (չէին) կարող ենթադրել դրա անցկացման հնարավորության մասին, ապա կարող են անցկացվել միայն դատարանի բույլտվությամբ:

2. Սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման համար դատարանի բույլտվությունը ստանալու համար օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարին ներկայացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշումը եւ միջնորդությունը՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու համար դատարան դիմելու վերաբերյալ: Որոշումը եւ դրան կցվող նյութերը դատարան է ներկայացնում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

3. Եթե օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման հապաղումը կարող է հանգեցնել ահարեկչության կատարման կամ Հայաստանի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձությունների կամ գործողությունների, որոնց անցկացման համար սույն օրենքով պարտադիր է համարվում դատարանի բույլտվությունը, ապա օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի որոշման հիման վրա բույլատրվում է նման միջոցառումների անցկացումը 48 ժամվա ընթացքում՝ այդ մասին Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ծանուցելով դատարանին: Եթե դատարանը բավարար չի համարում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման հիմքերը, ապա դրա անցկացումն անմիջապես դադարեցվում է, իսկ դրա արդյունքում ձեռք բերված տեղեկությունները եւ նյութերը անհապաղ ոչնչացվում են: Հակառակ ղեպքում դատարանը որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը բույլատրելու մասին: Սույն մասի դրույթները չեն տարածվում սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով նախատեսված օպերա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տիվ-հետախուզական միջոցառումների եւ 32-րդ հոդվածով նախատեսված հարաբերությունների նկատմամբ»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի, ի թիվս այլնի, 32 եւ 34-րդ հոդվածների ուսումնասիրությունից բխում է, որ վերջիններս եւս դիտարկվող միջոցառումների իրականացման համար նախատեսում են դատարանի համապատասխան որոշման առկայություն:

Օրենսգրքի, մասնավորապես, 98, 98.1 - 98.6-րդ հոդվածների վերլուծությունը վկայում է, որ մասնավոր անձի դիմումի հիման վրա նրա հեռախոսային եւ այլ հաղորդումների գաղտնալսումներն իրականացվում են միայն պաշտպանվող անձ համարվող անձի դիմումի հիման վրա: Մասնավորապես օրենսգրքի 98.1-րդ հոդվածով, որպես պաշտպանվող անձի պաշտպանության համար կիրառվող միջոցառում, ի թիվս այլնի, նախատեսվում է վերահսկողության տեխնիկական միջոցների օգտագործումը եւ հեռախոսային ու այլ հաղորդումների գաղտնալսումը: Իսկ օրենսգրքի 98.6-րդ հոդվածը սահմանում է, որ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պաշտպանվող անձի գրավոր դիմումի հիման վրա կամ նրա գրավոր համաձայնությամբ եւ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրականացնում է նրա հեռախոսային կամ այլ խոսակցությունների գաղտնալսում: Խոսակցությունների գաղտնալսման ընթացքում կարող է կիրառվել ճայնագրառում»:

5. Դատարանի որոշման առկայության՝ որպես ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով երաշխավորված իրավունքի սահմանափակման համար նախատեսված նախապայմանի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջինս հետապնդում է հետեւյալ իրավաչափ նպատակները.

**նախ,** այն նպատակ ունի պաշտպանել անձին պետական իշխանության մարմինների կողմից նրա անձնական եւ ընտանեկան կյանքին անհարկի միջամտությունից,

**երկրորդ,** հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսգրքի 121-րդ հոդվածի համաձայն՝ նամակագրության, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումները վերահսկելու եւ հեռախոսային խոսակցությունները լսելու արդյունքում կազմված արձանագրությունները քրեական դատավարության ընթացքում օգտագործվում են որպես ապացույց եւ արդյունքում կարող են կիրառվել հաղորդակցվող անձի կամ նրա ընդդիմախոսի դեմ, սահմանադիրն առանձնակի կարեւորություն է տվել հիշյալ միջոցառումների իրականացման օրինականության նկատմամբ դատական վերահսկողությանը,

**երրորդ,** որպես կանոն, նշված միջոցառումները կրում են գաղտնի բնույթ, ինչպես դա շեշտում է նաև Մարդու իրավունքների եվրոպա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կան դատարանը/ որոշ դեպքերում կարող է հանգեցնել դրանց չարաշահումների, որոնց կանխման արդյունավետ միջոցներից է նաև դրանց օրինականության նկատմամբ իրականացվող դատական վերահսկողությունը:

6. Անդրադառնալով օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքին, այն է՝ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկի համաձայնությամբ նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումներն առանց դատարանի որոշման լսելու կամ վերահսկելու հնարավորությանը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում օրենսդիրը դեկավարվել է այն տրամաբանությամբ, որ անձը կամովին է հրաժարվում իր՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքից: Սիենույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նշված դեպքը նախատեսելիս օրենսդիրը հաշվի չի առել մի շարք հանգամանքներ:

**Նախ,** նկատի ունենալով, որ ՀՀ օրենսդրությամբ անձի համաձայնությամբ նրա հեռախոսային եւ այլ հաղորդումները լսելն իրականացվում է միայն պաշտպանվող անձի պարագայում, չի բացառվում, որ հիշյալ միջոցառումների արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունն օգտագործվելու է համաձայնություն տված անձի ընդդիմախոսի դեմ, որի՝ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով սահմանված իրավունքներն այս պարագայում կարող են խախտվել: Արդյունքում, միեւնույն իրավական գործիքը կարող է մի դեպքում օգտագործվել որպես իրավական պաշտպանության միջոց, մեկ այլ դեպքում հանդես գալ որպես մարդու իրավունքների խախտման կամ ոչ իրավաչափ սահմանափակման միջոց:

**Երկրորդ,** «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «...4. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ եւ 15-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր եւ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, եւ եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է»: Այս նորմը ենթադրում է, որ հիշյալ միջոցառումները պետք է կիրառվեն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում եւ միայն այն պարագայում, երբ պետական իշխանության մարմինների համար անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու այլընտրանքային տարբերակը բացակայում է: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Օպերատիվ-հետա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

խուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասում նշված երկու նախապայմանների առկայության կամ բացակայության հարցը ենթակա է զնահատման, ինչը կարող է կատարվել միայն դատական վերահսկողության շրջանակներում:

**Երրորդ,** ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների սահմանափակման համար անհրաժեշտ երեք նախապայմաններից, այն է՝ «օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով, դատարանի որոշմամբ», ՀՀ Սահմանադրությամբ որեւէ բացառություն չի նախատեսվում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև արձանագրել, որ վիճարկվող 284-րդ հոդվածի 1-ին մասը՝ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկի համաձայնությամբ նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումներն առանց դատարանի որոշման լսելու կամ վերահսկելու իրավական հնարավորություն վերապահելու մասով, ներքին հակասության մեջ է գտնվում նոյն օրենսգրքի 14, 241 եւ 281-րդ հոդվածների դրույթների հետ:

**Չորրորդ,** վիճարկվող նորմը դուրս է տվյալ հոդվածի իրավակարգավորման շրջանակներից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածը սահմանում է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննարկման կարգը: Խոսքը վերաբերում է ներկայացված միջնորդության քննարկմանը, եւ տվյալ հոդվածի 2-7-րդ մասերով նախատեսվում է դատարանում դրա քննության կարգը, իսկ 8-րդ մասը սահմանում է հատուկ իրավիճակներում հրատապ գործողությունների կատարման եւ դրանց հետ կապված դատական վերահսկողության առանձնահատկությունները: Հոդվածի 1-ին մասը բացարձակապես չի առնչվում միջնորդության քննարկման կարգին եւ չի բխում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի պահանջներից:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված իրավունքը ենթակա է սահմանափակման ոչ միայն Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով, այլ նաև Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, ինչը փաստարկում է պատասխանողը, սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ սահմանափակում նախատեսող սահմանադրական այս երկու նորմների հարաբերակցության հարցին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասը հղում է կատարում օրենքին եւ չի բացառում, որ օրենքով նախատեսվի ոչ միայն կոնկրետ իրավունքի սահմանա-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

փակման քույլատրելիությունը, այլ նաև՝ սահմանափակման դեպքերը եւ կարգը: Ընդ որում, չի բացավում, որ օրենքը կոնկրետ իրավունքի սահմանափակման համար որպես պարտադիր նախապայման սահմանի դատարանի որոշման առկայությունը: Այս վերջին պայմանի սահմանումը, տարբեր հնարավոր սահմանափակումների առնչությամբ, սահմանադիրը բողել է օրենսդրի հայեցողությանը: Սակայն ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավունքի սահմանափակման պարագայում դատարանի որոշման առկայության պարտադիր նախապայմանը չի բողնվել օրենսդրի հայեցողությանը, այլ նախատեսվել է հենց Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով: Հետեւաբար, Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված՝ իրավունքի սահմանափակմանը վերաբերող նորմն օրենսդրի կողմից պետք է ելակետ ընդունվի Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա իրականացվող հնարավոր իրավակարգավորման շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին եւ 5-րդ մասերին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**23 նոյեմբերի 2010 թվականի  
ՍՊԸ-926**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ**

**ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 73-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ**

**1-ԻՆ ՄԱՍԻ 6-ՐԴ ԿԵՏԻ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՎՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ**

**ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ**

**ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Քաղ. Երեւան**

**30 նոյեմբերի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուլյանի (գեկուցող), Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝

դիմող Ա. Զեյնալյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արտակ Զեյնալյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Ա. Զեյնալյանի՝ 08.06.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմոդ եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաս-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տաթղերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

Դիմողի կողմից սկզբնապես փիճարկվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերը: ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի՝ 25.06.2010թ. ՍԴԴԿՈ/1-17 որոշմամբ դիմումը քննության է ընդունվել մասնակի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի մասով, իսկ 7-րդ կետի մասով դիմումի ընդունումը մերժվել է՝ դիմողի նկատմամբ կիրառված չլինելու պատճառաբանությամբ:

Վարչական դատավարության օրենսգրքի՝ «Հայցադիմումին կցվող փաստաթղթերը» վերտառությամբ 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է.

«1. Հայցադիմումին կցվում են՝

...

6) հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողին եւ գործին մասնակցող այլ անձանց, սույն օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան, ստանալը հավաստող փաստաթղթերը.

...»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Դիմողը 08.09.2009թ. թիվ 61, 62, 63, 64, 65, 66 գրություններով Երեւանի քաղաքապետին է իրազեկել համապատասխանաբար՝ 2009 թվականի սեպտեմբերի 19-ից 24-ը Երեւան քաղաքի՝ Մատենադարանին հարող տարածքում ժամը 18:00-22:30 զանգվածային հրապարակային միջոցառումներ կազմակերպելու մասին: 12.09.2009թ. նրա կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան՝ «2009 թվականի սեպտեմբերի 19-24-ի հանրահավաքներ եւ երթեր անցկացնելու իրավունքը ճանաչելու պահանջի մասին»:

ՀՀ վարչական դատարանը 12.09.2009թ. կայացրել է «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշում՝ ելնելով այն հանգամանքից, որ ներկայացված հայցադիմումը եւ կից փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի պահանջներին: ՀՀ վարչական դատարանի հիշյալ որոշումը դիմողը 17.09.2009թ. բողոքարկել է ՀՀ վարչական դատարան: ՀՀ վարչական դա-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տարանի՝ 28.09.2009թ. «Բողոքը մերժելու մասին» կոլեգիալ կազմով կայացված որոշմամբ ներկայացված բողոքը մերժվել է:

ՀՀ վարչական դատարանի հիշյալ որոշումը 20.10.2009թ. դիմողի կողմից բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 18.11.2009թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. Վիճարկվող նորմի հակասահմանադրականության վերաբերյալ դիմողի փաստարկմերն ընդհանուր առմամբ հանգում են նրան, որ ՀՀ դատավարական օրենսդրության համակարգում միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն է հայցվորի համար նախատեսում առաջին ատյանի դատարան հայցադիմում ներկայացնելիս այն եւ կից փաստաբերը հնարավոր պատասխանողի կողմից ստանալը հավաստող ապացույցի ներկայացման պարտականություն: Ընդ որում, դիմողը նշում է, որ նշված պարտականությունը կրում են միայն վարչական մարմնի կամ պաշտոնատար անձի դեմ հայց ներկայացնող անձինք: Խոկ վարչական մարմնի կողմից անձի դեմ հայց ներկայացվելու դեպքում վարչական դատարանը լիազորված է հայցադիմումն ընդունել վարույք, եթե քացակայում է անձի կողմից հայցն ստանալը հավաստող ապացույցը, սակայն առկա է միջնորդություն՝ դատարանի կողմից պատասխանողի վերջին հայտնի քննակության կամ գրանցման վայրի համայնքի դեկավարին այն ուղարկելու մասին:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթով ներկայացվող ձեւական պահանջները ծանրաբեռնում են անձին այն աստիճան, որ սահմանափակում են մարդու եւ քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի քաղադրատարրերը հանդիսացող՝ դատարանի մատչելիության եւ հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իր գործի քննության իրավունքը:

4. Ըստ պատասխանողի՝ պետությունը կարող է կանոնակարգել դատական պաշտպանության իրավունքի իրականացման ընթացակարգը՝ այդ իրավունքը կրողին ներկայացնելով օրենսդրական ամրագրում ստացած հստակ պայմաններ: Ավելին, այդ պայմաններն ուղղված են դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացմանը, քանի որ ձեւավորում են այն նվազագույն պարտադիր նախադրյաները, որոնք անհրաժեշտ են դատարանի համար արդարադատության իր գործառույթն արդյունավետ իրացնելու համար: Վիճարկվող դրույթում ներկայացվող պահանջն ուղղակիորեն կոչված է վարչական դատավարությունում իրավականարության սկզբունքի կենսագործմանը, յուրաքանչյուր կողմի համար քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիար-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ժեք հնարավորության երաշխավորմանը: Հայցվորին ներկայացվող խնդրու առարկա պահանջը պատասխանողին եւ երրորդ անձանց հնարավորությունն է տալիս ծանոթանալ հայցվորի ներկայացրած փաստարկներին ու ապացույցներին եւ դրանց վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետում ներկայացնել իրենց նկատառումները:

Ինչ վերաբերում է դիմողի այն փաստարկին, որ խնդրու առարկա պահանջը հատուկ է միայն վարչական դատավարությանը, պատասխանողը փաստարկում է, որ նման մոտեցումը պայմանավորված է վարչական դատավարության առանձնահատկություններով, մասնավորապես դրա սուբյեկտներով, ինչպես նաև այդ իրավահարաբերությունների այլ առանձնահատկություններով:

5. ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման 6-րդ կետում արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «ՀՀ Սահմանադրության 101 հոդվածն օրենքին է վերապահել սահմանադրական դատարան դիմելու կարգի սահմանումը: Այդ հոդվածի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին եւ դրա հիմքում ընկած՝ կոնկրետ սահմանադրական վերահսկողության տրամաբանությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Ինչպես նշվեց, դիմումը կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը.

- որը հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից,
- որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է վիճարկվող օրենքի դրույթը,
- որի նկատմամբ վիճարկվող օրենքի դրույթը կիրառվել է գործը լուծող վերջնական դատական ակտով,
- որն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները»: Հիշյալ կետում սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասությունը կատար չէ:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «օրենքի դրույթի կիրառում» հասկացության սահմանադրահրավական բովանդակությունը սահմանադրական դատարանը բացահայտել է

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

իր՝ 04.04.2008թ. ՍԴ-747 որոշման մեջ: Վերջինիս 5-րդ կետում մասնավորապես արտահայտված է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «...ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող «...եւ չի կիրառվել» բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», եթե անձի համար այն առաջացնում է իրավական հետեւանքներ: Բոլոր այն դեպքերում, եթե վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:

Վարչական դատարան ներկայացվող հայցադիմումի ձեւին եւ բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72 եւ 73-րդ հոդվածներով: Օրենսգրքի 78-րդ հոդվածը սահմանում է հայցադիմումը վերադարձնելու հիմքերը, իսկ 79-րդ հոդվածը՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը: Օրենսգրքի 72, 73 եւ 78-րդ հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ 72 եւ 73-րդ հոդվածների պահանջները, այդ թվում՝ վիճարկվող նորմով սահմանված պահանջը, չպահպանելու իրավական հետեւանքը վարչական դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելն է: Իսկ 79-րդ հոդվածի 1-ին մասում նշված հիմքերի առկայության դեպքում առաջանում է այլ իրավական հետեւանք, այն է՝ հայցադիմումի ընդունումը մերժվում է:

Դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ վարչական դատարանը, կիրառելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 4-րդ կետերը, 12.09.2009թ. կայացրել է «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշում՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գործով հայցվոր Արտակ Զեյնալյանն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների տեսանկյունից չի հանդիսանում ՀՀ վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտ՝ իր իրավունքների խախտման փաստի բացակայության պատճառաբանությամբ: Նույն դատարանը կոլեգիալ կազմով 28.09.2009թ. կայացված՝ «Բողոքը մերժելու մասին» որոշմամբ հիմնավոր է համարել վերոնշյալ որոշման պատճառաբանությունները: Իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 18.11.2009թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերահաստատվել է ՀՀ վարչական դատարանի՝ կոլեգիալ կազմով 28.09.2009թ. կայացված՝ «Բողոքը մերժելու մասին» որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Հիմք ընդունելով իր՝ 04.04.2008թ. ՍԴՈ-747 որոշման 5-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումը եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատարանի կողմից դիմողի հայցադիմումի առնչությամբ կայացվել է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում, իսկ վիճարկվող նորմով սահմանված պահանջի չկատարումը հանգեցնում է ոչ թե հայցադիմումի ընդունումը մերժելուն, այլ հայցադիմումը վերադարձնելուն՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի նկատմամբ կիրառվել եւ նրա համար կոնկրետ իրավական հետեւանքներ առաջացրել են 79-րդ հոդվածի համապատասխան դրույթները:

6. Սահմանադրական դատարանն իր՝ 2008թ. ապրիլի 15-ի ՍԴՈ-751 որոշման մեջ անդրադառնալով սահմանադրական կոնկրետ վերահսկողության առանձնահատկություններին՝ նշել է. «Եթե նախնական եւ հետագա վերացական սահմանադրական վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում Սահմանադրության գերակայության երաշխավորումը՝ իրավական համակարգում օրենքների եւ այլ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ապահովելու ճանապարհով, ապա անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության դրույթների անմիջական գործողության երաշխավորումն է, **մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը**: ... Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաև անհատական շահերի պաշտպանության խնդիրը»:

Միաժամանակ, 2010թ. հոկտեմբերի 19-ի ՍԴՈ-921 որոշման մեջ սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առաջն, որ կոնկրետ վերահսկողության շրջանակներում նորմի սահմանադրականության գնահատումն իմաստ ու նշանակություն է ստանում տվյալ կոնկրետ գործով սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով:

Դիմումին կից ներկայացված դատական ակտերի վերլուծությունը վկայում է նաև, որ խնդրո առարկա հանրային-իրավական վեճը, ըստ էության, սպառված է, եւ այդ պարագայում դիմողի կողմից վիճարկվող իրավանորմի սահմանադրականության հարցի բարձրացումը, ըստ էության, չի հետապնդում սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության նպատակ: Ուստի հիմք ընդունելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում վիճարկվող իրավանորմի սահմանադրականության հարցի քննարկումը խնդրո առարկա գործի լուծման տեսանկյունից որեւէ գործնական իրավական հետեւանքի հանգեցնել չի կարող:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

7. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Սահմանադրական դատարանը կարծում է գործի վարույթը ... գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով դիմող ֆիզիկական անձը **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒ ՍՈՒՐՅԵԿՈ ՀԷ**, քանի որ օրենքի վիճարկվող դրույթը դիմողի նկատմամբ չի կիրառվել ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանների ընդունած դատական ակտով:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ եւ 6-րդ կետերի, 60-րդ հոդվածի 1-ին կետի, 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Ո Շ Ե Ց**.

1. «Քաղաքացի Արտակ Զեյնալյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարծել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**30 նոյեմբերի 2010 թվականի  
ՍՊԸ-927**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

2009 թվականի Հոկտեմբերի 19-ին ԵՎ 20-ին ՆԱՄԱԿՆԵՐԻ  
ՓՈԽՎԱԿԱՄՄԱՐ ԿՆՔՎԱԾ՝ «ԱՖԴԱՆԱՍԱՆՈՒՄ ՄԻԶԱՋԳԱՅԻՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԿՎՑՄԱՆ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺՄԱՆՄԱՆ  
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀՅՈՒՄԱՎԱԼԱՏՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ  
(ՆԱՏՕ) ՀԵՏ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»  
ՀԱՄԱՅՆԱՎՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՋՎՄԱՆ ԵՎ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐԱՆՄԵՐԻ ԹՎԱԿԱԶՄԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՆԱՄԱԿՆԵՐԻ ՓՈԽՎԱԿԱՄՄԱՐ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՅՆԱՎՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

**Քաղ. Երեւան**

**14 դեկտեմբերի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի,  
Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող),  
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25,  
38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի  
հոկտեմբերի 19-ին և 20-ին նամակների փոխանակմամբ կնքված՝ «Աֆդանասանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում  
Հայաստանի Հանրապետության գինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) հետ  
իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ համաձայնագրի գոր-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ծողության ժամկետի երկարաձգման եւ հայկական զորախմբի թվակազմի ավելացման վերաբերյալ նամակների փոխանակմամբ կնքված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. 2009 թվականի հոկտեմբերի 19-ին եւ 20-ին նամակների փոխանակմամբ կնքված՝ «Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության գինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Հյուսիսաւլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) հետ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ» համաձայնագրի գործողության ժամկետի երկարաձգման եւ հայկական զորախմբի թվակազմի ավելացման վերաբերյալ նամակների փոխանակմամբ կնքված համաձայնագիրն ստորագրվել է 2010 թվականի դեկտեմբերի 8-ին՝ ՀՀ պաշտպանության նախարարի կողմից, 2010թ. դեկտեմբերի 10-ին՝ ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի՝ Գործողությունների գծով օգնականի կողմից:

Համաձայնագրի նպատակն Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության գինված ուժերի ստորաբաժանման մասնակցության ժամկետի մեկ տարով երկարաձգումն է եւ ՀՀ գինված ուժերի զորախմբի թվաքանակի ավելացումը:

2. Սույն համաձայնագրի համար պայմանագրաիրավական հիմք է հանդիսանում 2009 թվականի հոկտեմբերի 19-ին եւ 20-ին ստորագրված՝ Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության գինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Հյուսիսաւլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) հետ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ նամակների փոխանակմամբ կնքվող համաձայնագիրը (ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2009թ. դեկտեմբերի 8-ին), որի համաձայն՝ «Հայկական զորախումբն իր առաքելությունն սկսելու է իրականացնել 2010թ. առաջին եռամսյակից՝ մեկ տարի ժամկետով, փոխադարձ համաձայնությամբ մասնակցության հետագա երկարաձգման հնարավորությամբ»:

3. Սույն համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, պարտավորվում է՝

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության ժամկետը մեկ տարով երկարաձգել,

- Ակատի ունենալով Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կողմից իրենց խնդիրների իրականացման արդյունավետության բարձրացման համար լրացուցիչ մարովային ռեսուրսների ներգրավման անհրաժեշտությունը, ինչպես նաև իննու հրահանգիչների օպերատիվ ուսուցման եւ փոխգործողության բազմազգ խմբերի աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ Գերմանական կողմի հետ վերջնական պայմանավորվածության ձեռքբերումը՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գորախմբի թվաքանակը հասցնել մինչեւ 45-ի (ներառյալ 5 հրահանգիչ՝ Օպերատիվ ուսուցման եւ փոխգործողության բազմազգ խմբերի աշխատանքներին մասնակցելու համար), իսկ հերթափոխների ժամանակ՝ մինչեւ 90-ի:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին ՆԱՏՕ-ին ծանուցելու օրվանից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի հոկտեմբերի 19-ին եւ 20-ին նամակների փոխանակմամբ կնքված՝ «Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Հյուսիսադրանու դաշինքի (ՆԱՏՕ) հետ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ» համաձայնագրի գործողության ժամկետի երկարաձգման եւ հայկական գորախմբի թվակազմի ավելացման վերաբերյալ նամակների փոխանակմամբ կնքված համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՀՈՂ**

**գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**14 դեկտեմբերի 2010 թվականի  
ՍԴԱ-928**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԻ 22-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆՔ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՄԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երեւան

14 դեկտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (գեկուցող), Մ. Թռփուղյանի, Ա. Խաչարյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 71-րդ հոդվածների,

դրսրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումի հիմնա վրա՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 30.06.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացարությունները, հետազոտելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1997 թվականի դեկտեմբերի 27-ին, ՀՀ Նախագահի կող-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

մից ստորագրվել՝ 1998 թվականի հունվարի 10-ին եւ ուժի մեջ է մտել 1998 թվականի հունվարի 11-ից:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի՝ «Դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները» վերտառությամբ 22-րդ հոդվածը (որը 1998-2009թթ. ընթացքում 9 անգամ փոփոխվել եւ լրացվել է) սահմանում է այն իրավասությեկտներին, ինչպես նաև նրանց կողմից դատարաններկայացվող այն պահանջները, որոնց համար նշված իրավասությեկտներն ազատվում են պետական տուրքի վճարումից:

**2. Գործի փաստական հանգամանքները հանգում են հետեւյալին.**

1) ՀՀ Սյունիքի մարզի դատախազության՝ 21.02.2001 թվականի որոշմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 89-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով քաղաքացի Արամ Դավթյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ արարում հանցագմի բացակայության պատճառով:

2) ՀՀ Վայոց ձորի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 18.05.2006 թվականի որոշմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 1914-րդ հոդվածով, որը համապատասխանեցվել է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածին, նախատեսված հանցանքում քաղաքացի Արամ Դավթյանը ճանաչվել է անպարտ եւ արդարացվել է:

3) ՀՀ վերաբենիչ քրեական դատարանի՝ 20.08.2007 թվականի որոշմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին մեղադրողի հայտարարության հիման վրա քաղաքացի Արամ Դավթյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 3-րդ մասով, որը համապատասխանեցվել է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասին, կարձվել է, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցվել:

4) Դիմելով դատարան եւ պատճառաբանելով, որ ապօրինի քրեական հետապնդման ենթարկվելու, որպես խափանման միջոց կալանք կիրառելու, չհեռանալու մասին ստորագրություն վերցնելու, իր նկատմամբ ոչ ողջամիտ ժամկետներում դատաքննություն իրականացնելու հետեւանքով վճարվել է կրել՝ քաղաքացի Արամ Դավթյանը պահանջել է Հայաստանի Հանրապետությունից հօգուտ իրեն բռնագանձել 226.443.431 ՀՀ դրամ:

ՀՀ հարավային քաղաքացիական դատարանի՝ 23.05.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Հայաստանի Հանրապետությունից հօգուտ Արամ Դավթյանի 7.000.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանին վճարվելիք գումար, բռնագանձելու մասով, իսկ մնացած մասով հայցը մերժվել է: Միաժամանակ վճռվել է Արամ Դավթյանից բռնագանձել 4.388.869 ՀՀ դրամ՝ որպես չվճարված պետական տուրք:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 19.11.2009 թվականի որոշմամբ Արամ Դավթյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, ՀՀ հարավային քաղաքացիական դատարանի՝ 23.05.2008 թվականի վճիռը բողնվել է ուժի մեջ: Միաժամանակ որոշվել է Արամ Դավթյանից, որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրք, բոնագանձել 6.583.484 ՀՀ դրամ:

ՀՀ վճուաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի՝ 10.02.2010 թվականի որոշմամբ վճուաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

ՀՀ վճուաբեկ դատարանը՝ գտնելով, որ վեճը լուծելու համար կիրառման ենթակա օրենքի դրույթի՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի սահմանադրականության խնդիր կարող է առաջանալ, կասեցրել է գործի վարույթը եւ դիմել ՀՀ սահմանադրական դատարան:

3. Դիմողը՝ հղում կատարելով Մարդու իրավունքների եւ իիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին, վկայակոչելով պետական տուրքի վերաբերյալ տարբեր երկրների օրենսդրական փորձը, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ե» կետով նախատեսված է պետական տուրքի վճարումից ազատել հայցվորներին՝ հանցագործության հետեւանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով, գտնում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում առկա է օրենքի բաց, որը դրսեւորվում է նրանում, որ վերջինս չի նախատեսում պետական տուրքի վճարումից ազատել քրեական գործով արդարացվածներին՝ անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու եւ դատապարտման հետեւանքով նրանց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով: Ըստ դիմողի՝ անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու եւ դատապարտման հետեւանքով պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով արդարացվածին պետական տուրքից չազատելը սահմանափակում է արդարացվածի՝ դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքները: Հիմք ընդունելով իր՝ վերը նշված դիրքորոշումները, դիմողը գտնում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը հակասում է ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներին:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ինքնին քաղաքացիական գործերով դատարան դիմելու համար տուրքեր վճարելու պահանջը չի կարող դիտվել որպես Մարդու իրա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ եւ ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի խախտում: Ապօրինի ձերբակալման, կալանավորման կամ որպես մեղադրյալ ներգրավելու արդյունքում ենթադրաբար պատճառված վնասի հաստուցման հայց ներկայացնելու համար պետական տուրքի սահմանումը որեւէ կերպ չի սահմանափակում արդարացվածի՝ դատական պաշտպանության իրավունքը:

Արդարացվածի կարգավիճակ ձեռք բերած անձը պետք է ապացուի, որ իրեն ազատությունից զրկելն ապօրինի է եւ դրա արդյունքում ինքը նյութական վնաս է կրել: Ապօրինի ձերբակալման կամ կալանավորման համար քրեական պատասխանատվություն է սահմանված ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածով: Հետեւարար, եթե դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվեն նշված հոդվածով նախատեսված հատկանիշները, դրա արդյունքում վնաս կրած անձը վիճարկվող 22-րդ հոդվածի «ե» կետի հիման վրա կազատվի պետական տուրքի վճարումից:

Արդարացվածի ենթադրյալ խախտված իրավունքները վերականգնելու եւ պատճառված վնասը հաստուցելու համար օրենքով երաշխավորված է դատական պաշտպանության իրավունքը:

Վերոհիշյալ հիմնավորումներով պատասխանողը գտնում է, որ վիճարկվող հոդվածը չի հակասում ՀՀ Սահմանադրությանը:

5. Սույն գործի բննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթը դիտարկել հատկապես ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասի եւ 20-րդ հոդվածի 5-րդ մասի համատեքստում՝ հաշվի առնելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում թվարկված՝ պետական տուրքի վճարումից ազատելու դեպքերի եւ պետական տուրքի վճարումից ազատվող սուրյեկտների վերաբերյալ առկա իրավակարգավորման հիմքում ընկած ընդհանուր տրամաբանությունը:

Միաժամանակ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմողի՝ իր վարույթում գտնվող կոնկրետ գործով մատնանշած փաստական հանգամանքն առնչվում է վնաս կրած անձի՝ **փոխհատուցման** պահանջին, սահմանադրական դատարանը հարկ է համարում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի դրույթներից առանձնացնել այնպիսիք, որպիսիք առնչվում են վնաս կրած անձի՝ **փոխհատուցման** պահանջին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասում թվարկված դեպքերից միայն երեքն են առնչվում վնաս կրած անձի՝ **փոխհատուցման** պահանջին: Այդպիսիք են.

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- խեղման կամ առողջության այլ վնասման, ինչպես նաև կերակրողի մահվան հետեւանքով պատճառված վնասի փոխառուցման վերաբերյալ հայցերով (օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետ):
  - հանցագործության հետեւանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխառուցման վերաբերյալ հայցերով (օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետ):
  - պետական նպատների, այդ թվում՝ նախկին ԽՍՀՄ խնայքանելի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչեւ 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխառուցման, գումարների բռնագանձման վերաբերյալ հայցերով (օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «իդ» կետ):
- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի՝ վերը նշված դրույթների համադրված վերլուծությունից բխում է, որ վերոհիշյալ դեպքերում հայցվորին պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն տրամադրելու հիմքում ընկած է այն ընդհանուր օրինաչափությունը, համաձայն որի՝ հատկապես հաշվի են առնվում նման արտոնություն տրամադրելու անհրաժեշտությունը պայմանավորող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են վնաս կրելու հետեւանքով արդարացի փոխառուցում պահանջող անձանց՝ սոցիալապես առավել անապահով վիճակում գտնվելը, կրած վնասի հնարավոր չափերը, հետեւաբար՝ նաև գույքային բնույթի հայցապահանջներով պայմանավորված պետական տուրքի չափը:

6. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ թե՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի վերոնշյալ առաջին մասի հատկապես «ե» կետի դրույթը եւ թե՝ սույն գործով դիմող կողմի վարույթում գտնվող կոնկրետ գործի փաստական հանգամանքներն առնչվում են նյութական վնաս կրած անձին, կամ որ նույնն է՝ տուժողին, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է անձի իրավունքը՝ ազատությունից ապօրինի զրկման դեպքում օրենքով սահմանված հիմքերով եւ կարգով ստանալու պատճառված վնասի հատուցում։ Դատարանը, միաժամանակ, հարկ է համարում պարզել Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ «տուժող» հասկացության եւ «օրենքով սահմանված կարգով» բառակապակցության սահմանադրահրավական բովանդակությունը։

ՍԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ին ընդունված՝ «Հանցագործությունների եւ իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հոչակագիր» վերտառությամբ թիվ 40/34 բանաձեւի «Ա» բաժնի 2-րդ կետում բացահայտված է «տուժող»-ի, որպես հանցագործության զոհի, հասկա-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ցույցան միջազգային իրավական բովանդակությունը, համաձայն որի՝ հանցագործության զոհ է (են) համարվում այն անձը (անձինք), ում (որոնց) հանցագործությամբ կամ իշխանության չարաշահմամբ պատճառվել է վճառ, ներառյալ մարմնական կամ բարոյական վճառ, հուզական ապրումները, նյութական վճառ կամ հիմնական իրավունքների էական խախտումները, որոնք օժտված են հատուցման հավասար իրավունքով։ Այդպիսով, անօրինական գործողությունների՝ հանցագործության եւ իշխանության չարաշահման արդյունքում վճառ կրած անձինք իրենց կարգավիճակով նույնացվում են եւ նրանց նկատմամբ պահանջվում է համարժեք վերաբերմունք։

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև միջազգային իրավունքում առկա նման մոտեցումը, գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «տուժող» հասկացությունն ունի ընդգրկուն բովանդակություն եւ ներառում է ոչ միայն քրեական, այլև քրեադատավարական, վարչական, քաղաքացիական վարչության ու այլ հարաբերություններից եւ իրենց կամքից անկախ տուժած ֆիզիկական եւ իրավաբանական անձանց։ Ուստի ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «տուժող» հասկացությունը նշանակում է նաև հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործողություններից (անգործություններից) վճառ կրած անձ։

Ընդ որում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ անձը տուժողի դատավարական կարգավիճակ է ձեռք բերում որպես այդպիսին ճանաչվելու փաստով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության նշված դրույթի իմաստով տուժողին հասցված վճառի հատուցման իրավունքը ենթադրում է նաև արդարացված անձի կրած վճառի հատուցման հարցով քրեական դատավարությունից դուրս քաղաքացիական դատավարության կարգով համապատասխան հայց հարուցելու իրավունք։

7. Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասում եւ 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ «օրենքով սահմանված կարգով» բառակապակցության բովանդակությանը, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրությունը հղում կատարելով օրենքին՝ միաժամանակ առաջադրում է տուժողին փոխհատուցելու այնպիսի կարգ սահմանելու պահանջ, որը պետք է երաշխավորի գործուն մեխանիզմ խնդրո առարկա իրավունքի արդյունավետ իրացման համար։ Նման մեխանիզմի գոյությունը կարող է ապահովվել նաև այն դեպքում, եթե հատուցման իրավունքի իրացման՝ օրենքով սահմանված դատական կարգը պետական տուրքի վճարումից ազատելու արտոնության ձեւով արդարացի պայմաններ ստեղծի այդ իրավունքի իրացման համար, եւ այն-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

պիսի դեպքերում, երբ փոխհատուցման իրավունքն անվիճելի է, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով նախօրոք հաստատված է պետական իրավասու մարմնի, պաշտոնատար անձի այն գործողության (անգործության) փաստը, որի արդյունքում անձին պատճառվել է վնաս: Հետեւաբար, օրենսդիրը պետք է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասում եւ 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված իրավունքների արդյունավետ ու անարգել իրացման նպատակով սահմանի արտադատական կամ դատական կարգով փոխհատուցման պահանջ ներկայացնելու արդյունավետ եւ գործում համակարգ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համակարգային վերլուծության արդյունքում՝ սահմանադրական դատարանը, չբացառելով պետական տուրքի գծով արտոնություններ տրամադրելու՝ օրենսդրի հայեցողական ազատությունը, արձանագրում է, որ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները վերաբերում են ինչպես իրավապայմանագրային պարտավորություններով պայմանավորված, այնպես էլ՝ չպայմանավորված դեպքերին:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի՝ վարույթում գտնվող կոնկրետ գործի փաստական հանգամանքները եւս վերաբերում են իրավապայմանագրային պարտավորություններով չպայմանավորված վնասի փոխհատուցմանը, սահմանադրական դատարանն իրավական պետության սկզբունքի տեսանկյունից իրավաչափ չի համարում այն իրողությունը, երբ հետեւողականություն չի դրսեւորվում տվյալ իրավակարգավորման հարցում եւ պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն չի նախատեսվում արդարացված անձի համար, որը դատարան է դիմում իրեն պատճառված վնասի հատուցման պահանջով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման պարագայում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասն առկա իրավակարգավորման շրջանակներում լիարժեք չի երաշխավորում ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի նորմատիվ կիրառումը՝ խոչընդոտելով տուժող հանդիսացող անձի հատուցում ստանալու իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացումը:

Գործող իրավակարգավորումը վկայում է, որ կիրառված միջոցի եւ հետապնդված նպատակի միջեւ չկա ողջամիտ համաշխափություն՝ ստեղծվել է ոչ իրավաչափ հավասարակշռություն անձի խախտված իրավունքների վերականգնման եւ պետության շահերի պաշտպանության միջեւ, որն աղավաղում է պատճառված վնասի հատուցման սահմանադրական իրավունքի եռթյունը:

Նման վիճակից խուսափելու նպատակով է, որ բազմաթիվ երկրների (Ալյումիա, Էստոնիա, Ռուսաստանի Դաշնություն, Լատվիա, Լիտվա եւ այլն) նույնաբնույթ օրենքներում հստակ նորմ է սահմանվում, որ ապօրինի դատապարտման, ապօրինի քրեական պատասխանատվության են-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

քարկելու հետեւանքով պատճառված վնասի հատուցման գործերով կողմերն ազատվում են պետական տուրքի վճարումից: Նախատեսվում է նաև արդարացվածի համար առավել մատչելի՝ վնասի հատուցման արտադատական ընթացակարգ:

Ըստ գործի նյութերի՝ Հայաստանի Հանրապետությունում ոչ միայն նման ընթացակարգ գոյություն չունի, այեւ ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ առաջին ատյանի դատարանի որոշման առկայության դեպքում, որով անձը ճանաչվել է տուժած եւ նախատեսվել է պատճառված վնասի հատուցում, վերաբննիշ բողոքի դեպքում նոյնագեն անձը չի ազատվում պետական տուրքի վճարումից: Փաստորեն ապօրինի քրեական հետապնդման ներարկվելու դեպքերում հասցված վնասի հատուցում պահանջելու համար անձն ստիպված է վճարել պետական տուրք, որի չափը կարող է ընդհուար գերազանցել հատուցվելիք գումարը:

Սույն խնդիրը համալիր իրավակարգավորման անհրաժեշտություն ունի, որը պետք է, մի կողմից, հաշվի առնի, որ անձին վնաս կարող է պատճառվել նաև հանրային իշխանության մարմինների գործողությունների (անգործության) հետեւանքով: Մյուս կողմից՝ արդարացված անձին ապօրինաբար պատճառված վնասը հատուցելը եւ նրա խախտված իրավունքները վերականգնելը պետք է դիտվեն որպես սահմանադրական անվերապահ պահանջ, որպես անձի իրավունք, իսկ այն իրացնելու օրենսդրական ընթացակարգերը չեն կարող աղավաղել այդ իրավունքի եռթյունը կամ օրենքի բացի արդյունքում ընդհուար արգելափակել այն:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64, 68 եւ 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասը, այնքանով, որքանով չի սահմանում, այլ սուրյեկտներից բացի, արդարացվածին՝ իրավասու պետական մարմինների եւ պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետեւանքով պատճառված վնասի հատուցման հայցերով պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ արտոնություն նախատեսող դրույթ՝ արգելափակելով անձի սահմանադրական իրավունքի իրացումը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասին եւ 20-րդ հոդվածի 5-րդ մասին հակասող եւ անվավեր:

2. Հաշվի առնելով, որ տվյալ խնդրի իրավաչափ լուծումը եւ օրենքի բացի հաղթահարումը նաև օրենսդրական փոփոխությունների եւ համա-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

լիր իրավակարգավորման անհրաժեշտություն է ենթադրում, ինչպես նաև նկատի ունենալով, որ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ վեճի առարկա հոդվածի անմիջական անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետեւանքներ այդ հոդվածի առկա՝ սահմանադրականության խնդիրներ չառաջացնող, դրույթների իրացման եւ մարդու իրավունքների պաշտպանության առումով՝ ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով սույն որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2011թ. հունիսի 30-ը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրավարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**14 դեկտեմբերի 2010 թվականի  
ՍՊԸ-929**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼԲԵՐՏ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ 263-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ  
2-ՐԴ ՄԽՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

21 դեկտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող),  
Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի,  
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող Ա. Խոկանդարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ նախագահի խորհրդական  
Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր լեթացակարգով քննեց «Քաղաքացի Ալբերտ Խոկանդարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրի 263-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթն Ա. Խոկանդարյանի՝ 15.06.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով՝ ՀՀ քրեական դատավարության մասին ՀՀ օրենքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թյան օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաբղերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ վիճարկվող «Քրեական գործով վարույթը կարծելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բողոքարկումը» վերտառությամբ 263-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Դատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացնող անձին: Գործով վարույթը կարծելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան»:

Օրենսգրքի 263-րդ հոդվածը փոփոխվել է «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 21.02.2007թ. ՀՕ-93-Ն օրենքով: Նշված օրենքով օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է գործող խմբագրությամբ:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմող Ալբերտ Խոկանդարյանը 24.01.2008թ. հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության Էրեբունու քամին: 04.04.2008թ. նախապատրաստված նյութերով որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Հիշյալ որոշումը դիմողի կողմից բողոքարկվել է Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նորարարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարան, որի՝ 20.06.2008թ. որոշմամբ վերացվել է դատավարական ակտը:

04.09.2008թ. Էրեբունու քննչական քաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ եւ կատարվել նախաքննություն: ՀՀ ոստիկանության Նոր Նորքի քննչական քաժնի ավագ քննիչի՝ 19.06.2009թ. որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել է: Հիշյալ որոշումը բողոքարկվել է վերադաս դատախազին, որի՝ 06.07.2009թ. որոշմամբ բողոքը մերժվել է: Նույն որոշումը բողոքարկվել է Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարան, որի՝ 08.09.2009թ. որոշմամբ Երեւանի Նոր Նորք քննչական քաժնի ավագ քննիչի՝ «Քրեական գործով վարույթը կար-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ճելու մասին» 19.06.2009թ. որոշումը վերացնելու եւ դատարան դիմելու ժամկետի բացքողումը հարգելի համարելու մասին բողոքը մերժվել է:

Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի հիշյալ որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան: Վերջինին՝ 16.10.2009թ. որոշմամբ՝ դիմողի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ վիճարկվող դատավան ակտը բողնվել օրինական ուժի մեջ: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի հիշյալ որոշումը դիմողը բողոքարկել է ՀՀ վճռաբեկ դատարան, որի՝ 16.12.2009թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ՝ ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. Դիմող կողմը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին՝ այն պատճառաբանությամբ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ եւ 290-րդ հոդվածներով նույն բնույթի եւ նույն հատկանիշներով որոշումների բողոքարկման համար օրենսդրի կողմից սահմանված են երկու տարբեր ժամկետներ, որոնց մեջ չկողմնորոշվելու դեպքում անձը զրկվում է նյութական իրավունքի պաշտպանության հնարավորությունից:

Դիմողի գնահատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործով վարույթը կարծելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը բողոքարկելու համար սահմանվել է միայն վերադաս դատախազին 7 օրվա ընթացքում դիմելու իրավունք, իսկ այդ նորմի 2-րդ մասով՝ եւս 7 օր ժամանակ, սակայն այդ նորմում իմակերատիվ պահանջ է հենց դատախազի, այլ ոչ թե քննիչի որոշման բողոքարկումը: Չնայած նրան, որ 263-րդ հոդվածի 1-ին մասի՝ որոշումը վերադաս դատախազին բողոքարկելու, իսկ 2-րդ մասի՝ վերադաս դատախազի որոշումը դատարան բողոքարկելու դրույթներն իմակերատիվ չեն՝ դրանցում միանգամից դատարան դիմելու համար ստույգ ժամկետ չնշելը, ըստ դիմողի, հանգեցնում է նրան, որ դատական պրակտիկայում պետք է կարծիք ձեւավորվի առ այն, որ իրավունքների պաշտպանության ժամկետը սահմանված 14 օրը՝ 7 օր վերադաս դատախազին դիմելու համար եւ 7 օր վերադաս դատախազի ստացված որոշումը բողոքարկելու համար: Նման անհատակությունը հանգեցրել է կոնկրետ իրավունքի խախտման:

4. Ըստ պատախանող կողմի՝ վիճարկվող նորմը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը հետեւյալ պատճառաբանությամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասը քրեական դատավարության մինչդատական վարույթում հնարավոր բոլոր դատավարական որոշումներից ու գործողություններից առանձնացնելով մի քա-

նիսը՝ հստակ սահմանում է, որ դրանք եւս դատական վերահսկողության առարկա են: Սահմանելով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության օրենսդրական իիմքերը, ինչպես նաև դատական վերահսկողության առարկա որոշումների եւ գործողությունների շրջանակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, հաշվի առնելով որոշ ակտերի բողոքարկման հատուկ ժամկետների եւ ընթացակարգերի կարեւորությունը, առանձին նորմերով սահմանել է այդ որոշումների բողոքարկման հատուկ ընթացակարգ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ եւ 263-րդ հոդվածները հարաբերակցվում են ինչպես մասը եւ ամրողը, քանի որ վերջին իրավադրույթն անմիջապես կարգավորում է քրեական գործով վարույթը կարճելու եւ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բողոքարկման կարգը: Ուստի քրեական գործով վարույթը կարճելու եւ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը պետք է բողոքարկվի 263-րդ հոդվածով սահմանված կարգով:

Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթը բավարարում է իրավական որոշակիության պահանջը եւ երաշխավորում է անձի՝ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը:

5. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը հիմնականում բարձրացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի երկու նորմերի, այն է՝ օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի եւ վիճարկվող 263-րդ հոդվածի 2-րդ մասի ենթադրյալ կոլիզիայի խնդիր: Վերջինս դրսեւորվում է նրանում, որ, ի տարրերություն 290-րդ հոդվածի 3-րդ մասով՝ բողոքը ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից դատարան դիմելու համար սահմանված մեկամսյա ժամկետի, վիճարկվող նորմը պահանջում է քրեական գործով վարույթը կարճելու որոշման դեմ բողոքի քննության արդյունքում դատախազի ընդունած որոշումը դատարան բողոքարկել 7-օրյա ժամկետում: Ընդ որում, եթե օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում շեշտվում են «...սույն օրենսգրքով նախատեսված որոշումները» եւ «սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում» հանգամանքները, ապա 3-րդ մասը որեւէ՝ տվյալ իրավակարգավորումից տարրերվող, այլ կանոնակարգման հնարավորության մասին հղում չի բովանդակում:

Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում խնդիրը դիտարկել օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի եւ 263-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակության (առարկայի) եւ իրավակարգավորման հատակության լույսի ներքո:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում եւ

**կարգով**, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների եւ գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»: Նշված դրույթում՝ «...սույն օրենսգրքով սահմանված **դեպքերում եւ կարգով**» ձեւակերպումից բխում է, որ մինչդատական վարույթում քրեական հետապնդում իրականացնող մարմինների ոչ բոլոր որոշումները կարող են անմիջականորեն բողոքարկվել դատարան: Դատական կարգով բողոքարկման ենթակա որոշումների ցանկը, ի թիվս այլնի, սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝ դատարան կարող են բողոքարկվել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի եւ դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարձելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ **դարձյալ օրենսգրքով նախատեսված դեպքերում**: Օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասում «**օրենսգրքով նախատեսված դեպքերում**» ձեւակերպումը նշանակում է, որ օրենսգրքով կարող է սահմանվել 290-րդ հոդվածի 2-րդ մասում նշված որոշումների բողոքարկման միջնորդավորված կարգ եւ ներկայացվել մինչեւ դատական պաշտպանության դիմելը՝ օրենսգրքով նախատեսված արտադատական պաշտպանության միջոցն սպառելու պահանջ: Ի դեպք, ինչ վերաբերում է մինչդատական վարույթում վերոհիշյալ սույնեկտների կողմից ընդունված որոշումների բողոքարկման արտադատական կարգի սահմանադրականությանը, ապա այդ խնդրին սահմանադրական դատարանն անդրադարձել է իր՝ 2009թ. դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-844 որոշմամբ:

Իր հերթին, օրենսգրքի 263-րդ հոդվածը սահմանել է 290-րդ հոդվածի 2-րդ մասում մատնանշված՝ քրեական գործով վարույթը կարձելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բողոքարկման երկաստիճան համակարգ, որի համաձայն՝ մինչդատական վարույթում նշված որոշումը պետք է բողոքարկվի նախ վերադաս դատախազին, ապա վարույթն իրականացնող մարմնի գոնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 եւ 263-րդ հոդվածների հարաբերակցության խնդրին՝ **ժամկետային կարգի սահմանման առնչությամբ**, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե օրենսգրքը նախատեսում է 290-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված ընդհանուր կարգից շեղում այլ իրավադրույթներում, ապա իրավական անորոշությունից խուսափելու համար անհրաժեշտ էր թեկուզ հավելել՝ «...եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ» բառակապակցությունը: Առկա խմբագրությունը եւ նշված երկու հոդվածներում ժամկետային կարգավորումները հստակ տարբերակված չեն, որը, ինչպես վկայում են քննության առարկա գործի նյութերը, մարդու իրա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

վունքների խախտման իրական վտանգ է բռվանդակում: Այդ անհամապատասխանությունը թերեւս առաջացել է այն պատճառով, որ 21.02.2007թ. ՀՕ-93-Ն օրենքով օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում վերջինս համակարգային ամբողջականության մեջ չի դիտարկվել 290-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման հետ: Մինչեւ վոփոխությունն այդ դրույթը պարզապես սահմանել է, որ «Գործով վարույթը կարծելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը բավարարելուց դատախազի հրաժարվելը կարող է բողոքարկվել դատարան»: Բնականաբար, նման ձեւակերպման պարագայում հիշյալ անհամապատասխանությունն առկա չի եղել:

6. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաեւ, որ տվյալ հիմնախնդրին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ոչ միայն դիմողի վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին 16.12.2009թ. որոշման շրջանակներում, որով իրավաչափ է նկատել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառումը վերաքննիչ դատարանի կողմից: 2010 թվականի ԵԱԴԴ/0014/11/09 գործով ըստ Էության կայացրած իր որոշման մեջ՝ քննարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի եւ 185-րդ հոդվածի 3-րդ մասի (վերաբերում է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը բողոքարկելուն, որով 21.02.2007թ. ՀՕ-93-Ն օրենքով օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասին բնորոշ ժամկետային կարգավորում է նախատեսվել) հարաբերակցության հարցը, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «...դրանցում առկա է ուղղակի հակասություն», ուստի «...քննության առարկա հարաբերությունների նկատմամբ պետք է գործի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կանոնը՝ որպես ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտ»:

Միաժամանակ, 15.12.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր տեղեկանքում ՀՀ դատական դեպարտամենտն իր հերթին փաստել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ եւ 290-րդ հոդվածի 3-րդ մասերի միջեւ առկա է հակասություն:

Պատասխանող կողմը նույնպես չի առարկում, որ հիշյալ երկու դրույթների ժամկետային իրավակարգավորման միջեւ անհամապատասխանությունն առկա է, սակայն պնդում է, որ դրանք մասի եւ ամբողջի հարաբերակցության շրջանակներում դիտարկելու պարագայում սահմանադրականության խնդիր չի առաջանում:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 290-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները՝ որպես մասնակիի եւ ընդհանուրի հարաբերակցում, հստակ չեն փոխամածայնեցված, ինչպես նաև դատական պրակ-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի, 185-րդ հոդվածի 3-րդ մասի և 263-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համակարգային ամբողջականության մեջ մեկնարանան այնպիսի նախադեպ չի ձեւավորվել, որպեսզի անձի համար գործնականում ապահովվի ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված՝ դատարանի մատչելիության և իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի լիարժեք իրականացումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Յ**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «Գործով վարույթը կարծելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան» դրույթը՝ նոյն օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման հետ անհամապատասխանության պայմաններում և սույն գործով դատական պրակտիկայում դրան տրված բովանդակության շրջանակներում ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. Հաշվի առնելով, որ տվյալ խնդրի իրավաչափ լուծումը և հակասական իրավակարգավորման հաղթահարումը նաև օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն է ենթադրում, ինչպես նաև նկատի ունենալով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի անմիջական անվավերությունն անխուսափելիորեն կառաջացնի անբարենպաստ հետեւանքներ մարդու իրավունքների պաշտպանության առումով՝ ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով սույն որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2011թ. հունիսի 30-ը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում իրավարակման պահից:

### **ՆԱԽԱԳԱՀՈՂ**

### **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**21 դեկտեմբերի 2010 թվականի  
ՍԴԱ-930**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԽԱՆ  
ՎՐԱ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԲԻ 375.1-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ՝**

**Քաղ. Երեւան**

**28 դեկտեմբերի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով.Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի,  
Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող),  
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝  
ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի  
նախագահի խորհրդական Դ. Սելյոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ  
հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին»  
ՀՀ օրենքի 25 եւ 71-րդ հոդվածների,

դրնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 02.07.2010թ. սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթրերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. հունիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ մտել 1999թ. հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Արագացված կարգի կիրառման հիմքերը» վերտառությամբ 375.1-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջարրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը:

Սինչեւ դատարանությունն սկսելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում»:

2. Սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում ՍԴ/0130/01/10 /41105010/ քրեական գործն ըստ մեղադրանքի Մ. Ս. Ղուկասյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով:

16.06.2010թ. Սյունիքի մարզի դատախազության դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը՝ միաժամանակ առարկելով դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ: 22.06.2010թ. գործն ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան եւ նույն օրն ընդունվել է վարույթ:

Սինչեւ գործի դատաքննությունն սկսելն ամբաստանյալը, օգտվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով իրեն վերապահված իրավունքից, միջնորդել է դատական քննությունն անցկացնել արագացված կարգով:

Դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդ-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վածի 1-ին մասով նախատեսված կարգով մեղադրողին առաջարկել է փոխել իր դիրքորոշումը, սակայն վերջինս օգտվելով իր դատավարական իրավունքից՝ այն չի փոխել:

Դատարանը՝ գտնելով, որ իր կողմից կիրառման ենթակա դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը, 29.06.2010թ. որոշում է կայացրել ՀՀ սահմանադրական դատարան դիմելու եւ քրեական գործի վարույթը կասեցնելու մասին:

3. Դիմողի կողմից վիճարկվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ...», ինչպես նաև «Մինչեւ դատաքննությունն սկսելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, թե պետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում» դրույթները։ Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված կարգով առավելագույնից մեղմ պատիժ ակնկալելու, ինչպես նաև օրենքով նախատեսված դատական ծախսերից ազատվելու ամբաւանյալի դատավարական իրավունքի իրացումը կախվածության մեջ են դնում մրցակցող կողմի՝ դատախազի դրական դիրքորոշումից՝ խախտելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված՝ անձի իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի պահանջները։

Ըստ դիմողի՝ վիճարկվող իրավակարգավորումը խախտում է նաև դատարանի անկախության սկզբունքը, ինչպես նաև մեղադրողի համար կամայական խտրականության դրսեւրման նախադրյալներ է ստեղծում։

4. Պատասխանող գտնում է, որ վիճարկվող նորմերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը հետեւյալ պատճառաբանությամբ։ Դատավարության արագացված կամ ըստ էության պարզեցված կարգ կիրառելու նախապայմանն ամբաստանյալի կամ մեղադրյալի կողմից իրեն առաջադրված մեղադրանքի ընդունումն է, որը բնորոշ է «մեղքի ընդունման գործարքին» կամ մի շարք երկրների քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված «համաձայնեցման վարույթին»։ Յուրաքանչյուր դեպքում համաձայնությունը կայացվում է դատախազի եւ մեղադրյալի միջև։ Այդ ինստիտուտի էությունն այն է, որ մեղադրյալն ընդունում է իրեն առաջադրված մեղադրանքը, իսկ դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը համաձայնում է արագացված կարգով դատական քննություն անցկացնել։ Այս պարագայում դատարանի դերը սահմանափակ-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վում է բացառապես համաձայնությունը հաստատելով եւ դրա կայացման ընթացքում քրեական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան պահանջմերի պահպանումն ստուգելով։ Նման կարգավորումն ուղղակիորեն բխում է քրեական դատավարությունում մրցակցության սկզբունքից, որի համաձայն դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում։

Պատասխանողը գտնում է նաև, որ անհիմն են դիմողի փաստարկները ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի խախտման վերաբերյալ, քանզի վիճարկվող իրավակարգավորումն այդ հոդվածում ամրագրված իրավունքի հետ որեւէ առնչություն չունի։

Ինչ վերաբերում է դատական քննության արագացված կարգի կիրառման հարցում տուժողի կարծիքը հաշվի առնելուն, ապա պատասխանողը նշում է, որ այդ հարցին անդրադարձել է ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 2010թ. մարտի 26-ի որոշման մեջ, որում իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու հարցում տուժողի համաձայնությունը պարտադիր է։

Վիճարկվող դրույթների սահմանադրականության վերոհիշյալ հիմնավորման հետ միաժամանակ, պատասխանող կողմը միջնորդել է գործի վարույթը կարծել՝ նկատի ունենալով, որ դիմողն առավելապես բարձրացրել է «...իրավակարգավորման նպատակահարմարության հարց, իսկ վիճարկվող իրավադրությի սահմանադրականության խնդրին անդրադարձել է խիստ հպանցիկ»։

5. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ գործի վարույթը կարելու հիմքեր չկան՝ նկատի ունենալով, որ դիմողն առաջադրում է հետեւյալ սահմանադրախրավական խնդիրները։

- վիճարկվող նորմի սահմանադրականության տեսանկյունից իրավաչափի է, արդյոք, դատախազի առարկությունը դիտել որպես դատական քննության արագացված կարգ կիրառելը բացառող նախապայման,

- իրավաչափի է, արդյոք, դատարանի կողմից դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ ամրաստանյալի միջնորդության բավարարման հնարավորությունը պայմանավորել այդ կարգը կիրառելու առնչությամբ մեղադրողի առարկության բացակայությամբ։

Առաջադրված խնդիրներին վեճի առարկա իրավանորմերի սահմանադրականության տեսանկյունից ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատական քննության արագացված կարգի՝ որպես դատավարական ինստիտուտի բովանդակության, էռության ու առանձնահատկությունների, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում ամրագրված՝ դատախազության՝ դատարանում մեղադրանքի պաշտպանության գործառույթի

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

համատեքստում՝ հաշվի առնելով նաև դատավարական իրավահարաբերությունների ու գործողությունների հիմքում ընկած՝ դատավարության սուբյեկտների գործառույթների տարանջատման սկզբունքը:

6. Դատական քննության արագացված կարգը՝ որպես նոր դատավարական ինստիտուտ, Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրություն է ներմուծվել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» 21.02.2007թ. ՀՕ-93-Ն ՀՀ օրենքով: Այն, որպես նոր դատավարական ինստիտուտ, նպատակ ունի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում օրենսգրքով նախատեսված դեյտերում եւ կարգով քննությունն իրականացնել պարզեցված ընթացակարգերով:

Դատական քննության արագացված կարգի կիրառումը՝ որպես տարբերակված վարույթ, միջազգային պրակտիկայում արմատավորված դատավարական գործելաձեւ է: Արագացված դատաքննությունը նպատակ ունի լուծել կազմակերպահրավական որոշակի խնդիրներ, որոնցից են, մասնավորապես՝ ա/ դատավարական տնտեսումը, այսինքն՝ առանձին քրեական գործերով ժամանակի, միջոցների եւ ջանքերի կրծատումը՝ դրանք ավելի բարդ գործերի վարույթի համար օգտագործելու նպատակով, բ/ հանցագործության կատարման եւ պատժի նշանակման միջեւ ընկած ժամանակահատվածի կրծատումը, նպատակ ունենալով ուժեղացնել դատավարության եւ քրեական պատժի նախազգուշական ազդեցությունը, գ/ կողմերին հաշտեցնելը եւ այլն:

Արագացված դատական քննության ընթացքում մեղադրանքը պետք է ներկայացվի ամբողջովին, բանավոր եւ անմիջականորեն պետք է քննվեն գործով ձեռք բերված ապացույցները: Արագացված դատաքննության ընթացակարգը դատավարության մասնակիցներին տրամադրում է ոչ պակաս, իսկ երբեմն՝ նույնիսկ ավելի շահավետ երաշխիքներ նրանց իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության առումով, քան դատավարության ընդհանուր կարգը: Հարկ է ընդգծել, որ արագացված դատաքննության նպատակներից ելնելով, որեւէ կերպ չի կարելի հրաժարվել մրցակցային դատավարության այնպիսի հիմնարար սկզբունքներից, ինչպիսիք են կողմերի հավասարությունը եւ մեղադրյալի պաշտպանության իրավունքը:

Դատական քննության արագացված կարգի կիրառումը՝ որպես ողամիտ ժամկետում քրեական գործերի լուծման երաշխիք, իրախուսվում է նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի փաստաթղթերում /նաևնավորապես՝ «Քրեական արդարադատության պարզեցման վերաբերյալ» 17.09.1987թ. N6 R(87)18 հանձնարարականի 1, 7, 8 կետերը/: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն 2002թ. սեպտեմբերի 18-ին ընդունել է նաև «Արդարադատության արդյունավետության ապահովման

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

հարցերով եվրոպական հանձնաժողովի հիմնադրման մասին» 2002 (12) բանաձեւը, որում շեշտադրվում է դատական քննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու, դատական քննության ճգնաժողովներից խուսափելու եւ դատական ծախսերը կրճատելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը:

7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9.1-րդ բաժնի դրույթներով սահմանված՝ դատական քննության արագացված ընթացակարգի հիմնական հատկանիշներն են.

- դատական քննության արագացված կարգ կիրառելու համար բավարար չէ կողմերից միայն մեկի՝ ամբաստանյալի կամ մեղադրողի համաձայնությունը, պահանջվում է նաև այդ կարգը կիրառելու դեմ մյուս կողմի առարկության բացակայությունը, այսինքն՝ եթե դատախազը մեղադրական եզրակացությունում առարկել է արագացված կարգ կիրառելու դեմ, ապա այդ կարգն ամբաստանյալի միջնորդության պարագայում չի կարող կիրառվել, եւ, հակառակը, դատախազի առարկության բացակայության դեպքում դատական քննության արագացված կարգը չի կարող կիրառվել առանց ամբաստանյալի համապատասխան միջնորդության,

- դատախազը դատական քննության արագացված կարգի դեմ կարող է առարկել միայն մեղադրական եզրակացությունում: Վերջինում արագացված կարգի դեմ առարկության բացակայությունն օրենսդրի կողմից դիտարկվում է որպես արագացված կարգ կիրառելու վերաբերյալ լրելյան համաձայնություն,

- դատախազն արագացված կարգի կիրառման դեմ մեղադրական եզրակացությունում արտահայտած դիրքորոշումը կարող է փոխել դատարանի առաջարկությամբ, սակայն դատախազը կաշկանդված չէ այդ առաջարկությամբ,

- արագացված դատական քննության կարգ կարող է կիրառվել միայն այն հանցագործություններով, որոնց համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը,

- դատարանը պետք է համոզվի, որ ամբաստանյալը գիտակցում է իր ներկայացրած միջնորդության բնույթը եւ հետեւանքները, միջնորդությունը ներկայացված է կամավոր եւ պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո:

8. Արագացված կարգով դատական քննությունը քրեական դատավարության ձեւ է, որն օրենքով սահմանված կարգով միտված է գործն առավել սեղմ ժամկետում եւ պարզեցված կանոններով լուծելուն: Այս ինստիտուտի առանցքում «գործարքն» է քրեական դատավարության երկու կողմերի՝ մեղադրանքի եւ պաշտպանության կողմերի միջեւ, որի շրջանակներում մե-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դադրյալը համաձայնում է առաջադրված մեղադրանքին, ինչի դիմաց նրա համար երաշխավորվում է պատժի այնպիսի չափ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագրծության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագրծության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա առավել մեղմ պատիժ, ինչպես նաև ամբաստանյալն ազատվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 2-8-րդ կետերով նախատեսված դատական ծախսերից: Համաձայնելով արագացված դատաքննությանը՝ ամբաստանյալը նաև կանովին հրաժարվում է մի շարք սահմանադրաբարական երաշխիքներից, այն է՝ անմեղության կանխավարկածի սկզբունք, գործի հրապարակային քննության եւ այլ իրավունքներ: Մյուս կողմից՝ մեղադրողը հրաժարվում է մեղադրանքը պաշտպանելու իր գործառույթը լրիվ ծավալով իրականացնելուց՝ դրանով հնարավորություն ստանալով տնտեսել իր միջոցները, ինչպես նաև մեղադրյալին (ամբաստանյալին) խրախուսել համագործակցելու քրեական հետապնդման մարմինների հետ:

Դատական քննության արագացված կարգը հանդիսանում է քրեական դատավարությունում դիսպոզիտիվության դրսեւորում: Իր հերթին, քրեական դատավարությունում դիսպոզիտիվությունը հանդիսանում է իրավական ազատության, հավասարության, դատավարության կողմերի՝ իրենց նյութական եւ դատավարական իրավունքները տնօրինելու ազատության դրսեւորում: Դիսպոզիտիվության սուբյեկտները դատավարության կողմերն են՝ մեղադրանքի եւ պաշտպանության կողմերը: Մեղադրանքի կողմում որպես դիսպոզիտիվության լիիրավ սուբյեկտ հանդես է գալիս դատախազը, քանի որ նրան են պատկանում քրեական հետապնդման օրինականությունը երաշխավորելու լիազորությունները:

Արագացված կարգով դատական քննության բովանդակությունից ու էությունից բխում է, որ այս ինստիտուտի իրավակարգավորման շրջանակներում անհրաժեշտ է ապահովել հավասարակշռություն դատավարության կողմերի իրավունքների եւ օրինական շահերի միջեւ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ինդրո առարկա ինստիտուտի գործող իրավակարգավորումը՝ դատական քննության ընդհանուր կարգից բացառություն հանդիսացող արագացված կարգի կիրառումը միայն դատավարության երկու կողմերի միաժամանակյա համաձայնության պայմաններում է ապահովում իրավաչափ հավասարակշռություն մեղադրանքի եւ պաշտպանության կողմերի իրավունքների եւ օրինական շահերի միջեւ: Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ արագացված կարգ կիրառելու դեմ դատախավության /մեղադրող կողմի/ առարկությունը չի կարող դիտվել որպես «բացարձակ վետոյի» իրավունք, այդ առարկությունը պետք է լինի փաստարկված:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

9. ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում ամրագրված է դատախազի՝ մեղադրանքի պաշտպանության գործառույթը: Այս գործառույթի շրջանակներում դատախազն իր հայեցողությամբ տնօրինում է ինչպես մեղադրանքի, այնպես էլ մեղադրանքի պաշտպանության ծավալները: Դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ դատախազի փաստարկված առարկությունը նշանակում է, որ դատախազը տվյալ գործով նախընտրում է մեղադրանքի պաշտպանության սահմանադրական իր լիազորությունն իրականացնել ողջ ծավալով:

Մրցակցային դատավարությունում մեղադրանքի, պաշտպանության եւ գործի լուծման գործառույթների տարանջատման պայմաններում դատարանը՝ որպես գործի լուծման գործառույթը կրող սուբյեկտ, գործը քննում է ըստ ներկայացված մեղադրանքի եւ իրավասու չէ դուրս գալու մեղադրանքի շրջանակներից:

Ինչպես մեղադրանքի, այնպես էլ դրա պաշտպանության ծավալների վերաբերյալ մեղադրողի՝ որպես պետության անունից քրեական հետապնդում իրականացնող դատավարական սուբյեկտի դիրքորոշումը պետականական ակտ է, որը պարտադիր է դատավարության մյուս սուբյեկտների համար: Այդ պարտադիրությունը դրսեւորված է, մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 4-րդ մասում, որի համաձայն՝ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը պարտավոր է կայացնել արդարացման դատավճիռ:

10. Քրեական գործերով մրցակցային դատաքննության իրավունքը նշանակում է, որ ե՞ւ մեղադրանքի կողմին, ե՞ւ պաշտպանության կողմին պետք է տրվի հնարավորություն ծանոթանալու միմյանց ներկայացրած փաստարկներին եւ ներկայացնելու իրենց դիտողությունները միմյանց փաստարկների վերաբերյալ (տե՛ս, Ուովը եւ Դեվիսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 2000թ. փետրվարի 16-ի վճիռը, *Rowe and Davis v. the United Kingdom*): Մրցակցային դատավարությունում դատարանը չի կարող ստանձնել ո՞չ մեղադրանքի, ո՞չ պաշտպանության գործառույթ: Դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում:

Ելնելով մրցակցության սկզբունքի նշանակությունից՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու հարցի լուծման առնչությամբ մրցակցության սկզբունքի իրացումն արդեն իսկ ապահովվում է՝ մեղադրանքի եւ պաշտպանության կողմերին հնարավորություն տալով արտահայտելու իրենց տեսակետներն արագացված կարգով դատական քննության կազմակերպման հարցի վերաբերյալ: Ավելին, այն դեպքում, եթե արագացված կարգով դատական քննության կազմակերպման հարցում դատարանին իրավասություն վերապահվի կիրառել արագացված դատական քննությունը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թյան կարգ՝ որպես ընդիհանուր կարգից բացառություն, առանց կողմերից մեկի համաձայնության, տվյալ դեպքում՝ առանց մեղադրանքի կողմի համաձայնության, դրանով ոչ միայն կիսաթարվեն արագացված կարգով դատական քննության ինստիտուտի ողջ էությունն ու բովանդակությունը, այլ նաև տվյալ հարցի լուծման շրջանակներում դատարանն ըստ էության հանդես կգա պաշտպանության կողմում՝ ի խախտումն մրցակցության սկզբունքի:

Հաշվի առնելով մրցակցային դատավարության այն հիմնական հատկանիշներից մեկը, ըստ որի՝ մրցակցային դատավարության պայմաններում կողմերն են տնօրինում իրենց դատավարական լիազորությունների ծավալը, սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական քննության արագացված կարգի կիրառումը երկու կողմերի փոխադարձ համաձայնությամբ պայմանավորելը ոչ միայն չի խախտում մրցակցության սկզբունքը, այլև նման մոտեցումն արդարացված է հենց մրցակցային դատավարության տեսանկյունից:

Մրցակցային դատավարության կարեւոր բաղադրատարրերից է նաև դատավարության կողմերի հավասարությունը: Կողմերի հավասարությունը, ըստ Եվրոպական դատարանի մեկնաբանության, նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմի պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ՝ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ (տե՛ս, ի թիվս այլնի, Դոմբո Բեհերն ընդդեմ Նիդեռլանդների գործով 1993թ. սեպտեմբերի 22-ի վճիռը, Dombo Beheer v. Netherlands): Հաշվի առնելով կողմերի դատավարական հավասարության նշված բովանդակությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկող իրավակարգավորումը, բույլ չտալով դատական քննության արագացված կարգի կիրառումն այդ հարցում դատավարության կողմերից մեկի, տվյալ դեպքում՝ մեղադրողի, համաձայնության բացակայության դեպքում, դրանով իսկ ապահովում է կողմերի հավասարությունը:

11. Վիճարկող իրավակարգավորման՝ դատարանի անկախության սկզբունքի հետ առնչակցության խնդիրը սահմանադրական դատարանը հարկ է համարում դիտարկել նաև մրցակցային դատավարությունում դատավարական իրավահարաբերությունների ու գործողությունների հիմքում ընկած՝ մեղադրանքի, պաշտպանության և գործի լուծման գործառույթների տարանջատման սկզբունքի, ինչպես նաև դատավորի անկախության բովանդակության լույսի ներքո:

Զրեական դատավարությունում դատարանին պատկանում է գործի լուծման գործառույթը, որի շրջանակներում էլ իրացվում է դատավորի անկախության սկզբունքը: Դատարանի անկախության սկզբունքը չի կարող

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դրսեւորվել դատավարության կողմերի՝ մեղադրանքի կամ պաշտպանության կողմի գործառույթի տիրույթում: Դատական քննության արագացված կարգի՝ որպես տարբերակված դատավարական ձեւի ինստիտուտի բովանդակությունից բխում է, որ նման կարգի կիրառման շուրջ համաձայնության կայացումը մեղադրանքի եւ պաշտպանության գործառույթների շրջանակում է, հետեւարար, դատարանը կաշկանդված է այդ կարգը կիրառելու դեմ կողմերից յուրաքանչյուրի առարկությամբ:

Դատարանի դատավարական անկախությունը դատավորի անկողմանակալ եւ օրյեկտիվ վերաբերմունքն է կողմերի նկատմամբ, ինչպես նաև նրա կողմից ապացույցների անկողմնակալ եւ օրյեկտիվ գնահատականը՝ ելնելով միայն իր ներքին համոզմունքից: Դատական քննության արագացված կարգ կիրառելու հարցի լուծման, ամբաստանյալի միջնորդության առնչությամբ որոշում կայացնելու գործընթացում դատարանի դատավարական անկախությունը դրսեւորվում է նման կարգ կիրառելու վերաբերյալ դատավարության երկու կողմերի փոխադարձ համաձայնության պայմաններում դատական քննության արագացված կարգ կիրառելու՝ **օրենքով նախատեսված պայմանների առկայությունը գնահատելիս:** Այսինքն՝ դատարանն ամբաստանյալի միջնորդության քննարկմանը ձեռնամուխ է լինում միայն դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ դատավարության կողմերի փոխադարձ համաձայնության դեպքում եւ անկախության սկզբունքի հիման վրա լուծում է ամբաստանյալի միջնորդությունը բավարարելու հարցը՝ պարզելով դատական քննության արագացված կարգ կիրառելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածով նախատեսված պայմանների առկայությունը:

Ինչ վերաբերում է դիմողի այն փաստարկին, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու հնարավորությունը դատախազի կամքից կախվածության մեջ դնելը խախտում է անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, ապա սահմանադրական դատարանը նման փաստարկն անհիմն է համարում, քանի որ նման կարգ կիրառելու դեմ դատախազի առարկության դեպքում դատական քննությունն իրականացվում է ընդհանուր կարգով: Ի տարբերություն արագացված դատարներության, ընդհանուր կարգով իրականացվող դատական քննության ընթացքում իրենց ողջ ծավալով գործում են ինչպես ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով, այնպես էլ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր դատավարական երաշխիքները:

Ելնելով դատական քննության արագացված կարգի՝ որպես դատավարական ինստիտուտի վերոհիշյալ բովանդակությունից ու էությունից, մրցակցային դատավարության հիմնական հատկանիշներից, ինչպես նա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ես հաշվի առնելով դատավարական սուբյեկտների գործառույթների տարանջատման սկզբունքը՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոնշյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում դատական քննության արագացված կարգի կիրառման հնարավորությունը մեղադրանքի եւ պաշտպանության կողմերի փոխադարձ համաձայնության առկայությամբ պայմանավորելն իրավաչափ է, բխում է խնդրո առարկա ինստիտուտի բովանդակությունից ու եռությունից եւ համահունչ է մրցակցային դատավարության պահանջներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ...», ինչպես նաև «Սինչեւ դատաքննությունն սկսելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում» դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ սույն որոշման մեջ ներկայացված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրավարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 դեկտեմբերի 2010 թվականի  
**ՍՊ-931**



## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

### ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԵՐՎԱԾ ԵՐԿՐՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆԴԻՐՆԵՐԻՆ

Ապրիլի 13-ին ՀՀ սահմանադրական դատարանում գումարվեց «ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների իրավական հեղեղությունը» թեմայով գիտաժողով, որի նպատակն էր համակողմանի քննարկման առարկա դարձնել երկրում սահմանադրական զարգացումների արդի հիմնախնդիրները՝ հաշվի առնելով դրանց վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները:

Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ սահմանադրական դատարանը և «Հարավային Կովկասում իրավական և դատական բարեփոխումների համար խորհրդատվություն» գերմանական ծրագրի հայաստանյան գրասենյակը (ԳՄՀՀ):

Սա գերմանացի մասնագետների հետ վերջին տարիներին անցկացվող 8-րդ գիտաժողովն էր, որի բացումը կատարեց ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը՝ իր ողջույնի խոսքում կարեւորելով գիտաժողովում քննարկվելիք թեմայի արդիական լինելը, շեշտելով, որ այս տարողունակ թեմայի քննարկումը կշարունակվի նաև աշնանը՝ հոկտեմբերի 6-8-ը հրավիրվելիք Երեւանյան 16-րդ միջազգային խորհրդաժողովում՝ աշխարհի տարբեր երկրներից հրավիրված պատվիրակների լայն մասնակցությամբ:

Ողջույնի խոսքով առաջինը հանդես եկավ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը: Նա կարեւորեց քննարկման դրված թեման, շեշտելով, որ Եվրոպատարանի վճիռների եւ ՍԴ որոշումների կատարումը որոշ առումով գտնվում է նույն հարթության վրա, եւ արդարադատությունը պետք է իրականացվի նաև այդ վճիռների կատարման փուլում: Նա լուրջ եւ արդյունավետ երկխոսություն ու քննարկումներ ակնկալեց:

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի ղեկավարի տեղակալ Կարել Հոփստրան շնորհակալություն հայտնեց՝ կարեւոր քննարկումը սահմանադրական դատարանում կազմակերպելու համար՝ վատահեցնելով, որ այս միջոցառումը համագործակցության մի նոր, արդյունավետ դրսեւորում է:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Հայաստանում «Հարավային Կովկասում իրավական եւ դատական բարեփոխումների համար խորհրդատվություն» գերմանական ծրագրի ղեկավար Վ. Պողոսյանը, ով գիտապրակտիկ իմաստով խիստ կարեւոր համարեց ներկա գիտաժողովի հրավիրումը, որտեղ կքննարկվեն սահմանադրական դատարանի որոշումների իրավական հետեւանքները, եւ որի համար անհրաժեշտ է խորությամբ ըմբռնել ՍԴ որոշումների իրավական բնույթը:

Գիտաժողովում ՍԴ նախագահ Գ. Հարությունյանը հանդես եկավ «**Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրավագիրական դերն ու նշանակությունը**» թեմայով ղեկուցումով:

Այնուհետեւ «Սահմանադրական դատարանի որոշումների դերն օրյեկտիվ եւ սուբյեկտիվ իրավական պաշտպանության գործում եւ որպես իրավունքի աղբյուր» թեմայով գերմանական փորձի ընդհանրացմանը ու համեմատական խոր վերլուծությամբ իր ղեկուցումը ներկայացրեց Համբուրգի համալսարանի պրոֆեսոր, միջազգային մեծ ճանաչում ունեցող սահմանադրագետ Օքքո Լուիթերհանդթը:

Հարակից ղեկուցով հանդես եկավ սահմանադրագետ Վարդան Պողոսյանը:

Զեկումների շուրջ ծավալվեց հետաքրքիր ու լայն քննարկում՝ անդրադարձ կատարելով ոչ միայն միջազգային փորձին, այլև մեզանում առկա հիմնախնդիրների կոնկրետ լուծումներին՝ թե՛ օրենսդրական քաղաքականության մակարդակում եւ թե՛ իրավակիրառական պրակտիկայում:

Գիտաժողովին մասնակցում էին ՀՀ սահմանադրական դատարանի եւ ՀՀ վճռաբեկ դատարանի անդամներ ու աշխատակիցներ, ՀՀ ԱԺ պատգամավորներ, ՀՀ արդարադատության նախարար Հր. Թովմասյանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Ա. Ակոսովիյանը, ՀՀ իրավաբանների միության նախագահ Գ. Ղազինյանը, դատարանների նախագահներ, ՀՀ դատախազության աշխատակիցներ, փաստաբաններ, իրավաբան գիտնականներ:



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՀՀ ՍԴ-ՈՒՄ

Ապրիլի 20-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարույրյունյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Թենգիզ Շարմանաշվիլուն:

Այցը ճանաչողական էր, եւ Գ. Հարույրյունյանը՝ հյուրին շնորհավորելով նոր պաշտոնում նշանակվելու առիթով, ծանոթացրեց ՍԴ գործունեությանը, միջազգային կապերին, որոնցում նկատելի տեղ ունեն հայ-վրացական, ի մասնավորի՝ Վրաստանի սահմանադրական դատարանի հետ պահպանվող բարձր մակարդակի հարաբերությունները: Վրացի գործընկերների հետ կազմակերպվել են համատեղ խորհրդաժողովներ, կատարվել են փոխադարձ այցելություններ:

Երկուստեք բարձր գնահատեցին դրացի ժողովուրդների բարեկամությունը՝ պատրաստակամություն հայտնելով փոխազդակցությամբ նպաստել հարաբերությունների էլավելի բարելավմանը:

Հանդիպմանը մասնակցում էր ՍԴ աշխատակազմի ղեկավար Ա. Հակոբյանը:



## ՍԵՐԲԻԱՅԻ ՍԴ ՊԱՏՎԻՐՎԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ

ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարույրյունյանի հրավերով 2011թ. ապրիլի 26-ին պաշտոնական այցով Երեւան ժամանեց Սերբիայի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ **Դրագիշա Սլիբչեկիչի** գլխավորած պատվիրակությունը:

Այս երկու դատարանների համագործակցությունը երկար տարիների պատմություն ունի՝ սերք գործընկերները մասնակցել են ՀՀ սահմանադրական դատարանի կազմակերպած Երեւանյան ամենամյա միջազգային խորհրդաժողովներին, ապրիլերաբար կայացել են տեղեկատվությունների ու փորձի փոխանակումներ, իսկ 2010 թվականի հուլիսին Սերբիայի սահմանադրական դատարանի նախագահի հրավերով պաշտոնական այցով Բելգրադ էր մեկնել ՀՀ ՍԴ նախագահ Գ. Հարույրյունյանի գլխավորած պատվիրակությունը:

## ՏԵՂԵԿԱԾՎՈՒԹՅՈՒՆ

Եվ ահա՝ փոխադարձ պաշտոնական այցելությունը:

Ապրիլի 26-ին Սերբիայի ՍԴ պատվիրակությունը, կազմով՝ ՍԴ նախագահ Դրագիչա Սլիբչենիչի, դատավորներ Բոսսա Նենատիչի, Օլիվերա Վուշիչի, Ազմեշ Քարքագ-օղջիի, Սիլան Մարկովիչի եւ պատվիրակության քարտուղար Լյուբիցա Պավլովիչի, հյուրընկալվեց ՀՀ սահմանադրական դատարանում։ Պարոն Հարությունյանը ՀՀ ՍԴ անդամներին եւ աշխատակազմին ծանոթացրեց հյուրերին, շեշտեց, որ այս փոխադարձ այցելությամբ ամրապնդվում եւ շարունակական է դառնում քարեկամական եւ արդյունավետ համագործակցությունը։ «Գործի բերումով, - ավելացրեց ՀՀ ՍԴ նախագահը, - մենք միենանույն խնդրի լուծմանն ենք կոչված։ Ես համոզված եմ, որ այս համագործակցությունը միայն երկողմ բնույթ չի կրում, այլ նաև ընդհանուր միջազգային համագործակցության շրջանակներում է կարեւորվում»։ Ապա համառոտ ներկայացրեց ՀՀ ՍԴ գործունեությունը՝ հանգամանորեն անդրադառնալով հատկապես քաղաքացիներից ստացված դիմումներով քննության առնված գործերին ու կայացված որոշումներին, ինչպես նաև մեզանում առկա հիմնախնդիրներին։

Իր հերթին Սերբիայի ՍԴ նախագահը ներկայացրեց իրենց



## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

դատարանի գործունեությունը, զուգահեռներ անցկացրեց երկու դատարանների գործառույթների միջև, կարեւորեց երկու դատարանների բարեկամական հարաբերությունները. «Անցյալ դարի Հայաստանի սահմանադրական դատարանի պատվիրակության ընդունումը մեր կողմից, - ասաց նա, - եւ մեր այս այցելությունը վկայում էն, որ մեր երկու երկրների սահմանադրական դատարանների համագործակցությունն ամուր հիմքերի վրա է»:

Հանդիպումը շարունակվեց երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի ակտիվ քննարկումով, հարցուպատասխաններով:

Ապրիլի 26-ին Սերբիայի սահմանադրական դատարանի պատվիրակությունն այցելեց Մեսրոպ Մաշտոցի անվան հիմնադրամի ինստիտուտ:

Ապրիլի 27-ին Սերբիայի Հանրապետության սահմանադրական դատարանի պատվիրակությունն այցելեց Ծիծեռնակարերդի հուշահամալիր: Սերբ դատավորները ծաղիկներ դրեցին անմար կրակի մոտ եւ հարգանքի տուրք մատուցեցին Հայոց ցեղասպանության անմեղ նահատակների հիշատակին: Այնուհետեւ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում ծանոթացան ցեղասպանության վավերագիր՝ թանգարանի ցուցադրությանը: Պատվիրակության ղեկավար Դրագիչա Սլիեպչելիչը գրառում կատարեց թանգարանի հուշամատյանում:



Հյուրերն այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, հետաքրքրությամբ դիտեցին Մայրավանքի թանգարանի ցուցանմուշները: Այնուհետեւ Սերբիայի սահմանադրական դատարանի պատվիրակության անդամներն

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ակնածանքով մոտեցան 1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո աղետյալ բնակչության օգնության շտապող եւ ավիափարից զոհված իրենց հայրենակից օդաչուների հուշարձանին:

Այցելության հաջորդ վայրը «Զվարքնոց» հուշահամալիրն էր: 7-րդ դարում կառուցված եւ 10-րդ դարում երկրաշարժի հետևանքով ավերված միջնադարյան հայ ճարտարապետության երբեմնի շրեղ այդ սրանցելի կորողը մեծ տպավորություն թողեց սերբ հյուրերի վրա:



Ապրիլի 28-ին Սերբիայի Հանրապետության սահմանադրական դատարանի պատվիրակությունը հյուրընկալվեց ՀՀ Ազգային ժողովում: ՀՀ Ազգային ժողովին նախագահ Հովհաննես Սարգսյանի հետ կայացած զրոյցը վերաբերում էր երկու երկրների սահմանադրական դատարանների եւ, ընդհանրապես, հայ-սերբական բարեկամական հարաբերություններին:

Հյուրերի համար նախատեսված մշակութային միջոցառումը եզրափակվեց Սերգեյ Փարաջանովի թանգարան այցելությամբ:



ՀՀ սահմանադրական դատարանի իրավերով եռօրյա պաշտոնական այցով Երեւանում գտնվող Մերքիայի Հանրապետության սահմանադրական դատարանի պատվիրակությունը Ապրիլի 29-ին վերադարձավ հայրենիք:

### **ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ**

2011թ. նայիսի 10-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստանում ԱՄՆ-ի արտակարգ եւ լիազոր դեսպան Մարի Յովանովիչին:

Զրույցն ընթացավ Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական համակարգի բարեփոխումներին, օրենսդրության կատարելագործմանը, իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորմանը, սահմանադրական դատարանի որոշումների իրավական հետեւանքներին առնչվող հարցերի շուրջ:

Դեսպանը հատկապես կարեւորեց քաղաքացիների դիմումների հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի ընդունած որոշումների դերը մեր երկրի սահմանադրաիրավական զարգացումների գործում:

Հանդիպմանը մասնակցում էր ԱՄՆ դեսպանատան իրավական խորհրդատու Սթիվեն Քեսալերը:



## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՔ ՌՈՒՄԵՆԻԱՅՈՒՄ

2011թ. մայիսի 23-26-ը Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում տեղի ունեցավ Եվրոպական սահմանադրական դատարանների կոնֆերանսի 15-րդ Կոնգրեսը: Կոնգրեսում սահմանադրական դատարանների նախագահների առանձին քննարկմանը ներկայացվող օրակարգային հարցերից զատ տեղի ունեցան առանձին թեմատիկ քննարկումներ՝ սահմանադրական դատարանների եւ պետական իշխանության այլ մարմինների գործակցական փոխհարաբերությունների շուրջ: Այս թեմայով Եվրոպական բոլոր երկրների սահմանադրական դատարանները նախապես Կոնգրեսին էին ներկայացրել իրենց ազգային զեկույցները. այդ թեմայի շուրջ զեկուցումով հանդես եկավ նաև ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը:



Պարոն Հարությունյանը աշխատանքային հանդիպումներ ունեցավ Գերմանիայի, Պորտուգալիայի, Խորվաթիայի, Բուլղարիայի, Լիտվայի, Լատվիայի, Հունգարիայի, Վրաստանի, Ռումանիայի եւ Սերբիայի սահմանադրական դատարանների նախագահների, ինչպես նաև Բուլղարիայի, Ռումինիայի, Չեխիայի, Լեհաստանի սահմանադրական դատարանների պատվիրակների հետ:

### ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԼՈՐ ՄԵՂԱՆ

Մայիսի 27-ին ՀՀ սահմանադրական դատարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների կարգարման ընթացքը Հայաստանում» թեմայով փորձագիտական կլոր սեղան: Այն կազմակերպել էին ՀՀ փաստարանների պալատը եւ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակը՝ համագործակցությամբ Եվրոպայի Խորհրդի եւ ՀՀ սահմանադրական դատարանի: Ողջույնի խոսքով առաջինը հանդես եկավ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարությունյանը: Նա կարեւորեց քննարկման դրված թեման, շեշտելով, որ Եվրոպատարանի վճիռների եւ ՍԴ որոշումների կատարումը որոշ առումով գտնվում է նույն հարթության վրա, եւ արդարադատությունը պետք է իրականացվի նաև այդ վճիռների կատարման փուլում: Նա լուրջ եւ արդյունավետ երկխոսություն ու քննարկումներ ակնկալեց:

ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի ղեկավարի տեղակալ Կարել Հոֆստրան շնորհակալություն հայտնեց՝ կարեւոր քննարկումը սահմանադրական դատարանում կազմակերպելու համար՝ հույս հայտնելով, որ այս միջոցառումը համագործակցության մի նոր արդյունավետ դրսեւորում է:

Ողջույնի խոսրով հանդես եկան նաև Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Միլվիա Զեհեն, ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Ռուբեն Սահակյանը, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատավոր Ալվինա Գյուլումյանը:

Կլոր սեղանին ներկայացված էր ԵԱՀԿ-ի աջակցությամբ իրատարակված «Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների կադրաման գործընթացը. Հայաստանում դրանց կադրաման խնդիրներն ու առանձնահատկությունները» գիրքը, որում ընդգրկված են ՄԻԵԴ-ի կողմից Հայաստանի վերաբերյալ կայացված վճիռները՝ սկսած առաջին վճռից մինչեւ 2010թ. դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածը:

Հայաստանի կողմից ՄԻԵԴ վճիռների կատարման վերաբերյալ հետազոտության շրջանակի ու եզրակացությունների վերաբերյալ հանդես եկալ փորձագետ Արա Ղազարյանը:

Փորձագետ Արտակ Զեյնալյանի գեկուցման թեման էր՝ «Դատական ակտերի վերանայման ինստիտուտը Հայաստանում. ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկություններ»:

«Հայաստանի կողմից ՄԻԵԴ որոշումների կատարման գործընթացը» թեմայով գեկուցումով հանդես եկավ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազ, ՄԻԵԴ-ում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Գետրդ Կոստանյանը:

ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի գեկուցումը նվիրված էր «Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի արդյունավետությունը ՀՀ-ում» թեմային:

ՄԻԵԴ-ի որոշումների կատարմանն ու դատարանի պրակտիկային անդրադարձավ ՄԻԵԴ դատավոր Ալվինա Գյուլումյանը:

«Եվրոպական դատարանի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողությունը նախարարների կոմիտեի կողմից. հայացք ներսից» թեմայով գեկուցում ներկայացրեց Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների եւ իրավական հարցերի գլխավոր տնօրինության աշխատակից Շառլոտ Դը Բրուտելը:

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հընթացս քննարկումների, հարց ու պատասխանների միջոցով մանրամասնություններ էին ներկայացվում զեկուցումներում արծարծված խնդիրների շուրջ:

Կլոր սեղանին մասնակցում էին ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը, ՀՀ դատավորների միության նախագահ Գագիկ Ղազինյանը, ՀՀ ՍԴ անդամներ, ՀՀ պետական կառույցների ներկայացուցիչներ, իրավաբաններ, պաշտոնատար այլ անձինք:



## ԶԻՆԱՏԱՎԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՀՀ ՍԴ-ՈՒՄ

Հունիսի 16-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստանում Զինաստանի ժողովրդական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Տյան Չանչունին:

Պարոն դեսպանը ՀՀ ՍԴ նախագահին փոխանցեց Զինաստանի Հանրապետության ժողովրդական ներկայացուցիչների համաշխանական ժողովի իրավաբանական հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի պատվիրակությանը այս տարվա սեպտեմբեր ամսին Զինաստան այցելելու պաշտոնական իրավերը:



Հրավերը շնորհակալությամբ ընդունվեց: Պայմանավորվեցին, որ դեսպանատան միջոցով հոկտեմբերին Հայաստանում իրավիրվելիք միջազգային XVI Խորհրդաժողովին մասնակցելու իրավեր կուղարկվի չփական կողմին:

Քննարկվեցին նաև երկկողմ հարաբերություններին առնչվող հարցեր:

## ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

Վրաստանի սահմանադրական դատարանի հրավերով ՀՀ սահմանադրական դատարանի պատվիրակությունը՝ ՀՀ ՍԴ նախագահ Գ. Հարությունյան, ՍԴ անդամ Կիմ Բալայան, հունիսի 23-ին մեկնեց Բաքումի՝ մասնակցելու Վրաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ստեղծման 15-ամյակին նվիրված միջազգային հոբելյանական խորհրդաժողովին: Նախատեսված է Գ. Հարությունյանի՝ «Սահմանադրական վերահսկողության համակարգային զարգացմանն ուղղված մարդարավերները» թեմայով զեկուցումը խորհրդաժողովում: (Զեկույցի տերսող տեղադրված է ՀՀ սահմանադրական դատարանի վեր կայրում):

Հոբելյանական միջոցառումների շրջանակներում մեր պատվիրակությունը ունեցավ մի շարք պաշտոնական հանդիպումներ:

**ՍԴ մամուլի ժառայություն**

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կողմանայի թիվ 37/2-14 որոշմանը

Խմբագրության հասցեն՝  
Երևան Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 58-81-71  
E-mail: armlaw@concourt.am.  
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 06.07.2011 թ.  
Դասիչ՝ 77754  
Գրաշափը՝ 70x100 1/16  
Տպաքանակը՝ 500

*ՀՀ ՍԴ լրեղեկագիրը ՀՀ  
բարձրագույն որակավորման  
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է  
այդենախոսությունների արդյունքների  
լուսագրման համար ընդունելի  
պարբերականություն ցանկում*

---

Вестник Конституционного Суда Республики Армения N 3(60) 2011  
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 3(60) 2011  
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Armenie. N 3(60) 2011